

1741




ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԻ ԳԱՅԼ ՎԱՀԱՆ, ԵՐԵՎԱՆ
ՔՈՅԼ, ՀԵՏ

3K23

Մ - 67



Թիվ Օր. Տր. № 9
Պահանջման
Համար
ՀԱՀ. ԽԱԴ. ԽԱ. ՀԱ

Հարմ.
3-30392
ԳՐԱԿԵՑՄԱՆ ՎԱՂՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅՆ
3K23
Մ-67

27 MAY 2005

03 NOV 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՄԻ ՔԱՅԼ ԱՌԱՋ,
ՅԵՐԿՈՒԻ ՔԱՅԼ ՀԵՏ

ԿՐԻԶԻՍԸ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵջ



Արք. № 10537

ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱ. ՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

11 SEP 2013

1741

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ


«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» գիրքն առաջին անգամ
տպագրվել էր 1904 թվականի մայիսին արտասահմանում։ Նա
նվիրված է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական
կուսակցության II համագումարին։

Գրքի յերկրորդ հրատարակությունը լույս է տեսել Ռու-
սաստանում 1908 թվականին։ Այդ հրատարակության համար
հեղինակը տեքստն զգալիորեն կրճատել է ի հաշիվ ՌՍԴԲԿ II
համագումարում տեղի ունեցած կազմակերպական պայքարի
մասը, նշանակությունը կորցրած մանրամասնությունների։

Մենք «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ»-ը տպագրում ենք
ըստ 1908 թվականի հրատարակության, փորը բաղդատված է
յերկերի VI հատորի հետ։



5283-87



В. И. ЛЕНИН

ШАГ ВПЕРЕД, ДВА ШАГА НАЗАД

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Յերբ տեղի ունի տեսական, համառ, տաք պայքար, ազա վորոշ ժամանակ անցնելուց հետո սովորաբար սկսում են ուրվագծվել այն կենաբոնական, հիմնական վիճելի կետերը, վորոնց լուծումից ե կախված կամպանիայի վերջնական յելքը և վորոնց համեմատությամբ ավելի ու ավելի յեն հետին պլան մղվում պայքարի բոլոր և ամեն տեսակ փոքր և մանր-մունք եղիզող-ները:

Բանն այսպես է նաև մեր ներկուսակցական պայքարի վերաբերմամբ, վոր ահա կես տարի յե արդեն իր վրա յե բնեսել կուսակցության բոլոր անդամների ուշագրությունը: Յեզ հենց այն պատճառով, վոր ինձ վիճակվեց ամբողջ պայքարի՝ ընթերցողին առաջարկվող այս ուրվագծում չոչափել բազմաթիվ մանր հանդամանքներ, վորոնք չնչին հետաքրքրություն ունեն, բազմաթիվ դատարկ վեճեր, վորոնք եյալես վոչ մի հետաքրքրություն չունեն, — հենց այդ իսկ պատճառով յես կցանկանայի սկզբից ևեթ ընթերցողի ուշագրությունը դարձնել յերկու իրոք կենաբոնական, հիմնական կետի վրա, վորոնք ահազին հետաքրքրություն են ներկայացնում, վորոնք անտարակուսելի պատճական նշանակություն ունեն և մեր կուսակցության մեջ որակարգի ամենակենական քաղաքական խնդիրներն են:

Առաջին այդպիսի հարցը—մեր կուսակցության՝ «մեծամասնության» ու «փոքրամասնության» բաժանվելու քաղաքական նշանակության հարցն ե, մի բաժանում, վոր տեղի ունեցավ կուսակցության յերկրորդ հստագումարում և սաստիկ հետ մղեց ուսւ սոցիալ-գենոկրատների նախկին բոլոր բաժանումները:

Յերկրորդ հարցը կազմակերպական հարցերի նկատմամբ

նոր «Ասկրա»-յի¹ բոնած դիրքի սկզբունքային նշանակության հարցն ե, վորչափով այդ դիրքն իրոք սկզբունքային ե:

Առաջին հարցը մեր կուսակցական պայքարի յելակետի, նրա պատճառների, նրա հիմնական քաղաքական բնույթի հարցն ե: Յերկրորդ հարցն այդ պայքարի վերջնական արդյունքների, նրա վերջավորության հարցն ե, այն սկզբունքային հանրագումարի, վոր ստացվում ե սկզբունքների բնագավառին վերաբերող բոլոր բաները գումարելուց և դատարկ վեճերին վերաբերող բոլոր բաները հանելուց: Առաջին հարցը լուծվում ե կուսակցական համագումարում տեղի ունեցած պայքարի վերլուծությամբ, յերկրորդը՝ նոր «Ասկրա»-յի սկզբունքային նոր բովանդակության վերլուծությամբ: Թե՛ մեկ և թե՛ մյուս վերլուծությունը, վոր իմ բրոշյուրի իննը տասերորդական մասի բովանդակությունն ե կազմում, բերում ե այն յեղակացության, վոր «մեծամասնությունը» մեր կուսակցության հեղափոխական թեն ե, իսկ «փոքրամասնությունը»—ովորտունիստականը. այս ե այն թեր ներկայումս բաժանող տարածայնությունները հանդում են, գլխավորապես, վո՛չ թե ծրագրային և վո՛չ ել տակտիկական, այլ սոսկ կազմակերպական հարցերի. հայացքների այն նոր սիստեմը, վոր նոր «Ասկրա»-յի մեջ այնքան ավելի պարզ և դրաւրվում, վորքան ավելի յե աշխատում նա խորացնել իր դիրքը և վորքան ավելի յե մաքրվում այդ դիրքը կոռապտացիայի պատճառով առաջացած դատարկ վեճերից,—ովորտունիզմ և կազմակերպական հարցերում:

Մեր կուսակցական կրիպտին վերաբերող առկա դրականության գլխավոր թերությունն այն ե, վոր փաստերի ուսումնասիրության ու լուսաբանության բնագավառում գրեթե միանգամայն բացակայում ե կուսակցական համագումարի արձանագրությունների վերլուծությունը, իսկ կազմակերպական հարցի հիմնական սկզբունքների պարզաբանման բնագավառում բացակայում ե այն կապակցության վերլուծությունը, վոր տնտարակույթը գոյություն ունի ընկ. Մարտովի և ընկ. Ակսելրոդի՝ կանոնադրության առաջին պարագագաֆի ձևակերպման և այդ ձևակերպման պարագագան ամբողջից, և կազմակերպական հարցին վերաբերաց՝ «Ասկրա»-յի այժմյան սկզբունքային հայացքների ամբողջ «սիստեմի»

միջև (վորչափով այստեղ խոսք կարող ե լինել սիստեմի մասին): «Ասկրա»-յի այժմյան խմբագրությունն, ըստ յերեսութին, նույնիսկ չի նկատում այդ կապակցությունը, թեև առաջին պարագագաֆի շուրջը մզվող վեճերի նշանակությունն արդեն շատ ու շատ անդամ ե նշվել «մեծամասնության» գրականության մեջ: Բայց ելության, ընկ. Ակսելրոդն ու ընկ. Մարտովի այժմ միայն խորացնում, զարգացնում ու լայնացնում են իրենց սկզբնական սխալն առաջին պարագագաֆի առթիվ: Եյապես, արդեն առաջին պարագագաֆի վերաբերյալ վեճերում սկսեց ուրվագծվել ուղղորդունիստների ամբողջ դիրքը կազմակերպական հարցում— թե՛ նրանց պաշտպանությունը ճապաղ, ամուր չհամախմբված կուսակցական կազմակերպության, թե՛ նրանց թշնամությունը կուսակցությունը վերից վար կառուցելու գաղափարի («բյուրոկրատական» գաղափարի) հանդեպ, յեմելով կուսակցական համագումարից և նրա ստեղծած հիմնարկներից,— թե՛ նրանց ձգտումը վարից վեր գնալու, կուսակցության իրենց անդամ հաշվելու իրավունք տալով ամեն մի պրոֆեսորի, ամեն մի դիմնազիստի և «յուրաքանչյուր գործադրությորի», թե՛ նրանց թշնամությունը գեպի «Փորմալիզմը», վոր կուսակցության անդամից պահանջում և պատկանելություն կուսակցության կողմից ընդունված կազմակերպություններից վորևէ մեկին, թե՛ նրանց հակումը գեպի հոգեբանությունը բուրժուական ինտելիգենտի, վոր պատրաստ և սոսկ «պլատոնական ձևով ընդունելու կազմակերպական հարաբերությունները», թե՛ նրանց հակումը գեպի ոսկորտունիստական խորիմաստությունն ու անիշխանական Փրազները, թե՛ նրանց տենդենցը գեպի ավտոնոմիզմն ընդդեմ ցենտրալիզմի, մի խոսքով, այն ամենը, ինչ վոր այժմ փարթամորեն փթթում ե նոր «Ասկրա»-յում, ավելի ու ավելի աջակցելով սկզբում արված սխալի լիակատար և ակնառու պարզաբանմանը:

Ինչ վերաբերում ե կուսակցական համագումարի արձանագրություններին, ապա իսկապես անիրավացի անուշադրությունը նրանց նկատմամբ կառող ե բացատրվել միայն նրանով, վոր մեր վեճերը խճողվել են կրաքացներով, և թերեւ նաև այն հանդամներով, վոր այդ արձանագրությունների մեջ չափազանց մեծ քանակությամբ չափազանց դառը ճշմարտություն կա: Կուսակցական համագումարի արձանագրությունները տալիս են իր տե-

սակի միակ պատկերը մեր կուսակցության մեջ գործերի գոյություն ունեցող իրական գրության, հայացքների, տրամադրությունների և պլանների պատկերը, վոր նկարված եւ հենց շարժման մասնակիցների կողմից, կուսակցության ներսում գոյություն ունեցող քաղաքական յերանգների պատկերը, վոր ցույց եւ տալիս նրանց համեմատական ուժը, նրանց վտխհարարերությունը և նրանց պայքարը, մի պատկեր, վոր անփոխարինելի յէ իր ճշգրտությամբ, լիակատարությամբ, բազմակողմանիությամբ, հարստությամբ և վավերականությամբ: Կուսակցական համագումարի արձանագրություններն են հենց և միայն այդ արձանագրություններն են, վոր ցույց են տալիս մեղ, թե իրոք մեղ վորքան եւ հաջողվել վերացնել հին, զուտ խմբակային կազերի բոլոր մնացորդները և դրանք փոխարինել կուսակցական միասնական մեծ կազով: Կուսակցության յուրաքանչյուր անդամ, յեթե նա կամենում եւ գիտակցորեն մասնակցել իր կուսակցության գործերին, պարապոր եւ խնամքով ուսումնասիրել մեր կուսակցական համագումարը, — հատկապես հենց ուսումնասիրել, վորովհետև արձանագրությունները կազմող հում նյութի կույտի սոսկ ընթերցումը դեռևս չի առաջի համագումարի պատկերը: Միայն մանրազնին ու ինքնուրույն ուսումնասիրության միջոցով կարելի յէ հասնել (և պետք եւ հասնել) այսպիսի արդյունքի, վոր ճառերի համառոտ կոնսոլեկտաները, վիճաբանություններից կազմած չոր եքստրակտները, մանր բաղիսումները մանր (ըստ յերեսութիւն մանր) հարցերի առթիվ միաձուրին մի ամբողջության մեջ, վորպեսզի կուսակցության անդամների առջև կանգնի ամեն մի ականավոր հուսորի կենդանի պատկերը, պարզվի կուսակցական համագումարի պատգամավորների յուրաքանչյուր խմբի ամբողջ քաղաքական գեմքը: Տողերիս գրողն իր աշխատանքը զուր կորած չի համարի, յեթե նրան հաջողվի գեթ մղում տալ կուսակցական համագումարի արձանագրությունների լայն ու ինքնուրույն ուսումնասիրության:

Մի խոսք ել սոցիալ-դեմոկրատիայի հակառակորդների հասցեյին: Նրանք չարախնդում ու ծամածություններ են անում, դիտելով մեր վեճերը. նրանք, իհարկե, կաշխատեն իրենց նպատակների համար դուրս քաշել մեր կուսակցության թերություններին ու պակասություններին նվիրված իմ բրոշյուրի առան-

ձին հատվածները: Թուսական սոցիալ-դեմոկրատներն արդեն բարգականաչափ կովիզած են հակառամաբությում, վորպեսզի չշփոթվեն այդ կամթուցներից, վորպեսզի հակառակ նրանց, շարունակեն ինքնաքնաղատության և սեփական այն մինուսների անողոք մերկացման իրենց աշխատանքը, վորոնք անպատճառ և անխուսափելիորեն կաղթահարվեն բանվորական շարժման աձման հետեւանքով: Իսկ պարոն հակառակորդները թող փորձեն ներկայացնել մեղ գործերի իրական պատկերն իբրև «կուսակցությունների» մեջ, վոր գեթ հեռավորապես մոտենար այն պատկերին, վոր տալիս են մեր յերկրորդ համագումարի արձանագրությունները:

1904 թ. մայիս

1908 թվականի ՀՐԱՍՈՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ*

«Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» բրոշյուրը լույս է տեսել Փընելում 1904 թվականի ամառը: Այդ բրոշյուրը նկարագրում է մենչեւիների ու բոլցեւիների միջև տեղի ունեցած այն պառակտաման առաջին ստադիան, վորն սկսվել եր յերկրորդ համագումարում (1903 թվականի ոգոստոս): Այդ բրոշյուրից յետ դուրս եմ զցել մոտավորապես կեսը, վորովհետև կազմակերպական պայքարի, մանավանդ կուսակցական կենտրոնների անձնական կազմի համար մղված պայքարի չնչին մանրամասնությունները բացարձակորեն չեն կարող հետաքրքրել ժամանակակից լութերցողին և, ըստ գործի եյտեւթյան, արժանի յեն մոռացման: Այստեղ ինձ հյական թվում է յերկրորդ համագումարում տեղի ունեցած տակտիկական և այլ հայացքների պայքարի վերլուծությունը և մենշևիների կազմակերպական հայացքների գեմ մղված բանակոխը. թե՛ մեկը և թե՛ մյուսը անհրաժեշտ են՝ հասկանալու համար մենշևիզմն ու բոլցեւիզմը վորպես հոսանքներ, վորոնք իբրև գրոշմե են դրել բանվորական կուսակցության ամբողջ գործունեյության վրա մեր հեղափոխության մեջ:

* Այս վերնագրով մենք զետեղում ենք այն առաջարանի մի մասը, վոր Վ. Ի. Լինինը գրել է 1908 թվականին «За 12 лет» վերնագրով լույս տեսած՝ իր յերկերի ժողովածուր համար: Այդ ժողովածուր մեջ ժոել է նույնույն «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ» բրոշյուրը:—Խմբ.:

Ս. Դ. կուսակցության յերկրորդ համագումարում տեղի ունեցած վիճաբանություններից կնշեմ ազգարային ծրագրի առթիվ յեղած վիճաբանությունները։ Դեպքերն անկառկածելիորեն ապացուցեցին, վոր մեր այն ժամանակվա ծրագրը (ոտքեղկաները վերաբարձնելը) անչափ նեղ երև քերագիտական առժման ուժերը, — այս մասին յես ավելի մանրամասնորեն կխոսեմ ներկա հրատարակության յերկրորդ հատորում։ Իսկ այստեղ կարևոր են ընդդեմ, վոր այդ ազգարային անչափ նեղ ծրագրն ել այն ժամանակ ս. Դ. կուսակցության աջ թևին չափազանց լայն երթվում։ Մարտինովն ու մյուս եկոնոմիստներն² այդ ծրագրի դեմ պայքարում եյին այն պատճառով, վոր նա իբր թե չափազանց հեռու յե գնում։ Մրանից կարելի յե տեսնել, թե ինչ լուրջ պրակտիկ նշանակություն ուներ հին «Աշկրա»-յի ամբողջ պայքարն ընդդեմ եկոնոմիզմի, պայքարն ընդդեմ սոցիալ-դեմոկրատական քաղաքականության ամբողջ բնույթի նեղացման ու նսեմացման։

Մենշևիկների հետ ունեցած տարածայնություններն այն ժամանակ (1904 թվականի առաջին կեսը) սահմանափակվում եյին կազմակերպական հարցերով։ Մենշևիկների գիրքը յես ձևակերպում եյի վորպես «ոպորտունիզմ կազմակերպական հարցերում»։ Պ. Բ. Ակսելրոդը, առարկելով դրա դեմ, կառցկուն³ գրում եր։ «Իմ թույլ դատողությամբ յես, ի վիճակի չեմ հասկանալու, թե ինչ բան ե այդ «ոպորտունիզմը կազմակերպական հարցերում», — վորն առաջ ե մղվում վորպես մի ինչ-վոր ինքնուրույն, ծրագրային և տակարիկական հայացքների հետ ունեցած որդանական կարից դուրս դտնվող բան» (1904 թվականի հունիսի 6-ի նամակը արտատպղիած նոր «Աշկրա»-յի «За два года» ժողովածուի մեջ, II մաս, եջ 149)։

Թե վորն ե ոպորտունիզմի որդանական կավը կազմակերպական և տակարիկական հայացքներում, այդ բանը բավականաշափ ցույց տվեց մենշևիզմի ամբողջ պատմությունը 1905—1907 թվականներին։ Իսկ ինչ վերաբերում ե «ոպորտունիզմ կազմակերպական հարցերում» «անհասկանալի բանին», ապա կյանքն իմ գնահատման ճշտությունը հաստատեց այնքան փայլուն կերպով, վորպիսին յես չեյի ել կարող աղասել։ Բավական ե մատնանշել, վոր մենշևիկ Զերեվանին ինքն ել ստիպված ե այժմ խոստովանել (տե՛ս

նրա բրոշյուրը Ռ. Ս. Դ. Բ. 1907 թվականի Լոնդոնյան համագումարի մասին), վոր Ակսելրոդի կազմակերպական ոլլաններից (չարաբանատիկ «բանվորական համագումարը»⁴ և այլն) բլիսում են պրոլետարիատի գործը վիչացնող պառակտումներ միայն։ Այդ գեռքիչ է։ Նույն մենշևիկ Զերեվանին այստեղ պատմում է, վոր Լոնդոնում Պլեխանովին վիճակվեց մենշևիկյան Փրակցիայի ներսում պայքարել ընդդեմ կազմակերպական անարխիզմի։ Այսպիսով, 1904 թվականին յես զուր չեյի պայքարում ընդդեմ «ոպորտունիզմի կազմակերպական հարցերում», յեթե 1907 թվականին թե՝ Զերեվանինը և թե՝ Պլեխանովին ստիպված յեղան խոստովանել աղղեցիկ մենշևիկների «կազմակերպական անարխիզմը»։

Գրված է 1907 թ. սեպտեմբերին։

Տպագրված է 1908 թ. «За 12 лет» ժողովածուի մեջ։
Յերկեր, Հ. XII, եջ 67—68։

ա) ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

«Իսկրա»-ն հենց սկզբից, լրագրի լույս ընծայելուն նախորդող՝ 1900 թվի իր ազգի մեջ հայտարարեց, վոր նախքան միանալը պետք է սահմանազատվենք: «Իսկրա»-ն աշխատեց 1902 թվի կոնֆերենցիան դարձնել մասնավոր խորհրդակցություն և վոչ թե կուսակցական համագումար*: «Իսկրա»-ն չափազանց զդույշ եր գործում 1902 թվի ամառն ու աշնանը՝ վերանորոգելով այդ կոնֆերենցիայում ընտրված կազմակերպական կոմիտեն ։ Վերջապես, սահմանազատման գործն ավարտվեց, —մենք բոլորս ընդունում ենք, վոր ավարտվեց: Կազմակերպական կոմիտեն ձևավորվեց 1902 թ. հենց վերջում: «Իսկրա»-ն վողջունում է նրա կայունացումը և հայտարարում, —32-րդ համարի խմբագրական հոդվածում, —վոր կուսակցական համագումարի հրավիրումն ամենաիրամայական, անհետաձելի անհրաժեշտության պահանջ: Այսպիսով, մեզ արդեն ամենից քիչ կարելի յե կշտամբել յերկրորդ համագումարի հրավիրման նկատմամբ ցուցահանած շատապողականության համար: Մենք գործում երինք հենց համաձայն այն կանոնի, թե՝ յոթ անգամ չափիր, մեկ կտրիր:

բ) ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒԹՅ

Ռւբեմն վո՞րն է յեղել համագումարի գլխավոր խնդիրը: Իսկանան կուսակցություններեն այն սկզբունքային ու կազմակերպական հիմունքներով, վորոնք առաջադրվել և մշակվել են «Իսկրա»-յի կողմից: Վոր համագումարը պետք է հենց այդ ուղղությամբ աշխատեր, այդ նախորոշված եր «Իսկրա»-յի յե-

* Տե՛ս յերկրորդ համագումարի արձանագրությունները, Էջ 20:

ուամյա գործունեցությամբ և նրա ընդունումով կոմիտեների մեծամասնության կողմից։ Իսկրայական ծրագիրն ու ուղղությունը պետք է գառնային կուսակցության ծրագիրն ու ուղղությունը, իսկրայական կազմակերպական պլանները պետք է հաստատում գտնելին կուսակցության կազմակերպական կանոնագրության մեջ։ Բայց ինքնըստինքյան հասկանալի յեւ, վոր այդպիսի արդյունքի չեր կարելի հասնել առանց պայքարի։ Աներկայացուցչության լիակատարությունը համագումարում առաջավեց նաև այնպիսի կազմակերպությունների ներկայությունը, վորոնք վըճռական պայքար ելին մղում «Ասկրա»-յի դեմ (Բունդը⁶ և «Ռաբօչե Շելօ»-ն⁷), և այնպիսիններինը, վորոնք «Ասկրա»-ն դեկամար որպան ընդունելով խոսքով, գործով հետապնդում ելին իրենց հասուկ պլանները և աչքի ելին ընկնում սկզբունքային տեսակետից անկայունությամբ («Խոհեմայական Ռաբօչի»-ի⁸ խումբը և միքանի կոմիտեների՝ նրան հարող պատգամավորները)։ Այդ պայքանեներում համագումարը չեր կարող պայքարի ապարեզ չդառնալ իսկրայական ուղղության հաղործյան համար։ Վոր համագումարն իրոք հենց այդպիսի պայքար և յեղել, —այդ միանդամից հասկանալի կլինի յուրաքանչյուրի համար, ով փոքրիշատե ուշտիր կերպով կարդա նրա արձանագրությունները։ Իսկ մեր խնդիրն այժմ այն է, վոր մանրամասն քննենք համագումարում դանագան հարցերի վերաբերմքը յերևան յեկած ամենագլխավոր խմբավորմաները և վերականգնենք, արձանագրությունների ճշգրիտ տվյալներով, համագումարի հիմնական խմբերից յուրաքանչյուրի քաղաքական գեմքը։ Իսկապես ի՞նչ ելին ներկայացնում այն խմբերը, այն ուղղություններն ու յերանդները, վորոնք համագումարում «Ասկրա»-յի զեկավարությամբ պետք է ձուլվելին և մեկ կուսակցություն կազմելին։ ահա՛ թե ինչ պետք է ցույց տանք մենք վիճաբանությունների և քվեարկությունների վերլուծությամբ։ Այս հանգամանքի պարզաբանումը հիմնական կարելություն ունի նաև ուսումնասիրելու համար այն, թե իրոք ի՞նչ են մեր սոցիալ-դեմոկրատները, և թե ըմբանելու համար տարակարծության պատճառները։

գ) ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՍԿԻԶԱԲԵԴ ՄԻՋԱՐԴԵԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅՑԻ ՀԵՏ

Համագումարում տեղի ունեցած վիճաբանությունների և քվեարկությունների վերլուծությունն ամենից հարմար է կատարել ըստ համագումարի նիստերի կարգի, վորպեսզի հաջորդականորեն նշենք ավելի ու ավելի ուրվագծվող բոլոր քաղաքական յերանդները։ Միայն այն ժամանակ, յերբ այդ անպայման անհրաժեշտ է, շեղումներ կարվեն ժամանակագրական կարգից՝ միատեղ քննության յենթարկելու համար սերտորեն կապված հարցերը կամ միասեռ խմբավորումները։ Հանուն անաշառության մենք պիտի ջանանք նշել բոլոր ամենագլխավոր քվեարկությունները, իսարկե, թողնելով այն մանր հարցերին վերաբերող բաղմաթիվ քվեարկությունները, վորոնք մեր համագումարից անշափ քանակությամբ ժամանակ խլեցին (ժամամբ մեր անփորձության ու նյութը հանձնաժողովային և պլենար նիստերի մեջ բաշել չկարողանալու հետևանդով, մասսամբ դրեթե որպարուկցիայի հասնող ձգձգումների հետևանդով)։

Առաջին հարցը, վոր յերանդների տարրերություն յերեան հանել սկսող վիճաբանություններ հարուցեց, այն հարցն եր, թե պե՞տք է արդյոք առաջին տեղը դնել (համագումարի «որակարգի» մեջ) «Բունդի տեղը կուսակցության մեջ» կետը (արձանագրությունների 29—33 եջեր)։ Իսկրայական տեսակետից, վոր պաշտպանում ելինք Պլենարնովը, Մարտովը, Տրոցկին և յես, այդ մասին վոչ մի տարակույս լինել չեր կարող։ Բունդի հեռանալը կուսակցությունից ակներեռենցուց տվեց մեր այն նկատառումների ճշտությունը, թե յեթե Բունդը չեր կամենում մեզ հետ միասին ընթանալ և ընդունել այն կազմակերպական սկզբունքները, վոր «Ասկրա»-յի հետ միասին ընդունում եր կուսակցության մեծամասնությունը, —ապա անողուտ եր և անիմաստ «այնպես ձևացնել», թե մենք միասին ենք ընթանում, և միայն ձգձգել Համագումարը (ինչպես այն ձգձգում ելին բունդականները)։ Հարցն արդեն միանդամայն պարզված եր դրականության մեջ, և կուսակցության ամեն մի փոքրիշատե խոհուն անդամի համար ակներև եր, վոր մնում է միայն բացահայտ կերպով դնել հարցը և ուղղակի, աղնիվ կեր-

պողի բնտրություն անել—ամստոնմիա (միասին ենք ընթանում) թև ֆեղերացիա (բաժանվում ենք) :

Իրենց ամբողջ քաղաքականության մեջ խուսափող բունդականներն այստեղ ևս ցանկացան խուսափել, ձգձգելով հարցը: Նրանց միանում և ընկ. Ակիմովը⁹, վոր միանդամից առաջազրում է, բայ յերեսութիւն «Ռածու Դելո»-յի բոլոր կողմնակիցների հոդքից, «Ասկրա»-յի հետ ունեցած կաղմակերպական տարածայնությունները (արձանագրությունների 31-րդ եջ): Բունդի և «Ռածու Դելո»-յի կողմն և կանգնում ընկ. Մախովը¹⁰ (Նիկոլայի կոմիտեյի յերկու ձայն. կոմիտեն դրանից մի քիչ առաջ իր համերաշխությունն եր հայտնել «Ասկրա»-յին): Ընկ. Մախովի համար հարցը բոլորովին պարզ չէ, իսկ նա «Հիվանդ տեղ» և համարում նաև «զեմոկրատական կառուցվածքի կամ, ընդհակառակը (այս նկատեցե՞ք), ցենտրալիզմի հարցը»:

Այսպիսով, իսկրայականների գեմ են դուրս դալիս Բունդը, «Ռածու Դելո»-ն և ընկ. Մախովը, վորոնք միասին ունեն հենց այն տասը ձայնը, վոր արվել են մեր գեմ (եջ 33): Թեր տրված է 30 ձայն—մի թիվ, վորի չուրջը, ինչպես ստորև կտեսնենք, հաճախ տատանվում են իսկրայականների ձայները: Բանից դուրս և դալիս, վոր տասնեմեկ ձայն ձեռնպահ մնացին—ըստ յերեսութիւն, չանցնելով պայքարող «կուսակցություններից» վոչ մեկի և վոչ ել մյուսի կողմը: Հետաքրքրական են նշել, վոր յեղք մենք քվեարկում եյինք Բունդի կանոնադրության § 2-ը (այդ § 2-ի մերժումը առաջ բերեց Բունդի հեռանալը կուսակցությունից), ապա § 2-ին թեր տված ձայների և ձեռնպահների թիվը դարձյալ տասն եր (արձանագրությունների 289-րդ եջ), ընդուրում ձեռնպահ մնացին հենց յերեք ուստոչեղելականները (Բունդը¹¹, Մարտինով և Ակիմով) և ընկ. Մախովը: Ակներե և, վոր Բունդի վերաբերյալ հարցի տեղի հարցը քվեարկությունը պատահական խմբավորում չտվեց: Ակներե և, վոր այդ բոլոր ընկերները տարակարծիք եյին «Ասկրա»-յի հետ վո՞չ միայն քննության կարգի տեխնիկական հարցում, այլև ըստ եյուրյան:

Բունդի հարցի տեղի հարցը քվեարկելուց հետո համագումարում առաջ յեկավ «Բօրբա»¹² խմբի հարցը, վոր նույնպես չափազանց հետաքրքրական խմբավորում առաջ բերեց, և սերտորեն կապված է համագումարի «ամենահիվանդում» հարցի, կենտրոն-

ների անձնաւելան կաղմի հարցի հետ: Համագումարի կաղմը վորուցող հանձնաժողովը, համաձայն՝ կաղմակերպական կոմիտեյի կրկնակի վորոշման (տե՛ս արձան. 383 և 375 եջեր) ու նրա ներկայացուցիչների՝ հանձնաժողովում արած գեկուցման (35-րդ եջ), դեմ և արտահայտվում «Բօրբա» խումբը հրավիրելուն:

Կազմիկովի անդամ ընկ. Յեղորդը¹³ հայուարարում է, վոր ««Բօրբա»-յի հարցը (նկատեցե՞ք՝ «Բօրբա»-յի, և վոչ թե նրա այս կամ այն անդամի հարցը) իրեն համար նոր ե», և ընդմիջում է խոնդրում: Թե ինչպես կաղմակերպական կոմիտեյի անդամի համար կարող եր նոր լինել մի հարց, վոր յերկու անդամ վորոշման և յեղել կաղմակերպական կոմիտեյի կողմից, —մնում է անհայտության խավարով ծածկված: Ընդմիջման ժամանակ տեղի յեւնենում կաղմակերպական կոմիտեյի նիստը (արձան. 40-րդ եջ) նրա այն կաղմով, վոր պատահաբար գտնվում եր համագումարում (կաղմակերպական կոմիտեյի միքանի անդամ՝ «Ասկրա»-յի կաղմակերպության հին անդամներից՝ բացակայում եյին համագումարից): Վիճաբանություններ են սկսվում «Բօրբա»-յի մասին: Ռաբուչեղելականները (Մարտինով, Ակիմով և Բրուկեր, եջ 36—38) թեր են արտահայտվում: Իսկրայականները (Պավլովիչ, Սորոկին, Լանդե¹⁴, Տրոցկի, Մարտով և մյուսները)—դեմ: Համագումարը դարձյալ բաժանվում է մեղ արդեն ծանոթ խմբավորմամբ: «Բօրբա»-յի համար համար պայքար և սկսվում, և ընկ. Մարտովը հանդես է դալիս առանձնապես հանգստանորեն կազմված (եջ 38) և «մարտական» ձառով, վորի մեջ արդարացիորեն մատնանշում և ուստական և արտասահմանյան խմբերի «ներկայացուցչության անհավասարաչափությունը», այն, վոր հազիվ թե «լսով» լիներ արտասահմանյան խմբին «արտօնություն» տալ (վոսկե՞ խոսքեր, վորոնք առանձնապես ուսանելի յեն այժմ, համագումարից հետո տեղի ունեցած գեպքերի տեսակետից), վոր չպետք է խրախուսել «կուսակցության մեջ կաղմակերպական այն քառու, վորը բնորոշվում եր վոչ մի սկզբունքային նկատառումից չըլիսող մասնատումով»:

Բացի «Ռածու Դելո»-յի կողմնակիցներից վոչ վոք բաց կերպով և պատճառաբանված հանդես չի դալիս հոգում «Բօրբա»-յի՝ ընդհանուր մինչև հուետորների ցուցակի փակումը (եջ 40):

Հուետորների ցուցակը փակելուց հետո, յերբ ըստ եյուրյան



արդեն չի կարելի արտահայտվել, ընկ. Յեղորովը «համառորեն պահանջում ե, վոր լսվի կազմակերպական կոմիտեյի հենց նոր ընդունած վորոշումը»: Զարմանալի չե, վոր համագումարի անդամները վրդովված են այդ վարմունքից, և ընկ. Պլեխանովը, վորտես նախագահ, արտահայտում ե իր «տարակուսանքը, թե ինչպես կարող ե ընկ. Յեղորովը պնդել իր պահանջի վրա»: Թվում ե, թե յերկուսից մեկը. կամ պետք ե բացահայտ ու վորոշ կերպով արտահայտվել ըստ հարցի եյության ամբողջ համագումարի առաջ, կամ ամենենին չարտահայտվել: Բայց թողնել, վոր հսկողների ցուցակը փակվի, և հետո «յեղրափակիչ խոսքի» անվան տակ համագումարին հրաժանել կազմակերպական կոմիտեյի նոր վորոշումը—հենց քննված հարցի վերաբերմամբ—այդ հավասարազոր. և անկյունից հասցվող հարվածի:

Նիստը վերսկավում ե ճաշից հետո, և տարակուսել շարունակող բյուրոն վորոշում ե չեղվել «ձեսկանությունից» և դիմել վերջին, համագումարներում միայն ծայրահեղ զեպքերում գործածելի միջոցին—«ընկերական բացատրության»: Կազմակերպական կոմիտեյի ներկայացուցիչ Պոպովը¹⁵ հազրուում է կազմակերպական կոմիտեյի այն վորոշումը, վոր ընդունված և նրա բոլոր անդամների կողմից ընդդեմ մեկի՝ Պավլովիչի (Եջ 43), և վորն առաջարկում ե համագումարին՝ հրավիրել Խյաղանովին¹⁶:

Պավլովիչը հայտարարում ե, վոր նա ժխտել ե և ժխտում է կազմակերպական կոմիտեյի ժողովի որինականությունը, վոր կազմակերպական կոմիտեյի նոր վորոշումը «հակասաւ և նրա առաջվա վնիին»: Հայտարարությունը փոթորիկ ե առաջացնում: Ընկ. Յեղորովը, վոր նմանապես անդամ է կազմակերպական կոմիտեյի և անդամ «Խյաղանի Ռաբօչի»-ի խմբի, խուսափում է ըստ եյության պատասխանելուց և կամենում է ծանրության կենտրոնը փոխադրել կարգապահության հարցի վրա: Իր թե ընկ. Պավլովիչը խախտել է կուսակցական կարգապահությունը, վորովհետեւ կազմ. կոմիտեն, քննելով Պավլովիչի բողոքը, վորոշել և «չհազրողել համագումարին Պավլովիչի առանձին կարծիքը»: Վիճաբանությունները փոխադրվում են կուսակցական կարգապահության հարցի շուրջը, և Պլեխանովը խրատական ձեռվ պարզաբանում է ընկ. Յեղորովին, համագումարի ազմկալի ծափահարությունների տակ, վոր «մենք չունենք իմպերատրի մանդատներ» (Եջ 42, համեմատ. Եջ 379, համագումարի

կանոնադրություն, § 7—«Պատգամավորներն իրենց լիազորությունների մեջ չպետք ե սահմանափակվեն իմպերատրի մանդատներով: Իրենց լիազորությունների կատարման մեջ նրանք միանդամայն ազատ են և անկախ»): «Համագումարն ամենաբարձրագույն կուսակցական ինստանցիան ե», և, հետեաբար, կուսակցական կարգապահությունն ու համագումարի կամոնադրությունը խախտում ե հենց նա, ով վորմե կերպ սահմանափակում ե ամեն մի պատգամավորի իրավունքը՝ կուսակցական կյանքի բալոր հարցերի վերաբերմամբ—առանց բացառության ու հապավման—դիմելու ուղղակի համագումարին: Այսպիսով, վիճելի հարցը վեր ե ածուում խմբակայնություն, թե կուսակցականությունը դիմային: Պատգամավորների իրավունքների սահմանափակում համագումարում հանուն զանազան կոլեկիաների ու խմբակների յերևակայական իրավունքների կամ կամոնադրությունների, կամ լիակատար, վո՞չ թե միայն խոսքով, այլ գործով, ցրում բալոր ստորին ինստանցիաների ու հին մանր խմբերի համագումարից առաջ, մինչև իրոք կուսակցական պաշտոնեյական հիմնարկների ստեղծումը: Ընթերցողն այստեղից արդեն տեսնում է, թե ինչ ահազին սկզբունքային կարևորություն ուներ այս վեճը համագումարի հենց սկզբում (յերրորդ նիստը), քանի վոր համագումարն իրեն նորատակ եր գրել փաստորեն վերականգնել կուսակցությունը: Այս վեճի վրա կենտրոնացավ, այսպես ասած, չին խըմբակների և մանր խմբերի («Խյաղանի Ռաբօչի»-ի նման) ընդհարումը վերածնվող կուսակցության հետ: Յեվ հակախիկրայական խմբերն իսկույն յերեան են գալիս. թե՛ բունդական Աբրամոնը, թե՛ «Իսկրա»-յի այժմյան խմբագումարին ջերմ դաշնակից ընկ. Մարտինովը, թե՛ մեր ծանոթ ընկ. Մախովը—նրանք բոլորն արտահայտվում են հոգուտ Յեղորովի և «Խյաղանի Ռաբօչի»-ի խմբի՝ ընդդեմ Պավլովիչի: Ընկ. Մարտինովը, վոր այժմ Մարտովի և Ակսելը հետ մրցելով, սեթեեթում է կազմակերպական «դեմոկրատիզմի մասին», մտաբերում ե նույնիսկ... զորքը, վորտեղ բարձրադրույն ինստանցիային գանգատ տալ կարելի յե միայն ստորին ինստանցիայի միջոցով: Այս «կոմպակտ» հակախիկրայական ուղղողիցիայի իսկական իմաստը միանդամայն պարզ եր ամեն մեկի համար, ով համագումարումն եր կամ ով ուշադիր հետեւում եր մեր կուսակցության ներքին պատմությանը մինչև համագումարը: Ողողիցիայի խնդիրը (վոր գուցե նույնիսկ միշտ

չեցին դիտակցում նրա ներկայացուցիչները, իսկ յերբեմն ել է-ներցիայով եյին պաշտպանում) այն եր, վոր պաշտպանեն մանր խժբակների անկախությունը, առանձնությունը, ծխական շահերը, վորպեսզի այդ շահերը չկլանվեն խակայական մքըունքներով ստեղծվող լայն կուսակցության կողմից:

Հենց այս տեսակեաից ել մոտեցավ հարցին նաև ընկ. Մարտովը, վոր այն ժամանակ դեռևս չեր միացել Մարտինովի հետ: Ընկ. Մարտովը վճռականորեն ծառանում ե, և արդարացի յե ծառանում, այն մարդկանց գեմ, ովքեր «կուսակցական կարգապահության վերաբերյալ հասկացողությամբ հեռու չեն զնում հեղափոխականի պարտականություններից առորին կարդի այն խմբի վերաբերյալ, վորի մեջ մտնում են նրանք»: «Միասնական կուսակցության ներսում թույլատրելի չե վոչ մի հարկադրական (ընդգծումը Մարտովինն ե) խմբավորում», պարզաբանում ե Մարտովը խմբակայնության ջատագովներին, չնախատեսելով, թե ինչպես ե նա այդ խոսքերով խարազանում իր սեփական քաղաքական վարքը համարդումարի վերջում և նրանից հետո...

Դ) «ՅՈՂՆՅԻ ՌԱԲՈԿԻЙ»-Ի ԽՄԲԻ ՑՐՈՒՄԸ

Պատումավորների բաշխումը կազմ. կոմ.-ի հարցում կարող եր, թերեւս, պատահական թվական: Բայց այդ կարծեքը ոխալ կլինեք, և վորպեսզի վերացնենք այն, մենք կշեղվենք ժամանակադրական կարդից և այժմ եւեթ քննության կառնենք այն միջազեպը, վոր տեղի ունեցավ համագումարի վերջում, բայց ամենասերտ կերպով կապված ե նախընթացի հետ: Այդ միջազեպը «Յողնյի Ռաբոկի» խմբի ցրումն ե: Իսկայայական կազմակերպական տենդենցիների գեմ—կուսակցական ուժերի լիակատար միացման և ուժերը մասնատող քառոսի վերացման գեմ—այսուղ համելես յեկան խմբերից մեջի շահերը, վոր ողտակար գործ եր կատարում իսկական կուսակցության բացակայության պայմաններում և վորն ավելորդ վարձավ աշխատանքի ցենտրալիստական գրման ժամանակի: Հանուն խմբակի շահերի — «Յողնյի Ռաբոկի»-ի խումբը վոչ պակաս իրավունքով, քան «Ասկրա»-յի չին խմբագրությունը, կարող եր պահանջել «հաջորդականությունը» և իր անձեռնմխելիությունը պահպանել: Հանուն կուսակցության շահերի—այս խումբը պետք ե յենթարկելու թու-

ժերի փոխադրությամբ «համապատասխան կուսակցական կազմակերպությունների մեջ» (Եջ 313, համագումարի ընդունում՝ բանաձեկի վերջավորությունը): Խմբակի և «քաղքենիականության» շահերի տեսակետից չեր կարող «պատկանակատ» չթվալ (ընկ. թուսովի և ընկ. Դեյչի¹⁷ արտահայտությունը) այն ոգտարկար խմբի ցրումը, վոր նմանապես չեր կամենում արդ, ինչպես չեր կամենում նաև «Ասկրա»-յի հին խմբագրությունը: Կուսակցության չափերի տեսակետից անհրաժեշտ եր ցրումը, «լուծվելը» (Գուսեվի¹⁸ արտահայտությունը): Կուսակցության մեջ: «Յօջնյի Ռաբօկի»-ի խումբն ուղղակի հայտարարեց, վոր ինքը «հարկավոր չի դառնում» իրեն ցրված հայտարարել և պահանջում ե, վոր «համապատամարը վճռականորեն հայտնի իր կարծիքը» և այն ել՝ «անհապաղ, այս կամ վոչ»: «Յօջնյի Ռաբօկի»-ի խումբն ուղղակի հենվեց հենց այն «հաջորդականության» վրա, վորի անունով բողոքեց «Ասկրա»-յի հին խմբագրությունը... իր ցրումից հետո: «Թեպետ մենք բոլորս առանձին-առանձին միասնական կուսակցություն ենք կազմում—ասաց ընկ. Յեղորովը, բայց նա այսուամենայնիվ բաղկացած ե ամբողջ մի շարք կազմակերպություններից, վորոնց ստիպված ենք հաշվի առնել վորպես պատմական մեծություններ... Յեթե նման կազմակերպությունը վնասակար չե կուսակցության համար, ապա հարկ չկա ցրելու այն»:

Այսպիսով, սկզբունքային կարևոր հարցը միանգամայն վորոշակի ձևով դրվեց, և բոլոր խելայականները—քանի գեուես նրանց սեփական խմբակայնության շահերը յերեան չեյին յեկել—վճռականորեն դուրս յեկան անկայուն տարրերի գեմ (այդ ժամանակ բունդականներն ու ուսուչեղելականներից յերկուսն արգեն համագումարում չեյին). նրանք անտարակույս սարի պես պաշտպան կիանունեյին «պատմական մեծություններին հաշվի առնելու» անհրաժեշտությանը): Քվեարկությունը տվեց 31 թեր, հինգ գեմ և հինգ ձեռնպահ («Յօջնյի Ռաբօկի»-ի խմբի անդամների չորս ձայնը և մեկը ևս, Հավանորեն՝ Բելովինը¹⁹, գատելով նրա նախակին հայտարարություններից, Եջ 308): Լիակատար վորոշակիությամբ ուրվադժվում ե տաս ճայն ունեցող մի խումբ, վոր խիստ բացառաբար և վերաբերյում «Ասկրա»-յի հետևողական կազմակերպարկան պլանին և պաշտպանում խմբակայնությունների մեջ խմբացնդիմության: Վիճաբանությունների մեջ խմբացնդիմության այս հարցը հենց սկզբունքորեն են դնում (տե՛ս Լան-

գելի ճառը, եջ 315), արտահայտվելով ընդգեմ տնայնակործականության ու ցրվածության, հրաժարվելով հաշվի առնել առանձին կազմակերպությունների «Համակրանքներ», ուղղակի ասելով, վոր ցյեթե «Южный Рабочий»-ի կողմանակից ընկերներն ավելի սկզբունքային տեսակետի վրա լինելին կանոնած անցյալում, դեռևս մեկ կամ յերկու տարի սրանից առաջ, այն ժամանակ կուսակցության միավորման դորձը և ծրագրի այն սկզբունքների հաղթանակը, վոր մենք այսող սրբագործեցինք, ավելի վաղ տեղի կունենային»: Այդ վոգով են արտահայտվում թե՛ Ուլովը²⁰, թե՛ Գուսեվը, թե՛ Լյազովը, թե՛ Մուրավյովը²¹, թե՛ Ռուսովը, թե՛ Պավլովիչը, թե՛ Գլեբովը, թե՛ Գորինը²²: «Փոքրամասնության» ներկայացուցիչ խկրայականները վո՛չ միայն չեն ստարկում համարումարում հաճախ հարուցված այդ վորոշ ցուցումների դեմ այն մասին, թե «Южный Рабочий»-ի, Մախովի և մյուսների «Քիծը» և քաղաքականությունը բավականաշափ սկզբունքային չեն, վո՛չ միայն վորեւ վերապահություն չեն անում. այդ առթիվ, այլ ընդհակառակը, ի դեմ Դեյչի վճռականորեն միանում են նրանց, բատավարելով «քառոր» և վողունելով «Հարցի ուղղակի դրումը» (եջ 315) ընկ. Խուսովի կողմից:

Իր ցրման հարցը «Южный Рабочий»-ի խմբի սոսկալի վըրդովմունքն առաջարեց, վորի հետքերը կան արձանադրությունների մեջել (չպետք է մուանալ, վոր արձանադրությունները տալիս են վեճաբանությունների սոսկ դժույն պատկերը, վորովհետեւ լրիվ ճառերի փոխարեն նրանք բերում են ամենասեղմ կոնսպեկտներ ու հքուրականներ): Ընկ. Յեղորովը նույնիսկ «ուռւ» անվանեց «Рабочая Мысль»-ի խմբի անվան հասարակ հիշատակումը «Южный Рабочий»-ի կողքին—ընորոշ նմուշ այն բանի, թե ինչ վերաբերմունք եր իշխում համադումարում վեպի հետեւղական և կոնտմիդը: Յեղորովը նույնիսկ շատ ավելի ուշ, 37-րդ նիստում, ամենամեծ ջղայնությամբ է խոսում «Южный Рабочий»-ի ցրման մասին (եջ 356), խնդրելով արձանադրության մեջ մտցնել, վոր «Южный Рабочий»-ի հարցը քննելիս այդ խմբի անդամներից չեն հարցրել վո՛չ հրատարակության միջոցների, վոչ Կ.Ռ.-ի²³ և Կենտ. Կոմ.-ի վերահսկողության մասին: Ընկ. Պողովը «Южный Рабочий»-ի վերաբերյալ վիճաբանությունների ժամանակ ակնարկում է այն կոմպակտ մեծամա-

նության մասին, վորը, այսպես ասած, կանխորոշեց այդ խմբի հարցը: «Այժմ,—ասում ե նա (եջ 316),—ամեն ինչ պարզ ե ընկ. Գուսեվի և Ուլովի համերից եետու: Այս խոսքերի թմաստն անտարակուսելիք յեւ այժմ, յերբ խկրայականներն արտահայտվեցին և բանաձև առաջարկեցին, ամեն ինչ պարզ ե, այսինքն՝ պարզ ե, վոր «Южный Рабочий»-ն կցըվի իր կամքի հակառակ:

Ե) Միջադիր Լեջուների իրավաչափական օրինական առաջը

Վերադառնանք համագումարի նիստերի կարգին:

Մենք այժմ համոզվեցինք, վոր գեռես հարցերի ըստ եյության քննարկմանն անցնելուց առաջ համագումարում պարզ կերպով յերեան յեկավ վոչ միայն հակախսկրայականների միանդամայն վորոշ խումբ (8 ձայն), այլև միջակա, անկայուն տարբերի մի խումբ, վորոնք պատրաստ եյին ողնել այդ ութնյակին և մեծացնել նրան մոտավորապես մինչև 16—18 ձայն:

Համագումարում չափազանց, ծայրահեղ մանրամասնությամբ քննված հարցը կուսակցության մեջ Բունդի գրավելիք տեղի մասին հանգեց սկզբունքային թեղիսի վորոշման, իսկ գործնական վճիռը հետաձգվեց մինչև կազմակերպական հարաբերությունների քննությունը: Նկատի առնելով այն հանգամանքը, վոր գրականության մեջ մինչև համագումարը բավական շատ տեղ է յեղել հատկացված այս հարցին վերաբերող թեմաներին, համագումարում քննությունը համեմատարար քիչ նոր բան տվեց: Միայն չի կարելի չնկատել, վոր «Раб. Дело»-յի կողմնակիցները (Մարտինովը, Ակիմովը և Բրուկերը), համաձայնելով Մարտինի բանաձեկին, վերապահություն արին, թե ընդունում են նրա անբավարարությունը և նրանից բզիուղ յեղակացություններին համամիտ չեն (եջ 69, 73, 83, 86):

Բունդի տեղի հարցից համագումարն անցավ ծրագրին: Վիճաբանություններն այսող պտտվում եյին մեծ մասամբ մասնավոր ուղղումների շուրջը, վորոնք քիչ հետաքրքրություն են ներկայացնում: Սկզբունքորեն հակախսկրայականների ողողիցիան արտահայտվեց միայն ընկ. Մարտինովի արշավանքի մեջ՝ ընդդեմ տարերայնության և դիտակցականության հարցի տիրահըռչակ առաջալրման: Մարտինովին պաշտպան կանոնացին, իւրակե, բունդականներն ու բոլոր ուարոչեղիականները: Նրա առա-

կությունների անհիմնավորությունը ցույց տվին, իմիջի այլոց, Մաքտովը և Պետանովը։ Վորպես կուրյող պետք է նշել, վոր «Ասքրա»-ի խմբագրությունն այժմ անցել է Մարտինովի կողմը և հակառակն է ասում այն բանի, ինչ վոր նա ասում եր համապումարում։

Մի կողմ թողնելով «Ասքրա»-ն կենտրոնական որդան ձանաչելու վեճերը և կանոնադրության վերաբերող վեճերի սկիզբը (ավելի հարմար կինսի դրանք քննել կանոնադրության ամբողջ քննության ժամանակ), անցնենք ծրագրի քննության ժամանակ յերեւան յեկած սկզբունքային յերանդներին։ Նախ և առաջ նշենք շատ բնորոշ հատկություն ունեցող մի մանրամասնություն—համեմատական ներկայացուցչության հարցի վերաբերյալ վիճարանությունները։ «Յօհն. Բաբ.»-ի կողմնակից ընկ. Յեղորովը պաշտպանում եր այդ հարցը ծրագրի մեջ մտցնելու միտքը և պաշտպանում եր այնպես, վոր հարուցեց Պոսադովսկու²⁴ (իսկ-բայական՝ փոքրամասնությունից) արդարացի դիտողությունը «լուրջ տարածայնության» մասին։ «Տարակույս չկա, —ասաց ընկ. Պոսադովսկին, —վոր մենք համամիտ չենք հետեւյալ հիմնական հարցում։ մեր ապագա քաղաքականությունը պե՞տք ե արդյոք յենթարկենք այս կամ այն հիմնական դեմոկրատական սկզբունքներին, ընդունելով նրանց բացարձակ արթեքը, թե դեմոկրատական բոլոր սկզբունքները պետք ե յենթարկվեն բացառապես մեր կուսակցության շահերին։ Յես վճռականապես արտահայտվում եմ հոգուած վերջինի։» Պետանովը «լիովին միանում ե» Պոսադովսկուն, ե'լ ավելի վորոշ ու ավելի վճռական արտահայտություններով ծառանալով «դեմոկրատական սկզբունքների բացարձակ արթեքի դեմ», նրանց «վերացական» քննության դեմ։ «Հիպոթեզաբար հնարավոր ե այնպիսի դեպք, —ասում ե նա, —յերբ մենք, ոոցիալ-դեմոկրատներս, արտահայտվենք ընդհանուր ընտրական իրավունքի դեմ։ Իտալական հանրապետությունների բուրժուազիան մի ժամանակ քաղաքական իրավունքներից զրկում եր ազնվականությանը պատկանող անձերին։ Հեղափոխական պրոլետարիատը կկարողանար սահմանափակել վերին գասակարգերի քաղաքական իրավունքներն այսպիս, ինչպես վերին գասակարգերը մի ժամանակ սահմանափակում ենին նրա քաղաքական իրավունքները։» Պետանովի

ճառն ընդունվում է ծափահարություններով ու սուլոցնվ, և յերբ Պետանովը բողոքում է Zwischenruf -ի^{*)} գեմ՝ «դուք չպետք ե սուլելք», և խնդրում է ընկերներին չքաշել, ընկ. Յեղորովը վեր է կենում և ասում։ «Քանի վոր այսպիսի ճառերը ծափահարություններ են առաջացնում, յես պարտավոր եմ սուլել»։ Ընկ. Գոլդբլատի (Բունդի պատգամավոր) հետ միասին ընկ. Յեղորովը գեմ է արտահայտվում Պոսադովսկու և Պետանովի հայցքներին։ Դժբախտաբար վիճարանությունները փակվեցին, և նրանց առթիվ ծագած հարցն իսկույն վերացան առպարեզից։

Տարածայնությունն ե'լ ավելի ուելյեֆ կերպով յերևան յեկադ «լեզուների իրավահավասարության» հարցում (արձան. 171-ը և հետեւյալ եները)։ Այս կետի նկատմամբ վոչ այնքան վիճարանություններն են պերճախոս, վորքան քիեւարկությունները—Հաշվելով նրանց գումարը, ստանում ենք մի աներևակայելի թիվ—տասնեւվեց։ Ինչի՞ համար։ Նրա համար, թե բավակա՞ն է արդյոք ծրագրի մեջ շեշտել բոլոր քաղաքացիների իրավահավասարությունն անկախ սեռից և այլն ու լեզվից, թե անհրաժեշտ է առել՝ «լեզվի աղասություն» կամ «լեզուների իրավահավասարություն»։ Ընկ. Մարտովը Լիդայի²⁵ համագումարում բարվական ճիշտ բնորոշեց այդ միջադեպը, ասելով, թե «Ծրագրի մի կետի խմբագրությունը վերաբերող չնչին վեճն ընդունեց սկզբունքային նշանակություն, վորովհետև համագումարի կեսը պատրաստ էր տապալելու ծրագրային հանձնաժողովը»։ Հենց այդպիս։ Ընդհարման առիթը ճիշտ փոր չնչին եր, և այսուամենայնիվ ընդհարումն իրոք սկզբունքային բնույթ ընդունեց, ուստի և սոսկալի գաժան ձեռեր՝ ընդհուպ մինչև ծրագրային հանձնաժողովը «տապալելու» փորձը, մինչև այն ստորինան, վոր կառկանդներ արտահայտվեցին «համագումարին խաբելու» ցանկության մասին (այդպիսի կասկած հայտնեց Յեղորովը Մարտովի՝ մասին), մինչև այն ստորինան, վոր ամենա... հայշոյական բնույթի վորխաղարձ անձնական նկատողություններ յեղան (եջ 178)։ Նույնիսկ ընկ. Պոսադովը «ցավ հայտնեց, վոր դատարկ բաների առթիվ այնպիսի մքնուրս և ստեղծվում» (ընդդժումն

*) պատգություն տեղից հուսորի ճառի ժամանակ։—Խմբ.։

իմն ե, եջ 182), վորն իշխում եր յերեք նիստի ընթացքում (16, 17 և 18):

Այս բոլոր արտահայտությունները վերին աստիճանի վորոշն եւ կատեղորիկ կերպով նշում են այն արտահայտիչ փաստը, վոր «կատկածների» և պայքարի ամենաղագան ձեւերի («տապալում») մթնոլորտը, —վորն ստեղծելու համար հետո, Լիդայի համագումարում, մեղաղը վոր եր խրայականների մեծամասնությունը, —իրոք ստեղծվեց շատ ավելի առաջ, քան մենք պառակտվեցինք մեծամասնության և փոքրամասնության: Խիստ արտահայտություններն ու սրախոսությունները չեն, վոր կոնֆլիկտ են ստեղծել, —նրանք միայն սիմպումն եյին այն յերեսութիւ, վոր համագումարի հենց քաղաքական խմբավորման մեջ կա «Հակասություն», կան կոնֆլիկտի բոլոր դրավականները, կա ներքին անմիտեսակություն, վոր իմմանենա ուժով դրանորվում ե ամեն մի, նույնիսկ չնչին, առիթով:

Այն տեսակետից, վորից յես նայում եմ համագումարին, միանգամայն բացարելի և անխուսափելի յե սկզբունքային բնույթ կրող խիստ դաժան կոնֆլիկտը «չնչին» առիթով: Քանի վոր մեր համագումարում շարաւնակ տեղի ուներ խրայականների պայքար հակախրայականների դեմ, քանի վոր նրանց միջև կանոնած եյին անկայուն տարրեր, քանի վոր այս վերջինները հակախրայականների հետ միասին կաղմում եյին ձայների ½—ը (8+10=18 ձայն 51-ից, իմ հաշվով, հարկավ, մոտավոր հաշվով), —ապա միանգամայն հասկանալի յե և բնական, վոր խրայականներից՝ նրանց քեկուզ պատիկ փոքրամասնության ամեն մի անջատում հակախրայական ուղղության հաղթության հնարավորություն եր ստեղծում, և այս պատճառով առաջնում եր «կատաղի» պայքար: Այս անտեղի խիստ հարձակումների և անթույլատրելի վարմունքի արդյունք չե, այլ քաղաքական կոմբինացիաի արդյունքը: Խիստ խոսքերը չեյին, վոր քաղաքական կոնֆլիկտ եյին ստեղծում, այլ քաղաքական ընդհարման գոյությունն իր խակ համագումարի խմբավորման մեջ խիստ արտահայտություններ և հարձակումներ եր ստեղծում, —այս հակագուման մեջ ե մեր սկզբունքային հիմնական տարակարծությունը Մարտովի հետ համագումարի քաղաքական նշանակության և համագումարի արդյունքների գնահատման հարցում:

Ամբողջ համագումարի ընթացքում յերեք ամենախոշոր գեղազ յեղավ, յերբ անհշան թվով խրայականներ անջատվեցին նրանց մեծամասնությունից, —լեզուների իրավահամասարություն, կանոնագրության § 1 և ընտրություններ, —և այս բոլոր յերեք գեղաքերում ստացվում եր գագան պայքար, վորը վերջիվերջո հասցրեց կուսակցության այժմյան ծանր կրողիտին: Վորսկեսդի քաղաքականութեն խմաստավորենք այդ կրիզին ու այդ պայքարը, պետք ե քննենք համագումարում բաղկացած յերանդների քաղաքական խմբավորումները:

Պատերազմն սկսվեց ընկ. Մարտովի վիճաբանությունից բունփականների լիդեր ընկ. Լիբերի հետ (եջ 171—172): Մարտովն ապացուցում ե, վոր բավական և սկահանջել «քաղաքացիների իրավահամասարություն»: «Լեզվի ազատությունը» մերժվում ե, բայց խկույն ևեթ առաջադրվում ե «ցեղունների իրավահավասարությունը», և Լիբերի հետ միասին մարտի յե յելնում ընկ. Ցեղորովը: Մարտովը հայտարարում ե, վոր այդ ֆետիշիզմ ե, «յերբ հուետոնները պնդում են ազգությունների իրավահամասարության վրա և անիրավահավասարությունը փոխադրում են լեզվի ընազավառը: Մինչդեռ հարցը պետք ե քննել հենց այլ կողմից: Գոյություն ունի ազգությունների անիրավահավասարություն, վորն արտահայտվում ե, իմիջի այլոց, նաև նրանով, վոր վորոշ ազդի պատկանող մարդիկ զրկված են մայրենի լեզվից ողավելու իրավունքից»²⁶ (եջ 172):

Պատվամավորների խմբավորումն այս պայքարում առանձնապես պարզ ե, չնորհիվ անվանական քիեարկությունների առատության: Ամբողջ յերեք եր գրանց թիվը: Խրայական միջուկի դեմ շարունակ սարի պես կանոնած են բոլոր հակախրայականները (8 ձայն) և, ամենափոք տատանումները, սոմբողջ կենորունը (Մախովիը, Լվովը²⁷, Ցեղորովը, Պոպովը, Մեղվեղեվը, Իվանովը, Յարյովը²⁸, Բելովը, —միայն վերջին յերկուով սկզբում տատանվում եյին, մերթ ձեռնապահ մնալով, մերթ մեկ հետ ձայն տալով, և միանգամայն վորոշվեցին միայն յերբորդ քվեարկության մոտերքը): Խրայականներից բաժանվում ե մի մասը՝ պլխավորապես կովկասցիները (յերեք հոգի վեց ձայնով) —և դրա չնորհիվ վերջիվերջո գերակշռությունն ստանում ե «Փետիշիզմի» ուղղությունը: Ցեղորող քիեարկության ժամանակ, յերբ յերկու

տեղական կողմնակիցներն եւ բոլորովին պարզեցին իրենց դիրքերը, մեծամասնության խկրայականներից բաժանվեցին և հակառակ կողմին միացան յերեք կովկասցի՝ վեց ձայնով. փոքրամասնության խկրայականներից բաժանվեցին յերկուուր մերկու ձայնով — Պոսալովսկին և Կոստիչը²⁹. առաջին յերկու քվեարկության ժամանակ հակառակ կողմն ելին անցնում կամ ձեռնպահ մնում՝ Լենսկին³⁰, Ստեղանովը և Գորսկին—խկրայականների մեծամասնությունից, Դեյչը—փոքրամասնությունից: Խկրայական ուր ձայնի անջատվելը (ամբող թվից՝ 33-ից) գերակշռություն տվեց հակառակ անկայութիւնի և անկայուն տարբերի կոպակային: Այս եւ հենց համագումարի խմբավորման այն եկմնական փաստը, վոր կրկնվեց (միայն ուրիշ խկրայականների անջատումով) նաև կանոնադրության §1-ի բարերկության և ընտրությունների ժամանակ:

գ) ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

Հակառակ անկայութիւնը և «կենտրոնի» սկզբունքային անկայությունը ունելիք կերպով արտահայտվեց նույն ադրաբային ծրագրի շուրջը տեղի ունեցած վիճաբանությունների մեջ, վորոնք թիջ ժամանակ չգրավեցին համագումարից (տե՛ս արձանագր. 190—226-րդ էջերը) և զրին բավական թվով չափազանց հետաքրքրական հարցեր: Ինչպես և սպասելի յեր, արշավանքը ծրագրի դեմ ոկտում և ընկ. Մարտինովը (ընկ. Լիբերի և Յեղորովի մանր դիմումություններից հետո): Նա առաջ է քաշում հին փաստարկումը «հենց ավյալ պատմական անարդարությունն» ուղղելու մասին, վորով մենք իրեւ թե անուղղակի կերպով «սրբազործում ենք այլ պատմական անարդարություններ»³¹ և այլն: Նրա կողմն և անցնում և ընկ. Յեղորովը, վորի համար մինչև անդամ «պարզ չե, թե ինչ նշանակություն ունի այս ծրագիրը: Արդյոք այդ ծրագիր է մեզ համար, այսինքն վորոշում և արդյոք նա այն պահանջները, վոր մենք ենք առաջադրում, թե մենք կամ ենում ենք այն սպառույթար գարձնել» (!?!?): Ընկ. Լիբերը «կամենար անել նույն մատնանշումները, ինչ վոր նաև ընկ. Յեղորովը»: Ընկ. Մախովը հանգես և դալիս իրեն հատուկ վճռականությունը և հայտար-

բռում, թե «խոսողների մեծամասնությունը (?) վճռականապես չի ըմբռնում, թե ինչ և ներկայացնում առաջադրված ծրագիրը և ինչ նպատակներ և հետապնդում»: Առաջարկիվող ծրագիրը, իբր թե, «գժվար և համարել սոց-գեն աղբալային ծրագիր», նրանից «պատմական անարդարություններն ուղղելու խաղի մի ժողով հոտ և գալիս», նրա վրա նշմարվում և «գեմագովիայի և ավանդույթիվմի յերանդ»: Այս խորիմատության տեսական հաստատումը գրեհիկ մարգսիվմի այն սովորական չափազանցումն ու պարզացումն և, թե իրը խկրայականներն «ուզում են դործ տեսնել զյուղացիների» վորպես իր կազմով միասնական մի բանի հետ: իսկ վորովհետեւ գյուղացիությունը վաղուց արդեն (?) շերտավորվել և դասակարգերի, ապա միասնական ծրագրի առաջարկումն անխուսափելիորեն տանում և դեպի այն, վոր ծրագիրն ամբողջությամբ վերցրած դասնում և գեմագովիական և կյանքում գործադրելիս կդառնա ավանդուրա» (202): Ընկ. Մականը այստեղ «բերնից թոցնում ե» մեր աղբարային ծրագրի նկատմամբ շատ սոցիալ-գենուլը կը առաջանած բացասական վերաբերմունքի խկական ոլատճառը, այն սոցիալ-գենուլը կը առանք, վորոնք պատրաստ են ընդունելու «Ասկրա»-ն (ինչպես կը առանք, վորոնք պատրաստ են ընդունելու «Ասկրա»-ն (ինչպես նընդունել և նաև ինքը Մախովը), բայց բոլորովին չեն կը առատատել նրա ուղղությունը, նրա տեսական և գործնական գիրքը: Հենց մարգսիվմի զոեհկացումն և առաջացրել և առաջացնում այդ ծրագրի անընդունությունը և վոչ յերեք առանձին մասնավոր հարցերի վերաբերյալ տարակարծությունը—զոեհկացում, վոր արտահայտվում և այդ ուամունքի կիրառման մեջ մի այնպիսի բարդ և բազմակողմ յերեւույթի նկատմամբ, վորպիսին սուսական զյուղացիական տնտեսության ժամանակակից կացութաձեն և: Յեղ այսպիսի զոեհկացիական տնտեսական տեսակետի շուրջն արագործն միացան հակառակ արտահայտության տարբերի լիդերները (Լիբերը և Մարտինովը) ու «կենտրոնի» լիդերները—Յեղորովին ու Մախովը: Ընկ. Յեղորովը շիտակորեն արժանայտեց նույնպես «Ոչինական Բարօրական Պատմամբ» և նրան հարող խմբերի ու խմբակների բնորոշ գծերից մեկը, այն և—զյուղացիական շարժման նշանակության անդիք մեջ այս հանդամենքի, վոր ըմբռնողությունը, անընդունողությունն այն հանդամենքի, վոր վոչ թե այդ նշանակության զերապնահատությունը, այլ, ընդհանդամենքի, ամփելի շուտ նրա թերապնահատությունն (և շար-

ժումն ոգտապործելու ուժերի պակասությունն) և կազմել մեր սոցիալ-լրեմովկրատների թույլ կողմը դյուղացիական առաջին հոչակալավոր ապատամբությունների³² ժամանակ: «Յես հեռու յեմ խմբագրության՝ դյուղացիական շարժումով հրապուրվելուց, — ասաց ընկ. Յեղորովը, — մի հրապուրանք, վոր դյուղացիական հուզմունքներից հետո համակել են շատ սոցիալ-դեմոկրատների»: Ընկ. Յեղորովը նեղություն չիրեց միայն, դժբախտաբար, փոքրիշտանե ճշգրիտ կերպով ծանոթացնելու համագումարին, թե ինչով ե արտահայտվել խմբագրության այդ հրապուրումը, նեղություն չիրեց «Ասկրա»-ի տված գրական նյութի վերաբերուացել եր, վոր մեր աղբարային ծրագրի բոլոր հիմնական կեայինքն՝ դյուղացիական հուզմունքներից շատ առաջ: Ով յեթե մի փոքր ավելի ուշադրություն ցույց տար նրա թեորիա-կան և տակտիկական սկզբունքներին:

«Վո՛չ, դյուղացիության մեջ մենք շատ բան անել չենք կա-րող», — բացականչում ե ընկ. Յեղորովը և հետո այդ բացական-չությունը բացատրում ե վո՞չ թե այս կամ այն առանձին «հրա-պուրման» գեմ բողոքելու իմաստով, այլ մեր ամբողջ գիրքը ժիմաստով: «Այդ ել նշանակում ե, վոր մեր լողունդը չե կարող մրցել ավանդուրիստական լողունդի հետ»: Դեպի գործը ցույց տրվող անսկզբանք վերաբերմունքի խիստ բնորոշ ձևակերպում, — մի վերաբերմունք, վոր ամեն ինչ վեր և ածում զանազան կուսակցությունների լողունդների «մրցության»: Յել ինքը «բավարարված ե» այն թեորիական բացարություններով, վորոնցով մատնանշվում եր, վոր մենք հաստատուն հաջողու-վոր անհաջողություններից և վոր հաստատուն հաջողությունը (հակառակ «մրցակիցների» աղմկալի ճիշերին... մի բոպեյով) 196): Ինչպիսի՞ շփոթում ե դրսերում «բավարարվածության» վերաբերյալ այս վաստահայումը և հին եկոնոմիզմից ժառանգած գոեհիկ սկզբունքների անհապաղ կրկնությունը. եկոնոմիզմի հա-

մար «լոգունդների մրցությունը» լուծում եր վո՛չ միայն ագրա-րային, այլև ամբողջ ծրագրի և տնտեսական ու քաղաքական պայքարի ամբողջ տակտիկայի բոլոր հարցերը: «Դուք չեք հար-կագրի բատրակին—ասում եր ընկ. Յեղորովը—հարուստ դյու-ղացու հետ կողք-կողքի կովելու այն ոտքեզկանների համար, վո-րոնց արդեն վոչ փոքր մասը դանվում ե այդ հարուստ դյուղա-ցու ձեռքին»:

Դարձյալ նույն պարզացումը, վոր անտարակույս աղ-դակից ե գալիս մեր ոպորտունիստական եկոնոմիզմին, վորը պնդում եր, թե անհնարին ե ոլրուետարին «Հարկադրել» կովելու այն բանի համար, ինչի վոչ փոքր մասը գտնվում ե բութուա-զիայի ձեռքին և ե՛լ այլելի մեծ մասը նրա ձեռքը կընկնի ապա-գայում: Դարձյալ նույն վուլգարացումը, վոր մոռանում ե բատ-րակի և հարուստ գյուղացու միջև յեղած ընդհանուր-կապիտա-լիստական հարաբերության ոռուական առանձնահատկություննե-րը: Ոտքեզկանները ճնշում են այժմ, իրոք ճնշում են նաև բատ-րակին, վորին կարիք չկա «Հարկադրելու», վոր կովել՝ սարկու-թյունից ապատաղբելու համար: «Հարկադրել» ստիպված ենք ինտելիգենտներից վոմանց—Հարկադրել, վոր ավելի լայնորեն նայեն իրենց ինտելիգենտի վրա, հարկադրել, վոր կոնկրետ հար-ցերի քննության ժամանակ հրաժարվեն շարժմներից, հարկա-դրել, վոր հաշվի առնեն պատմական կոնյունկտուրան, վոր բար-գացնում և ձեռք նորատակները: Այո՛, միայն այն նախապաշտմունքը, թե զյուղացին հիմար ե, — նախապաշտ-մունք, վոր, ընկ. Մարտովի իրավացի գիտողությամբ (եջ 202), սպլրում ե ընկ. Մալովի և աղբարային ծրագրի այլ հակառա-կորդների ճառերի մեջ, — միայն նախապաշտմունքն ե բացա-տրում մեր բատրակի կենցաղի ուեալ պայմանների մոռացումն այդ հակառակորդների կողմից:

Պարզացնելով հարցը մինչև բանվոր ու կալիտավիստ մերկ հակադրումը, մեր «կենարունի» ներկայացուցիչները շանում եյին, ինչպես ընդունված ե, իրենց նեղմատությունը գցել մուժիկի վրա: «Հենց այն պատճառով, — ասում եր ընկ. Մախովը, — վոր յես մուժիկին խելոք եմ համարում իր նեղ դասակարգային տեսակետի չափով, յես կարծում եմ, վոր նա կողմնակից կլինի գրավելու և բաժանելու մասր-բուրժուական իդեալին»: Այստեղ

սինթերեորեն իրար են խառնվում յերկու բան. մուժիկի՝ վորպիս մանր բուրժուայի դասակարգային տեսակետի բնութագիրը, և այդ տեսակետի նեղացումը, այն «նեղ չափի» վերածելը: Ահա Հենց այդ վերածումն ել Յեղորովների և Մախովների սիրալն և (ճիշտ այնպէս, ինչպես պրոլետարիատի տեսակետը «նեղ չափի» վերածելն եր Մարտինովների և Ակիմովների սիմալը): Մինչդեռ թե՛ տրամաբանությունը, թե սպամությունն ուսուցանում են, վոր մանր-բուրժուական դասակարգային տեսակետը կարող ե ավելի կամ պակաս նեղ, ավելի կամ պակաս առաջադիմական լինել հենց մանր բուրժուայի դրության յերկության պատճառով: Յեվ մեր ինդիքը վոչ մի դեպքում չի կարող լինել այն, վոր մեր ձեռքերը թուլանան մուժիկի նեղմուռթյան («Հիմարության») առիթով կամ մուժիկի վրա իշխող «նախապաշարմունքի» պատճառով, այլ, ընդհակառակը, պետք ե լինի այն, վոր անդադար լայնացնենք մուժիկի տեսակետը, աջակցենք նրա բանականության հաղթությանը ընդդեմ նրա նախապաշարմունքի:

Վուլգար-«մարքսիստական» տեսակետը ուսուական աղբարային հարցի նկատմամբ իր գագաթնակետային արտահայտությանը հասակ «Աքրա»-ի հին խմբագրության հալատարիմ պաշտպան ընկ. Մախովի սկզբունքային ճառի յեղբափակման խոռքերի մեջ: Իզուր չեր, վոր այդ խոռքերը դիմավորվեցին ծափահարությամբ... ճիշտ ե, հեղնական ծափահարությամբ: «Յես չդիմեմ, իհարկե, ինչն անվանենք պատուհաս»—ասում ե ընկ. Մախովը, վրուվված՝ Պլեխանովի այն մատնանշումից, թե մեզ ամենեին չի վախեցնում շարժումը հոգուտ սև վերաբաժնման (черный передел), թե՝ մենք չե, վոր պետք ե կասեցնելինք այդ առաջադիմական (բուրժուական-առաջադիմական) շարժումը:— «Բայց այդ հեղափոխությունը, յեթե կարելի յե այդպես անվանել այն, կլինի վոչ հեղափոխական: Յես ավելի ճիշտ կասեյի, վոր այդ կլինի արդեն վոչ թե հեղափոխություն, այլ ունակցիա (ծիծառ), բունափ նման հեղափոխություն... Նման հեղափոխությունը մեզ հետ կնետի և վորոշ ժամանակ կպահանջի, վորպեսզի մենք նորից համենք այն գրության, վոր այժմ ունենք: Իսկ մենք այժմ շատ ավելին ունենք, քան Փրանսական հեղափոխության ժամանակ (հեգնական ծափահարություններ), մենք ունենք սոցիալ-դեմոկրատական կուսակցություն (ծիծառ):»

Մենք տեսնում ենք, այսպիսով, վոր աղբարային ծրագրի հարցած զուտ սկզբունքային հարցերի նկատմամբ ել խոկույն ևեթ յերեան յեկավ մեղ արդեն ծանոթ խմբավորումը: Հակախսկրայականները (8 ձայն) արշավանքի յևն զնում հանուն վուլգար մարքսիզմի, նրանց հետեւից քարշ են գալիս «կենտրոնի» առաջնորդները, Յեղորովներն ու Մախովները, շարունակ շփոթվելով, մոլորվելով ու հանգելով մինենույն նեղ տեսակետան: Ուստի միանգամայն բնական ե, վոր աղբարային ծրագրի միքանի կետերի քվեարկությունը տալիս ե 30 և 35 ձայն թեր (եջ 225 և 226), այսինքն հենց այն մոտավոր թիվը, վոր մենք տեսամբ թե՛ բունդի հարցի քննության տեղի վերաբերյալ վեճի ժամանակ, թե՛ կաղմ. կոմ.-ի միջադեպի, թե՛ «Յօհնի Բանոչի»-ի փակման հարցի շուրջը տեղի ունեցած վիճաբանության միջոցին: Բավական ե, վոր արդեն սովորական ու սահմանված շաբանի ըրջանակներից փոքրիշատե գուրս յեկող մի հարց բարձրանա, վորը փոքրիշատե պահանջում ե Մարքսի թեորիայի ինքնուրույն կիբառում յուրատեսակ և նոր (գերմանացիների համար նոր) սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերմամբ,—և իսկույն ևեթ խնդրի բարձրության վրա կանգնելու ընդունակ խկրայականները կազմում են ձայների միայն ^{3/5}-ականը, իսկույն ևեթ ամբողջ «կենտրոնը» թեքվում ե կիբերների ու Մարտինովների կողմը:

Սպրարային ծրագրի շուրջը տեղի ունեցած վիճաբանություններից պարզ յերեւում ե իսկրայականների պայքարն ընդգեմ համագումարի ավելի քան ^{2/5} -ի: Կովկասյան պատգամալորներն այսուել միանգամայն ճիշտ դիրք եյին բռնել—խոչըր չափով, հավանորեն, չնորհիս այն բանի, վոր ճորտատիրության բազմաթիվ մնացորդների տեղական ձեւերի մերձավոր ծանոթությունը նախազգուշացնում եր նրանց արստրակտ-աշակերտական մերկ հակադրումներից, վորոնք բավարարում եյին Մախովներին: Մարտինովի ու կիբերի, «Մախովի ու Յեղորովի» դեմ ծառացան թե՛ Պլեխանովը, թե՛ Գուլենը (վորը հաստատում ե, «վոր «Պյուղում կատարելիք մեր աշխատանքի վերաբերյալ այդպիսի պես սիմիստական հայացք»... ինչպես ընկ. Յեղորովի հայացքն ե... նրան «վիճակվել ե հաճախ պատահել Ռուսաստանում գործող ընկերների մեջ»), թե՛ Կոստրովը, թե՛ Կարսկին ³³, թե՛ Տրոցկին:



Վերջինս ճիշտ և մատնանշում, վոր ազգարային ծրագրի քննադատների «բարյացակամ խորհուրդներից» «չափազանց շատ ֆիլիսոփրության» հոտ և գալիս»:

Թուելով «Փիլիսոփերության» հոտ փչող պատճառաբանությունների մասին, ընկ. Տրոցկին մատնանշեց, վոր «Պալիք հեղափոխական ժամանակաշրջանում մենք պետք են մեզ կապենք զյուղացիության հետ»... «Այդ խորհի առաջ Մախովի և Յեղորովի ոկեպտիցիզմն ու քաղաքական «հեռատեսությունն» ամեն մի կարձատեսությունից ավելի վնասակար են»³⁴: Փոքրամասնությանը պատկանող մյուս խորայական ընկ. Կոստիչը շատ դիպուկ կերպով մատնանշեց, վոր ընկ. Մախովն «անվտահ են իր և իր սկզբունքային կայունության» վերաբերմամբ, մի բնութագիր, վոր միանդամայն համապատասխանում են մեր «կենորոնին»: «Պեսսիմիզմի հարցում ընկ. Մախովը միացավ ընկ. Յեղորովին, թեալետև նրանց միջև յերանդներ կան, —շարունակում են ընկ. Կոստիչը:—Նա մոռանում են, վոր արդեն ներկայումս սոցիալ-դեմոկրատներն աշխատում են գյուղացիության մեջ, արդեն դեկավարում են նրանց շարժումն այն չափով, ինչ չափով հասրավոր ե այդ: Յեշ իրենց այդ պեսսիմիզմով նրանք նեղացնում են մեր աշխատանքի թափը» (եջ 210):

Վորպեսզի վերջացնենք համակումարում տեղի ունեցած ծրագրային վիճաբանությունների հարցը, արժե նշել նույնպես ոպողիցիոն հոսանքներին ողնելու վերաբերյալ կարծ վիճաբանությունները: Մեր ծրագրի մեջ պարզ ասված ե, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն ողնում ե «ամեն մի ոպողիցիոն և հեղափոխական շարժման», վոր ուղղված ե Ռուսաստանում գոյացուն ունեցող հասարակական ու քաղաքական կարգի դեմ»: Թվում ե, թե այս վերջին վերապահությունը բավականաչափ ճշգրիտ և ցույց տալիս, թե մենք ոպողիցիոն հոսանքներից հատկապես վորոնց ենք ողնում: Այնուամենայնիվ, մեր կուսակցության մեջ վաղուց հետեւ կաղմավորված յերանդների տարբերությունն իսկույն յերեան յեկալ նաև այսինք, վորքան ել դժվար լիներ յենթաէրել, թե գեռնո հնարավոր են «տարակուսանքներ ու թյուրիմացություններ» մի հարցի առթիվ, վոր այդ աստիճան ծամծմված ե: Ակներեւ ե, վոր բանը հենց թյուրիմացություն-

ները չելին, այլ յերանգները: Մախովը, Լիբերը և Մարտինովն խկույն ևեթ ահազանդ խիեցին...

Մախովը գարձյալ սկսում ե մարքորզմի վուլդար ուարզացումից: «Մեղանում միակ հեղափոխական դասակարգը պրոլետարիատն ե՝ ՀՀՀայտարարություն և նա և այս արդարացի դրույթից իսկույն ևեթ անում և անարդարացքից յեղակացություննենացածները հենց ենպես են, յերկրորդականն (ընդհանուր ծիծառ) ... Այս, յերկրորդականն, և միայն կամենում են միքիչ ոգտովել: Յես դեմ եմ նրանց ոգնելուն» (եջ 226): Իր գիրքի աննման ձևակերպումն ընկ. Մախովի կողմից շատերին (նրա կողմանակիցներից) շփոթեցրեց, բայց ըստ եյության նրան միացան թե՛ Լիբերը, թե՛ Մարտինովը, առաջարկելով հանել «ոպողիցիոն» խոսքը կամ սահմանափակել այն «ղեմոկրատիկ-ոպողիցիոն» բառերի հավելումով: Մարտինովի այդ ուղղման դեմ արդարացի կերպով ծառացավ Պլեխանովը: «Մենք պետք ե քննադատենք լիբերալներին, —առաջ նա, —մերկացնենք նրանց կիսատությունը: Այդ ճիշտ ե... Բայց բոլոր այլ շարժումների նեղությունն ու սահմանափակությունը մերկացնելով, բացի ոոցիալ-դեմոկրատականից, մենք պարտավոր ենք պարզաբանել պրոլետարիատին, վոր, արտուրուտիզմի համեմատությամբ, նույնիսկ ընդհանուր ընտրական իրավունք չտվող սահմանադրությունը մի քայլ ե դեպի առաջ և վոր այդ պատճառով նա չպետք ե գոյություն ունեցող կարգը գերադասի այդպիսի սահմանադրությունից»: Ընկերներ Մարտինովը, լիբերն ու Մախովը չեն համաձայնում դրան և տաշտում են իրենց գիրքը, վորի վրա հարձակվում են Ակսելրոդը, Ստարովերը, Տրոցկին և մի անդամ ևս Պլեխանովը: Ընդօմին ընկ. Մախովը մի անդամ ևս կարողացավ հարվածել ինքն իրեն: Սկզբում նա առաջ, թե մնացած դասակարգերը (բացի պրոլետարիատից) «հենց ենպես են» և «նա դեմ ե նրանց ոգնելուն»: Հետո նա վողորմած դարձավ և ընդունեց, վոր, «ըստ եյության սեակցիոն լինելով, բուրժուազիան հաճախ լինում ե հեղափոխական, —յերբ, որինակ, խոսքը վերաբերում ե ֆեոդալիզմի և նրա մնացորդների դեմ մղվող արայքարին»: «Բայց կան խմբեր, —շարունակեց նա, —վորոնք միշտ (?) ուսակցիոն են, —այդպես են արհեստավորները»: Ահա թե վո՞րպիսի գոհարների հասան սկզբառունքային տեսակետից մեր «կենտրոնի» նույն այն լիդերները, վորոնք հետո վրիփուրը բերաններին պաշտպանում եյին հին խըմ-

*) Ֆիլիսոփր—սահմանափակ մարդ, որիվատեւ:—Խմբ:

բազրությանը: Հենց արհեստավորներն եյին նույնիսկ Արևմբա-
տյան Յելքովայում, փորաեղ համքարամկան կազմակերպու-
թյանն ախքան ուժեղ եր, վոր—ինչպես և այլ մանր բուր-
ժուաները քաղաքներում—առանձին հեղափոխականություն եյին
ցուցահանում արսոլուտիզմի անկման դարաշրջանում: Հենց
ուսւասոցիս արհեստավորների համար առանձնապես անհեթեթություն
և առանց մտածելու կրկնել այն, ինչ վոր արևմտյան ընկերներն
առում են այժմյան արհեստավորների մասին այն դարաշրջանում,
վորը մի դար և կես դար հեռու յէ արսոլուտիզմի անկումից:
Թուաստանում արհեստավորների ուեակցիսնությունը բուրժու-
ապիայի համեմատությամբ քաղաքական հարցերի բնագավառում
վոչ այլ ինչ և, բայց յեթե շարլոնաբար սերտած ֆրազ*:

Ե) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

Համագումարը ծրագրից անցավ կուսակցության կանոնադրու-
թյան (մենք մի կողմ ենք թողնում Կ.Ռ.—ի վերաբերյալ հարցը և
պատգամագորների զեկուցումները, վորոնք, գժբախտաբար, չեյին
կարող բավարար ճեռվ ներկայացվել պատգամագորների մեծա-
մասնության կողմից): Կարիք ել չկա ասելու, վոր կանոնա-
դրության հարցը բոլորին համար ահազին նշանակություն ու-
ներ: Իսկամատեա, չե՞ վոր «Ասկրա»-ն հենց սկզբից հանդես յե-
կամի վոչ միայն վորպես դրական որդան, այլև վորպես կազմա-
կերպական բնիծ: Չորրորդ համարի խմբադրամկան հոգվածում
(«Ինչի՞ց սկսենք») «Ասկրա»-ն մի ամբողջ կազմակերպական պլան
առաջադրեց և այդ պլանը սիստեմատիկ կերպով, անշեղ կիրա-
ռում եր յերեք տարբա ընթացքում: Յերբ կուսակցության յեր-
կրորդ համագումարը կենտրոնական Որդան ճանաչեց «Աս-

* «Կենտրոնի» նույն խմբի մյուս միջեր ընկ. Յեղորովն ուղղվցիսն հո-
սանքներին ողնություն հարցի առթիվ արտօնայալեց այլ տեղում, Ականելորդի
առթիվ, վոր վերաբերում եր սոցիալիստ-հեղափոխականներին
(Եջ 359): Էնկ. Յեղորովը «հակասություն» նկատեց ծրագրի՝ ամեն մի ողո-
ղցիքն և հեղափոխական շարժման ոգնելու պահանջի և թի՛ զեսի սոցիալիստ-
հեղափոխականները, թի՛ զեսի միմբալները ցույց տրվող բացասական վերա-
բերմանք մեջ: Այլ ճեռվ և մի փոքր այլ կողմից մոռնեալով հարցին՝ ընկ. Յե-
ղորովն այսուղ ցուցահանց մարքողմի նույն նեղ ըմբռնողությունը և նույն
անկայուն կիսաթշնամական վերաբերմունքը դեսի «Ասկրա»-յի (իր «ընդու-
նած») գերը, ինչպես նաև ընկերներ Մալովը, լերը և Մարտինովը:

կրա»-ն, Համապատասխան բանաձեկ (Եջ 147) պատճառաբանման
յերեք կետերից յերկուսը նվիրված եյին հենց այդ կազմակեր-
պական պլանին և «Ասկրա»-յի կազմակերպական գաղտափար-
եներին—նրա դերը կուսակցական գործնական աշխատանքի դեկա-
վարման մեջ և զեկավար դերը միավորիչ աշխատանքում: Աւստի
միանդամայն բնական և, վոր «Ասկրա»-յի աշխատանքը և կու-
սակցական կազմակերպության ամբողջ գործը, կուսակցության
փաստական վերականգնման ամբողջ գործը չեր կարող ավարտված
համարվել, յեթե ամբողջ կուսակցությունը չընդուներ և պաշտո-
նապես չհաստատեր կազմակերպական վորոց գաղափարներ: Այդ
խնդիրն ել հենց պետք եր իրազործեր կուսակցության կազմա-
կերպական կանոնադրությունը:

Այն հիմնական գաղափարները, վոր «Ասկրա»-ն ձգտում եր
գարձնել կուսակցական կազմակերպության հիմքը, եյատիս հե-
տեւյալ յերկու գաղափարին եյին հանդում: Առաջինը, ցենտրա-
լիզմի գաղափարը, սկզբունքորեն վորոշում եր բոլոր մասնա-
վոր և մանրակրկիտ կազմակերպական հարցերի լուծման յեղա-
նակը: Յերկրորդը—գաղափարապես զեկավարող որդանի, լրա-
գրի, հատուկ դերը, հաշվի յեր առնում հենց ուսուական սոցիալ-
գեմոնիկատական բանվորական շարժման ժամանակամուր և ա-
ռանձնահատուկ կարիքները քաղաքական ստրկության իրադրու-
թյան մեջ, այն պայմանով, վոր արտասահմանում ստեղծվի հե-
ղափոխական գրոհի սկզբնական գործողության բազա: Առաջին
գաղափարը, վորպես միակ սկզբունքային գաղափար, պետք ե-
տուգորեր ամբողջ կանոնադրությունը: յերկրորդը, վորպես տեղի
և գործողության յեղանակի ժամանակամուր հանդամանքների
ծնունդ մասնավոր գաղափար, արտահայտվում եր թվացոյ հա-
հանջով ցենտրալիզմից, յերկու կենտրոն՝ Կ. Ռ. և Կենտ. Կոմ.
ստեղծելով: Կուսակցության իսկական կազմակերպության այս
յերկու հիմնական գաղափարներն ել յես զարդարել եմ թե՛ «Աս-
կրա»-յի խմբադրամկան՝ հոգվածում (Խ4)—«Ինչի՞ց սկսենք» և
թե՛ «Ի՞նչ անել» աշխատության մեջ, ու վերջապես, մանրամատն
պարզաբանված են զերեթե կանոնադրության ճեռվ «Նամակ ընկե-
րոջ»-ում: Եյատիս միայն խմբադրամկան աշխատանքն եր մնում,
վորպեսպի ճեակերպվեն կանոնադրության պարագրաֆները, վոր
պետք եր մարմնացներ կյանքի մեջ հենց այդ գաղափարները,

յիթ «Ասկրա»-յի ընդունումը չեր մնում թղթի վրա, սասկ պայմանական ֆրազ չեր:

Յ) ՎԻՃԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԵՆՏՐԱԼԻՉՄԻ ՄՊԱՀ
ՄԻՆՉԵՎ, ԽՍԿՐԱՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԵԶ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՇ
ՊԱՌԱԿՑՈՒՄԸ

Նախքան կանոնադրության § 1-ի ձևակերպման իրոք հետաքրքրական հարցին անցնելը, մի հարց, վոր անտարակույս դրսմորում և հայացքների տարրեր յերանդները, մի փոքր ել կանգ առնենք կանոնադրության վերաբերյալ այն համառոտ ընդհանուր վիճաբանությունների վրա, վորոնք դրազեցրին համագումարի 14-րդ նիստը և 15-րդի մի մասը: Ընկ. Մարտովը միացավ (Եջ 157) իմ կազմակերպական հայացքներին, վերապահություն անելով միայն յերկու անհամաձայնության մասին մասնավոր հարցերամ: Ընդհակառակը, թե՛ հակախսկրայականները, թե՛ «կենտրոնն» իսկույն ևեթ արշավանք սկսեցին «Ասկրա»-յի ամբողջ կազմակերպական պլանի յերկու հիմնական գաղափարի (և, հետևապես, ամբողջ կանոնադրության) վեմ ել, թե՛ ցենտրալիզմի դեմ, թե՛ «յերկու կենտրոնի» վեմ: Ընկ. Լիբերն իմ կանոնադրությունն անվանեց «կազմակերպված անվըստահություն», դեցենտրալիզմ տեսավ յերկու կենտրոնի մեջ (ինչպես և ընկ. Պոպովն ու Յեգորովը): Ընկ. Ակիմովը ցանկություն հայտնեց, վոր ավելի լայն սահմանի տեղական կոմիտեների իրավասության շրջանը, մասնավորապես հենց նրանց վերապահվի «իրենց կազմը փոփոխելու իրավունքը»: «Անհրաժեշտ և նրանց գործունեյության ավելի մեծ աղատություն տրամադրել... Տեղական կոմիտեները պետք եւ ընտրվեն ավշալ վայրի ակտիվ աշխատազների կողմից, ինչպես Կ. Կ.-ն ընտրվում և Ռուսաստանի բոլոր ակտիվ կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: Իսկ յեթե այդ ևս չի կարելի թույլ տալ, ապա թող սահմանափակվի տեղական կոմիտեների համար Կ.Կ.-ի կողմից նշանակվող անդամների թիվը...» (158): Ընկ. Ակիմովը, ինչպես տեսնում եք, պատճառաբանություն և հուշում «ցենտրալիզմի հիպերարտֆիայի դեմ»,

բայց ընկ. Մարտովը խուլ եւ մնում այս հեղինակավոր մատնանշումների հանդեպ, քանի դեռ կենտրոնների կազմի հարցում կրած պարտությունը չի դրդում նրան Ակիմովի հետեւց գնալու: Այն ժամանակ դեռևս «Հրեշավոր ցենտրալիզմի» դեմ պայքարում եյին նրանք միայն, ում համար ակներեռեն անշահավատ եր «Ասկրա»-յի ցենտրալիզմը, պայքարում եյին Ակիմովը, Լիբերը, Գոլդբերգը, նրանց հետեւց գնում եյին զդուշաբար, իրենց շուրջը նայելով (այնպես, վոր միշտ կարելի լինի հետ շրջել) Յեղորովը (տես Եջ 156 և 272) և այլն: Այն ժամանակ դեռևս պարզ եր կուսակցության ահաղին մեծամասնության համար, վոր հենց «Բունդի», «Южный Рабочий»-ի և այլոց ծխական, խմբակային շահերն են բողոք առաջացնում ցենտրալիզմի դեմ:

Վերցրեք, որինակ, ընկ. Գոլդբերգի ճառը (160—161): Նա արտնջում եւ իմ «Հրեշավոր» ցենտրալիզմի դեմ, վորն իրեւ թե տանում և դեպի ստորին կազմակերպությունների «վոչնչացումը», «ամբողջովին տուգորված եւ կենտրոնին անսահման իշխանություն, ամեն ինչի անսահման միջամտելու իրավունք հատկացնելու ձգտումով», կազմակերպություններին վերապահում և «մի իրավունք միայն—անտրատունջ հնազանդվելու այն ամենին, ինչ վոր կհրամայվի վերակից» և այլն: «Նախազծով ատեղծվող կենտրոնը զատարել տարածության մեջ կմնա, նրա շուրջը չի լինի վոչ մի պերիֆերիա, այլ ինչ-վոր անձնե մասսա, վորի մեջ շարժվելու յեն նրա կատարողական գործակաները»: Համագումարում ծիծաղում եյին «Բունդի» վրա, վորը, կովելով մեր ցենտրալիզմի դեմ, ինքն իր մոտ կենտրոնին ե՛լ ավելի վորոշակի ուրագածված չսահմանափակված իրավունքներ եւ արամադրում (թեկուզ, որինակ, անդամներ մտցնելու և արձակելու, նույնիսկ պատգամավորներին համագումար չթողնելու իրավունքը):

Երեկու կենտրոնի հարցում ել խմբավորումը պարզ գրաելովից բալոր իսկրայականների դեմ կանգնած են թե՝ Լիբերը, թե՝ Ակիմովը, թե՝ Պոպովը, թե՝ Յեգորովը: Այն կազմակերպական գաղափարներից, վոր միշտ զարդացնում եր եին «Ասկրա»-ն (և վորոնք խոսքով հավանություն եյին գտել ընկ. Պոպովների և Յեգորովների կողմից), յերկու կենտրոնի պլանը բղիում եր ինքնըստինքյան: Հին «Ասկրա»-յի քաղաքականու-

թյունը դեմ եր գնում «Южный Рабочий»-ի սլահներին, զուգացելով հանրամատչելի որդան ստեղծելու և նրան փաստորեն դերակառող որդան դարձնելու պլաններին։ Ահա թե վորտեղ ե առաջին հայացքից տարորինակ այն հակասության արմատը, վոր մի կենտրոնի, այսինքն իրրև թե ավելի մեծ ցենտրալիզմի կողմեակից են բոլոր հակախկրայականներն ու ամրող ճահիճը։ Իհարկե, կային (ժանավանդ ճահիճի մեջ) այնպիսի պատղամալորներ ել, վորոնք հազիվ թե պարզ հասկանում ելին, թե ուր կտանեն և պետք ե տանեն, իրերի ընթացքի ըերումով, «Южный Рабочий»-ի կաղմակերպական պլանները, բայց նրանց հակախոկրայականների կողմն եր հրում արդեն հենց իրենց անվճռական և ենքն իրեն չվստահող բնավորությունը։

Կանոնադրության վերաբերյալ այս վիճաբանությունների (վորոնք նախորդում ենին խկրայականների սպառակտմանը) ժամանակ իսկրայականների արտասանած ճառերից առանձնապես նշանավոր են ընկ. ընկ. Մարտովի («միացում» իմ կաղմակերպութեան գաղափարներին) և Տրոցկու ճառերը։ Վերջինն այսպես պատասխանեց ընկ. ընկ. Ակիմովին ու Լիբերին. «Կանոնադրությունը, ասում եր նա (ընկ. Ակիմովը), բավականաչափ ճշուրաց չի սահմանում կ. կ. մի իրավասության ըրջանը։ Յև չեմ կարող համաձայնել նրանց հետ։ Բնդհակառակը, այդ սահմանումը ճշուրու ե և նշանակում ե՝ վորչափով կուսակցությունն ամբողջություն, անհրաժեշտ ե ապահովել նրա վերահսկողությունը տեղական կոմիտեների վերաբերմամբ։ Ընկ. Լիբերն ասաց, վոր կանոնադրությունը, իմ արտահայտությունը գործածելով, «կաղմակերպած անվատահություն» ե։ Այդ ճիշտ ե։ Բայց այդ արտահայտությունը յես գործածեցի «Բունդի» ներկայացուցիչների առաջարկած կանոնադրության վերաբերմամբ, վոր «կաղմակերպված վայստահություն» եր ներկայացնում կուսակցության մի ժամանակմից ամրող կուսակցության նկատմամբ։ Իսկ մեր կանոնադրությունը կաղմակերպված անվատահություն ե կուսակցության կողմից դեպի նրա բոլոր մասերը, այսինքն՝ վերահսկողությունը բոլոր տեղական, ըրջանային, ազգային և այլ կաղմակերպությունների նկատմամբ»³⁵ (158)։

Բ) ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱԳՐԱՖԸ

Ծանոթագրության մեջ բերում ենք * այն այլապան ձեւակերպումները, վորոնց պատճառով հետաքրքրական վիճաբանությունները բորբոքվեցին համագումարում։ Այդ վիճաբանությունները գրեթե յերկու նիստ զրազեցրին և վերջացան յերկու անվանական քվեարկությամբ (ամբողջ համագումարի ընթացքում, յեթե չեմ սխալվում, յեղել ե միայն ութ անվանական քվեարկություն, վորոնք կիրառվում եյին միայն առանձնապես կարեար գեազքերում՝ չնորհիվ ժամանակի այն ահազին կորսորի, վոր այդ քվեարկություններն եյին առաջացնում)։ Ծոշափլած եր, անուարակույց, սկզբունքային հարց։ Համագումարի հետաքրքրությունը գեափի վիճաբանությունները հօկայական եր։ Քվեարկությանը մասնակցում եյին բոլոր պատգամավորները—Հազվագել յերեսույթ մեր համագումարում (ինչպես և ամեն մի մեծ համագումարում), վոր հավասարապես վկայում և վիճաբանուղների շահագրգումածության մասին։

Հարց ե ծագում, ի՞նչն եր վիճելի հարցի եյությունը։ Յես արդեն ասացի համագումարում և հետո հաճախ կրկնել եմ, վոր «ամեննեին այնքան եյական չեմ համարում մեր տարածայնությունը (ըստ § 1-ի), վորպեսզի նրանից կախված լինի կուսակցության կյանքը կամ մահը։ Կանոնադրության վատ կետից մենք ամեննեին ել չենք կորչի» (250)։ Այդ տարածայնությունն ինքնըստինքան, թեակետ և գրսեորում և սկզբունքային յերանդները, վոչ մի կերպ չեր կարող առաջացնել այն տարակարծությունը (փաստորեն, յեթե խոսենք առանց պայմանականությունների, այն պառակտումը), վոր ստեղծվեց համագումարից

* § 1-ը իմ նախագծի մեջ. «Կուսակցության անդամ և համարվում ամեն գործ, ով ընդունում է նրա ծրագիրը և կուսակցության ողջում թե՛ նյութական միջոցներով և թե՛ աննական մասնակցությամբ կուսակցական կաղմակերպված մեկում»։

§ 1-ը այն ձեւակերպմամբ, վոր համագումարում առաջարկեց Մարտովը և ընդունվեց համագումարի գողմից։ «Բուռ. Սոց.-Դեմ. մ-ն. Կուսակցության անդամ և համարվում ամեն վոր, ով ընդունում է նրա ծրագիրը, կուսակցության ողջում և նյութական միջոցներով և կանոնավոր անհնական աշակեցության և ցույց տալիս նրան կաղմակերպություններից վորեն մեկի գեկայագրությամբ»։

Հետո : Բայց ամեն մի փոքրիկ տարածայնություն կարող է մեծ դաշնակ, յեթե պնդենք նրա վրա, յեթե առաջին պլանը քաշենք այն, յեթե մեծարկենք այդ տարածայնության բոլոր արմատների և բոլոր ճյուղերի պրապումին : Ամեն մի փոքրիկ տարածայնություն կարող է ահազին նշանակություն ստանալ, յեթե նա յելակետ ծառայի շրջադարձի համար գեպի վորոշ սխալ հայացքներ և յեթե այդ սխալ հայացքները միանան, նոր ու լրացուցիչ տարակաթժությունների շնորհիլ, անիշխանական դործողությունների հետ, վարոնք պառակաման են հասցնում կուսակցությունը :

Հենց այդպես եթ բանը նուև ովյալ գեպքում : Այժմ հարցն արդեն դրված է այսպես . անդրադարձա՞ն արդյոք Ակսելրոդի կողմից պաշտպանվող՝ Մարտովի ձևակերպման մեջ նրա (կամ նրանց) անհայունությունը, յերերունությունն ու քաղաքական ձարձրությունը, ինչպես արտահայտվում եյի յես կուսակցության համագումարում (333), նրա (կամ նրանց) շեղումը գեպի ժորեսիզ և անարխիզմ, ինչպես Պլեխանովն եր կարծում Լիզայի համագումարում (102 և Լիզայի մյուս արձան) : Կամ Պլեխանովի կողմից պաշտպանված իմ ձևակերպման մեջ անդրադարձե՞լ ե արդյոք ցենտրալիզմի սխալ, բյուրոկրատական, Փորձավառական, պոմպադուրային, վոչ-սոցիալ-գեմոկրատական ըմբռումը : Ռազբունիզմ և անարխիզմ, թե՞ բյուրոկրատիզմ և փորմալիզմ—այդպես ե դրված հարցն այժմ, յերբ փոքրիկ տարակաթժունը դարձավ մեծ տարածայնությունն : Յեզ մենք պետք և Ալյափի ունենանք հարցի հենց այս,—դեպքերի կողմից բոլորին վզին փաթաթված, —դրումը իմ ձևակերպման թեր և դեռ յեղած փաստարկումներն ըստ եյուրյան քննարկելու ժամանակ :

Սկզբնեա այդ փաստարկումների քննությունը 4ամաղումարի վիճարանությունների վերլուծությունից : Առաջին ճառը, ընկ-Յեղորդինը, հետաքրքրական և նրանով միայն, վոր նրա վերաբերմանը (ոռ լիւե, ինձ համար պարզ չե գեռես, յես դեռես չփառեմ) վորտեղ և ծշմարտությունը) շատ բնորոշ ե շատ պատգամաթիմների վերաբերմունքի նկատմամբ, վորոնց համար հեշտ չերտի համել իրոք նոր, բավականին բարդ և զետալ, հարցից : Հետեւայ հասը, ընկ . Ակսելրոդինը, արդեն միանդամից հարցը

զնում և սկզբունքորեն : Դա առաջին սկզբունքային, ամելի քիչ կլինի նույնիսկ առել՝ ընկ . Ակսելրոդի առհասարակ առաջին ճառն և համաղումարում, և դժվար ե առանձնապես Գաֆոզ համարել նրա գերյուսը ախրահռչակ «Որոֆեսորով» : «Ես կարծում եմ, վոր մենք պետք ե , —առաջ ընկ . Ակսելրոդը, —սահմանագծենք կուսակցություն և կազմակերպություն հասկացողությունները : Իսկ այսուղ այդ յերկու հասկացողությունները խանմլում են : Այդ խառնումը վտանգվագոր ե : Այս և առաջին փաստարկումն ընդդեմ իմ ձևակերպման : Ավելի մոտ զննեցեք այն : Յեթե յես առում եմ, վոր կուսակցությունը պետք ե լինի կազմակերպությունների* գործար (և վո՞չ թե հասարակ թվաբանական գործար, այլ կոմպլեքս), ապա մի՞թե այդ նշանակում ե , թե յետ վաստակում եմ» կուսակցություն և կազմակերպություն հասկացողությունները : Իւարկի, վո՞չ : Եւս ուրանով միանդամայն պարզ ու ճշգրիտ արտահայտում եմ իմ ցանկությունը, իմ պահանջը, վոր պես կուսակցությունը, վորպես դասակարդի առաջարկոր ջոկատ, ներկայացնի ըստ հնարավորության սպելի կազմակերպված մի բան, վորպեսզի կուսակցությունն իր մեջ ընդունի միայն այնպահ տարրեր, վորոնք քույլ են տալիս կազմակերպվածության պիտի առաջարկությունը, վորոնք քույլ են տալիս կազմակերպության պիտի առաջարկությունը : Ընդհակառակը, իմ ընդդիմախոսն և կուսակցություն մեջ խառնում կազմակերպված տարրերն անկազմակերպ-

* «Կաղմանկերպություն» բառը զործ ե ածվում սովորաբար յերկու իմաստով—լայն և նեղ : Նեղ իմաստով այն նշանակում է մասունքային կունկիսի տունանձն բյիլ, այնպիսի կունկիսի, վորը թեկուզ նվազագույն չափով ձևասանձնեան բյիլ, վորլուծ ե : Լայն իմաստով այն նշանակում է այնպիսի բյիների գումար, վորլուծ ձուլված են մի ամբողջության մեջ : Արինակ՝ նավատորմը, զերքը, վորոնք ձուլված են մի ամբողջության մամանակ կազմակերպությունների պիտությունը ներկայացնում են միենալոյն ժամանակ կազմակերպության այլառար (բառիս նեղ իմաստով) : Դպրոցական գերտառուսությունը կազմակերպություն և (բառիս լայն իմաստով), գպրոցական գերտառուսությունը բաղկացած է մի շարք կազմակերպություններից (բառիս նեղ իմաստով) : Ճիշտ նույնական և կուստկցությունը կազմակերպություն ե , պետք ե լինի կազմակերպությունը (բառիս լայն իմաստով) . միենալոյն ժամանակ կուստկցությունը պիտք ե բաղկանած մի ամբողջ շարք բաղմազան կազմակերպություններից (բառիս նեղ իմաստով) : Ռատոնի՝ կուստկցություն և կազմակերպություն հասկացողությունների առհմանախաման մասին խոսող ընկ . Ակսելրոդը, նախ, նկատուի չի կազմակերպություն բառի այս տարրերությունը լոյն և նեղ իմաստով, իսկ յերկրորդ, մի նկատել այն, վոր թերք խառնել և կազմակերպած և անկազմակերպ տարրերը մի կույտի մեջ :

ների հետ, ղեկավարության յենթարկվողներին և չենթարկվողներին, առաջապրոներին և անուղղելի հետամնացներին, վորովդետե ուղղելի հետամնացները կարող են մտնել կազմակերպության մեջ: Ահավասիկ այս խառնումն իրոք վտանգավոր է: Բնկ Ակսելբողն այնուհետև հիշատակում եւ «անցյալի խիստ կոնսպիրատիվ և ցենտրալիստական կազմակերպությունները» («Յուլի Ակսելբողն այնուհետև կազմակերպությունները») և «Հայության մեջ այսպիս կազմակերպությունները» («Յուլի Ակսելբողն այնուհետև կազմակերպությունները») և «Հայության մեջ այսպիս կազմակերպությունները» («Յուլի Ակսելբողն այնուհետև կազմակերպությունները»): Ահավասիկ հենց այստեղ մենք մտակցանք հարցի ամենաեյական կողմերից մեկին, իսկապէ՞ս «այդ սկզբունքը» սոցիալ-դեմոկրատական և, —մի սկզբունք, վոր թույլատրում և իրենց կուսակցության անդամ անվանել այն մարդկանց, վորոնք կուսակցության կազմակերպություններից վոչ մեկի մեջ չեն մըտնում, այլ միայն «այսպես կամ այնպես ողնում են նրանք»: Յեզ Պէտքանուին այդ հարցին տվեց միակ հնարավոր պատասխանը. «Ակսելբողն իրավացի չեր՝ 70-ական թվականները հիշատակելով: Այն ժամանակի դոյլություն ուներ լավ կազմակերպված և հիանալի կարդապահության յենթարկվող կենտրոն, գոյսություն ունեցին նրա շուրջը նրա ստեղծած զանազան կարդի կազմակերպություններ, իսկ ինչ վոր յեղել և այդ կազմակերպություններից դուրս, յեղել և քառս, անիշխանություն: Այդ քառսի բաղկացուցիչ տարբերն իրենց անվանում եյին կուսակցության անդամներ, բայց գործը դրանց չեր շահում, այլ վնասվում եր: Մենք վո՛չ թե պետք եւ ընդուրինակենք 70-ական թվականների անիշխանությունը, այլ խուսափենք նրանից»: Այսպիսով, «այդ սկզբունքը», վոր ընկ. Ակսելբողը կամեցավ անցկացնել վորպես սոցիալ-դեմոկրատական, իսկապես անիշխանական սկզբունք է: Այդ հերքելու համար պետք եւ ցույց տալ վերահսկողության, ղեկավարության և կարդապահության հնարավորությունը կազմակերպությունից դուրս, պետք եւ ցույց տալ, վոր անիրածեցաւ և քառսի տարբերին» տալ կուսակցության անդամներ անունը: Բնկ. Մարտովի ձեակերպման պաշտպանները ցույց չտվին և չեյին կարող ցույց տալ վո՛չ մեկը, վո՛չ մյուսը: Բնկ. Ակսելբողն որինակ վերցրեց «պրոֆեսորին, վորն իրեն սոցիալ-դեմոկրատ և համարում է

Հայտարարում եւ այդ մասին»: Վորպեսդի այս որինակի մեջ պարունակվող միտքն իր վախճանին հասցներ, ընկ. Ակսելբողը պետք եւ ատեր այնուհետև. արդյոք կազմակերպված սոցիալ-դեմոկրատներն իրենք այդ պրոֆեսորին սոցիալ-դեմոկրատ համարում են: Այդ հետապահ հարցը չընելով՝ ընկ. Ակսելբողն իր պատճառապահությունը թողեց կեսում: Իսկապես, յերկուսից մեկը: Կա՛մ կազմակերպված սոցիալ-դեմոկրատները մեղ հետաքրքրով պրոֆեսորին համարում են սոցիալ-դեմոկրատ, —և այն ժամանակ ինչո՞ւ չպետք եւ նրանք մտցնեն նրան այս կամ այն սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ: Միայն այդ մացվելու գելքում պրոֆեսորի «Հայտարարությունները» կհամապատասխանեն նրա գործերին, կլինեն վոչ դատարկ Փրազներ (ինչպես շատ հաճախ մնում են պրոֆեսորական հայտարարությունները): Կա՛մ կազմակերպված սոցիալ-դեմոկրատները սոցիալ-դեմոկրատ չեն համարում պրոֆեսորին, —և այն ժամանակ անհեթեթություն եւ, անիմաստ եւ և վնասակար նրան կուսակցության անդամի պատվավոր և պատաժանատու կոչումը կրելու իրավունք տալը: Այսպիսով, բանը հանդում եւ հենց կազմակերպության ակդրունքի հետևողական գործադրմանը կամ տարբնթացության և անիշխանության սրբադորձմանը: Արդյոք մենք կուսակցությո՞ւն ենք կառուցում, յելնելով սոցիալ-դեմոկրատների արդեն ստեղծված և միաձուլված այն միջուկից, վորն, ասենք, կուսակցական համագումար և ստեղծել և վորը պետք եւ լայնացնի ու բազմապատկի կուսակցական ամեն տեսակ կազմակերպությունները, թե մենք բավականանում ենք այն հանդստացնող Փրազով, թե բոլոր ողնողները կուսակցության անդամներ են: «Յեթե մենք ընդունենք Լենինի Փորձունան, —շարունակում եր ընկ. Ակսելբողը, —ապա մենք զուրս պետք եւ նետենք այն մարդկանց մի մասին, վորոնք թեեւ չեն կարող ընդունվել անմիջականորեն կազմակերպության մեջ, բայց այնուամենայնիվ կուսակցության անդամներ են»: Զատկացողությունների շփոթումը, վորի համարինձ մեղադրել եր կամենում ընկ. Ակսելբողը, այստեղ հենց նրա մոտ գրաւորվում եւ դիակատար պարզությամբ. նա ընդունում է արդեն իբրև տվյալ, վոր բոլոր պանողները կուսակցության անդամներ են համբիսանում, մինչդեռ վեցը հենց զրա մասին եւ, և ընդունմախոսները ղեուս պետք եւ ապացուցեն այսպիսի մեկնա-

բանության անհրաժեշտությունն ու սղուաթը : Ի՞նչ բովանդակություն ունի այս՝ առաջին հայացքից սարսափելի՝ Փրադ—պետք և գուրս նետենք : Եեթե կուսակցության անդամներ են Համարկում միայն կուսակցական համարված կազմակերպությունների անդամները, ապա այն մարդիկ, վորոնք չեն կարող «անմիջականորեն» մտնել կուսակցական և վոչ մի կազմակերպության մեջ, չե՞ վոր կարող են աշխատել մի վոչ-կուսակցական կազմակերպության մեջ, վոր, սակայն, հարում և կուսակցությանը : Հետեւս, խոսք ել չի կարող լինել զուրս նետելու մասին՝ աշխատանքից հեռացնելու, չարժմանը մասնակցելու հնարավորությունից զրկելու իմաստով : Ընդհակառակը, վորքան ավելի ամուռ լինեն խակական սոցիալ-դեմոկրատներ բովանդակող մեր կուսակցական կազմակերպությունները, վորքան պահաս լինեն կուսակցության ներսում անկայունությունն ու յերերունությունը, այնքան ավելի լայն, ամենի բազմակողմանի, ավելի հարուստ և ավելի արդյունավետ կլինի կուսակցության ազդեցությունը նրան ըրջապատող, նրա զեկալարած բանվորական մասսաների տարրերի վրա : Հո չի կարելի, խակապես, կուսակցությունը՝ վորպես բանվոր գասակարդի առաջավոր ջոկատ՝ շփոթել ամբողջ գասակարդի հետ : Մինչդեռ հենց այդպիսի շփոթման մեջ ե ընկնում (ընորոշ շփոթում առհասարակ մեր ոպորտունիստական եկոնոմիզմի համար) ընկ . Ակնելորդը, յերբ ասում ե . «Մենք, իհարկե, նախ և առաջ ստեղծում ենք կուսակցության ամենաակտիվ տարրերի կազմակերպություն, հեղափոխականների կազմակերպություն, բայց մենք, —քանի վոր գասակարդի կուսակցություն ենք, —պետք ե մտածենք այն մասին, վոր կուսակցությունից զուրս չթողնենք այն մարդկանց, վորոնք գիտակցարար, թեպես և զուցե վոչ այնքան ակտիվ կերպով, հարում են այդ կուսակցությանը» : Նախ, սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ակտիվ տարրերի շարքը կմանեն բնակվո՞չ միայն հեղափոխականների կազմակերպությունները, այլ կուսակցական ճանաչված մի ամբողջ շարք բանվորական կազմակերպություններ : Յերկրորդ, այդ ի՞նչ պատճառով, ի՞նչ տրամաբանության ուժով կարող ե այն փաստից, վոր մենք գասակարդի կուսակցություն ենք, հետեւ այն յեղակացությունը, թե հարկավոր չետարբերություն դնել կուսակցության մեջ գտնվողների և կուսակցությանը հարովների միջև : Ճիշտ հակառակը . հենց տարրերությունների բոյության պատճա-

ռով, —տարբերություններ ըստ զիտակցականության առարթանի և ակտիվության աստիճանի, —անհրաժեշտ և տարբերություն զնել ըստ մերձակորության՝ զեպի կուսակցությունը : Մենք դասակարդի կուսակցություն ենք, ուստի և զբաղջ դասակարգը (իսկ պատերազմի ժամանակ, քաղաքացիական պատերազմի դաշրջանում, և միանգամայն ամբողջ դասակարգը) պետք և դործի մեր կուսակցության զեկավարությամբ, պետք և մեր կուսակցությանը հարի վորքան կարելի յե սերտորեն . բայց մանիլովշչինա և «ալոչականություն» * կլիներ կարծել, թե յերբեկցն զրեթե ամբողջ դասակարգը կամ ամբողջ դասակարգը կապիտալիզմի որով թ վիճակի կլինի բարձրանալու մինչեւ իր առաջավոր չուկատի, իր սոցիալ-դեմոկրատական կուսակցության գիտակցականության ուստի ակտիվության ու ակտիվության աստիճանը : Դեռևս վոչ մի խելացի սոցիալ-դեմոկրատ չի տարակուել այն մասին, վոր կազինաալիզմի որով մինչեւ անդամ պրոֆեսիոնալ կազմակերպությունը (վոր ավելի պարզ ե, անդամությած չերտերի գիտակցականությունն ավելի մատչելի) թ վիճակի չե ընդուրկելու զրեթե ամբողջ կամ ամբողջ բանվոր դասակարգին : Մենք միայն խարած կլինեյինք մեզ, մեր աչքերը փակած մեր ինդիբների վիթխարիության հանդեպ, նեղացրած կլինեյինք այդ խնդիրները, —յեթե մոռանայինք առաջավոր ջոկատների և նրան հարող բոլոր մասաների տարբերությունը, յեթե մոռանայինք, վոր առաջավոր ջոկատի մշտական պարտականությունն ե՝ բարձրացնել ավելի ու ավելի լայն խավեր մինչեւ այդ առաջավոր մակարդակը : Հենց այսպիսի աշխատկում և մոռացում և հարողների և կուսակցության մեջ գտնվողների, գիտակիցների ու ակտիվների ուղղողների տարբերության չնշումը :

Կազմակերպական ճաղաղությունն արդարացնելու համար, կազմակերպության և կազմակերպության չփոթումն արդարացնելու համար հենվել այն բանի վրա, վոր մենք դասակարդի կուսակցություն ենք, —նշանակում ե կրկնել նադեղինի³⁶ սիալը, վորը շփոթում եր «շարժման՝ «խորքում գտնվող» «արմատների» փիլ-

* Գոչական՝ քաղաքական գործիչ, վոր քարշ և քամիս բանվրտական շարժման ղուցից, փոխանակ այն զեկավարելու:

Պոչականաւության՝ հաճույյո բուրքուազիայի հրաժարումն բանվրական կուսակցության հեղափոխական ակտիվ քաղաքականությունից և տակտիկայից, գովաճանություն բանվոր դասակարդի գործին ւելու :

սովորական և սոցիալ-պատմական հարցը տեխնիկական-կազմակերպական հարցի հետ»։ Ակսելրոդի թեթև ձեռքով կատարված այս չփոխումն մը հենց, վոր այնուհետեւ կրկնում եյին տառնյակ անդամները ընկ. Մարտովի ձևակերպումը սպաշտականող հոետորները: «Վորքան լայն տարածված լինի կուսակցության անդամի անունը, այնքան լույ», —ասում է Մարտովը, չբացարելով, սակայն, թե ինչ ողուտ կա կուսակցության անդամի անվան լայն տարածումից, վոր չի համապատասխանում բովանդակությանը: Կարելի՞ յէ արդյոք ժխտել, վոր վերահսկողությունը կուսակցության կազմակերպության մեջ չմտնող անդամների վերաբերմամբ Փիկցիս յէ: Ֆիկցիայի լայն տարածումը լինասակար ե, և վոչ թէ ողտակար: «Մենք միայն ուրախանալ կարող ենք, յեթե յուրաքանչյուր գործադուլավոր, յուրաքանչյուր ցուցարար, իր գործողությունների համար սպատասխանատու լինելով, կարողանա իրեն հայտարարել կուսակցության անդամ» (Եջ 229): Խոկապե՞ս: Յուրաքանչյուր գործադուլավոր պե՞տք ե իրավունք ունենա իրեն կուսակցության անդամ հայտարարելու: Այս դրույթով ընկ. Մարտովը միանդամից իր սխալը հասցնում է աբուրդի, սոցիալ-դեմոկրատիզմը նվաստացնելով ու հացնելով գործադուլիզմի աստիճանի, կրկնելով Ակիմովների քարեախտությունները: Մենք միայն ուրախանալ կարող ենք, յեթե սոցիալ-դեմոկրատիային հաջողվում է զեկավարել ամեն մի գործադուլ, վորովհետեւ սոցիալ-դեմոկրատիայի ուղղակի և անպայման ոլրտականությունն է զեկավարել պրոլետարիատի դատիկարային ոլայքարի բոլոր արտահայտությունները, իսկ գործադուլն այդ ոլայքարի ամենախորը և ամենահզոր արտահայտություններից մեկն է: Բայց մենք պոչականներ կլինենք, յեթե թույլ տանք պայքարի այդպիսի սկզբնական, իռպոք վոչ ամելի քան տրեղյունիոնիստական ձևի նույնացումը սոցիալ-դեմոկրատական բաղմակողմանի և դիտակցական պայքարի հետ: Մենք ոպորտունիստորեն կորինալանացնենք ակներեւ կենծիքը, յեթե իրավունք տանք ամեն մի գործադուլավորի «իրեն կուսակցության անդամ հայտարարելու», վորովհետեւ այդպիսի «հայտարարությունը» բազմաքիչ դեպքերում կենծ հայտարարություն կլինի: Մենք մեզ որորել կակսենք մանիլովյան յերազանքներով, յեթե կամենանք համատայնել մեզ և ուրիշներին, վոր յուրաքան

չյուր գործադուլավոր կարող ե լինել սոցիալ-դեմոկրատ և սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ՝ այն անվերջ մասնատման, ձնշման և բթացման պայմաններում, վորոնք կապիտալիզմի որով անխուսափելու ժանրացած պետք ե լինեն «անվարժուն», անվորակյալ բանվորների շատ և շատ լայն խավերի վրա: Հենց «գործադուլավորի» որինակից առանձնապես պարզ յերեսում ե յուրաքանչյուր գործադուլու սոցիալ-դեմոկրատորեն դեկավարելու հետպահովական ձգումն և սպարտականական ֆրազի տարբերությունը, այն ֆրազի, վոր կուսակցության անդամ և հայտարարում յարաքանչյուր գործադուլավորի: Մենք դասակարդի կուսակցությունն ենք, վորչափով գործով սոցիալ-դեմոկրատորեն դեկավարում ենք պլուտարχատի գրեթե ամբողջ կասակարգին, բայց գրանից միայն Ակիմովները կարող են անել այն յեղակացությունը, թե մենք խսունի պետք ե նույնացնենք կուսակցությունն ու դասակարգը:

«Յես չեմ վախենում գավաղըական կազմակերպությունից», ասում եր նույն ճառում ընկ. Մարտովը, —բայց, ավելացնում եր նա, —«ինձ համար գավաղըական կազմակերպությունն այն չափով միայն իմաստ ունի, վորչափով նրան ընդդրկում է սոցիալ-դեմոկրատական բանվորական լայն կուսակցությունը» (Եջ 239): Ճշգրիտ լինելու համար պետք եր ասել՝ վորչափով նրան ընդդրկում է սոցիալ-դեմոկրատական բանվորական լայն շարժումը: Յեզ այսպիսի ձեռով ընկ. Մարտովի դրույթը վո՞չ միայն անվիճելի յէ, այլ պարզ տրուիլմ է: Յես կանգ եմ առնում այս կետի վրա միայն այն պատճառով, վոր ընկ. Մարտովի տրուիլմից հետաղ հոետորներն այն շատ բանուկ և շատ գլեհիկ փաստարկումը շինեցին, թե իրը լենինը կամենում է «կուսակցության անդամների ամբողջ գումարը սահմանափակել դավադիրների գումարով»: Այս յեղակացությունը, վոր միայն ժպիտ հարուցանելու յե ընդունակ, անում եյին թե՛ ընկ. Պոսալովսկին, թե՛ ընկ. Պոպովը, իսկ յերբ այն կրկնեցին Մարտինովն ու Ակիմովը, ապա արդեն միանգամայն ուրվագծեց նրա խսկական բնույթը, այն ե՛ ոպորտունիստական ֆրազի բնույթը: Ներկայումս այդ նույն փաստարկումը զարգացնում է նոր «Ասկրա»-յում ընկ. Ակսելրոդը՝ ծանոթացնելու համար ընթերցող հասարակությանը նոր խըմբագրության կազմակերպական նոր հայացքներին: Դեռևս համագումարում, առաջին խսկ նիստում, վոր քննում եր § 1-ի հարցը,

յես նկատեցի, վոր ընդդիմակոսները կամ ենում են ողտովել այդպիսի եժան զենքից, ուստի և նախազդուչայցի իմ ձառում (Եջ 240). «Զպետք ե կարծել, թե կուսակցական կազմակերպությունները պետք ե բաղկացած լինեն միայն պրոֆեսիոնալ հեղափոխականներից: Մեղ հարկավոր են ամեն տեսակի, աստիճանի ու յերանդի ամենաբազմազան կազմակերպություններ, սկսած շատ նեղ և կոնսպիրատիվ կազմակերպություններից և վերջացրոծ շատ լայն, աղատ, lose Organisation -ներով»: Այս այն աստիճանի ակնհայտ, ինքնըստինքյան հասկանալի ճշմարտությունն և, վոր յես ավելորդ ելի համարում կանդ առնել նրա վրա...

Յես այդ նշել եմ գեուսս «ի՞նչ անել»-ի մեջ, իսկ «Նամակը ընկերոջ»-ում այդ գաղափարն ավելի կոնկրետ եմ զարդացրել: Գործարանային խմբակները, —դրել եմ յես այնտեղ, —«մեղ համար առանձնապես կարեւոր են. չե՞ վոր շարժման ամբողջ գլխավոր ուժը բանվորների կազմակերպվածությունն ե խոշոր գործարանները (և Փարբիկաներն) իրենց մեջ բավանդակում են բանվոր դասակարգի վո՞չ միայն քանակով գերակշռող, այլև ե'լ ավելի՝ ազդեցությամբ, զարգացմամբ, պայքարի ընդունակությամբ գերակշռող մասին: Յուրաքանչյուր գործարան պետք ե լինի մեր ամրոցը... Գործարանային յենթակոմիտեն պետք ե ջանա ընդդրել ամբողջ գործարանը, բանվորների ըստ հնարավորության մեծ մասին ամեն կարդի խմբակների (կամ գործակալների) ցանցով... Բոլոր խմբերը, խմբակները, յենթակոմիտեները և այլն պետք ե գտնվեն կոմիտեյական հիմնարկների կամ կոմիտեյի Փիլիպ բաժանմունքների վիճակում: Նրանցից վոմանք ուղղակի կհայտնեն իրենց ցանկությունը՝ մտնելու նույն Սոց.-Դեմ. Բան. Կուս. կազմի մեջ և, կոմիտեյի կողմից հաստատվելուց հետո, նրա կազմի մեջ կմտնեն, կստանձնեն (կոմիտեյի հանձնարարությամբ կամ նրա հետ համաձայնության գալով) վորոշ Փունկցիաներ, կազմակարգվեն հասղանդվել կուսակցության որգանների կարգադրություններին, կստանձն կուսակցության բոլոր անդամների իրավունքները, կհամարվեն կոմիտեյի անդամության մերձակորպությունը թեկնածուներ և այլն: Մյուսները չեն մտնի Ռ. Ս.-Դ. Բ. Կ. մեջ, կլինեն կուսակցության անդամների կողմից կազ-

մակերպված կամ կուսակցության այս կամ այն խմբին հարող խմբակների վիճակում և այլն» (Եջ 17-18): Իմ ընդգծած բառերից սուանձնապես պարզ յերեւում է, վոր § 1-ի իմ ձեւակերպված անդամների գաղափարը լիովին արտահայտված է արդեն «Նամակը ընկերոջ»-ի մեջ: Կուսակցության մեջ մտնելու պայմաններն այսպիս ուղղակի մատնանշված են, այն և՝ 1) կազմակերպվածության վորոշ աստիճան և 2) կուսակցության կոմիտեյի հաստատություն: Մի հջ հետո յես մոտավորապես ցույց եմ տալիս և այն, թե ինչպիսի խմբեր ու կազմակերպություններ և ինչ նկատառություններով պետք ե (կամ չպետք ե) մացվեն կուսակցության մեջ. «Ցրիչների խմբերը պետք ե պատկանեն Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-ին և գիտենան նրա անդամների և նրա պաշտոնյաների վորոշ թիվ: Այն խումբը, վոր ուսումնասիրում և աշխատանքի պրոֆեսիոնալ պայմաններն ու մշակում պրոֆեսիոնալ պահանջների տեսակներ, չպետք ե պարտավորաբար պատկանի Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-ին: Կուսակցության մեկ-յերկու անդամի մասնակցությամբ ինքնակրթությամբ պարանող ուսանողների, սպաների և ծառայողների խումբը յերբեմն նույնիսկ բոլորովին չպետք ե իմանա նրա՝ կուսակցությանը պատկանելու մասին և այլն» (Եջ 18-19):

Բայս կազմակերպվածության աստիճանի ընդհանրապես, և ըստ կազմակերպության կոնսպիրատիվության մասնավորապես, կարելի յէ տարբերել, որինակի համար, այսպիսի կարգեր. 1) հեղափօխականների կազմակերպություններ. 2) բանվորների՝ ըստ հնարավորության լայն և բարձրագան կազմակերպություններ (յես սահմանափակվում եմ միայն բանվոր դասակարգով, յենթագրելով, թե ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր այլ դասակարգերի վորոշ տարբեր ևս կմտնեն այստեղ, վորոշ պայմաններում): Այս յերկու կարգերը կազմում են կուսակցությունը: Այսուհետեւ, 3) բանվորների կազմակերպություններ, վորոնք հարում են կուսակցությանը. 4) բանվորների կազմակերպություններ, վորոնք չեն հարում կուսակցությանը, բայց վասառընեն յենթագրելում են նրա վերահսկողությանը ու դեկարությանը. 5) բանվոր դասակարգի անկազմակերպ տարբեր, վորոնք մասսմբ նույնպես յենթագրելում են սոցիալ-գեմոկրատիայի դեկարությանը, գոնե դասակարգային պայքարի խոշոր արտահայտությունների դեպքում: Ահա թե ինչպես և մոտավորապես

պատկերանում բանը իմ տեսակետից : Ընդհակառակը, ընկ . Մարտովի տեսակետից կուսակցության սահմանը մնում է միտնգամայն անորոշ, վորովհետև «յուրաքանչյուր գործադրություր» կարող է «իրեն հայտարարել կուսակցության անդամ» : Ի՞նչ ոգուածայն անպատճենից : «Անվանման» լայն տարածում : Նրա վնասն այն է, վոր գասակարգը կուսակցության հետ շփոթելու վերաբերյալ կազմակերպող գաղափար է մտցնում :

Մեր կողմից առաջադրված ընդհանուր դրույթները պատկերավորելու համար ելի մի թուրքիկ հայացք գցենք համադրումարում § 1-ի շուրջը տեղի ունեցած հետագա վիճաբանությունների վրա : Ընկ . Բրուկերը արտահայտվում է (ի հաճույք ընկ . Մարտովի) հոգուտ իմ ձեւակերպման, բայց նրա գաշխնքն ինձ հետ, ի տարբերություն Ակիմովի գաշխնքից Մարտովի հետ, դուրս ե գալիս, վոր թյուրքացության վրա յէ հիմնված : Ընկ . Բրուկերը «համաձայն չե ամբողջ կանոնադրությանն ու նրա ամբողջ վորուն» (եջ 239) և իմ բանաձեռ պաշտպանում է, վորպես «Ռածու Շելո»-ի կողմանակիցների համար վախագելի դիմոկրատիզմի հիմք : Ընկ . Բրուկերը դեռևս չի բարձրացել այն տեսակետին, վոր քաղաքական պայքարում յերեմն հարկ է լինում ընտրելու չարիքներից փոքրագույնը . Ընկ . Բրուկերը չի նկատել, վոր գեմոկրատիզմ պաշտպանելու այնպիսի մի համադրումարում, վորպեսին մերն է, անոգուտ է : Ընկ . Ակիմովն ավելի խորաթափանց գտնվեց : Նա միանդամայն ճիշտ դրեց հարցը, ընդունելով, վոր «ընկ . Ընկ . Մարտովն ու Լենինը վիճում են, թե վորպիսի (ձեւակերպումն) և լավ համում նրանց ընդհանուր նպատակին» (եջ 252) : «Յես և Բրուկերը, —շարունակում է նա, —կամենում ենք ընտրել այն, վորն ավելի ժիշտ է հասնում նպատակին : Այս տեսակետից յես ընտրում եմ Մարտովի ձեւակերպումը» : Յեվ ընկ . Ակիմովը շիտակորեն պարզաբանեց, վոր «նրանց նպատակը հենց» (Պլեխանովի, Մարտովի և իմ—հեղափոխականների զեկավար կազմակերպության ստեղծում) նա համարում է «անիբարութելի և վնասակար» . նա պաշտպանում է, ինչպես և ընկ . Մարտինովը*), եկոնոմիստների գաղափարը «հեղափոխականների կազմա-

*) Ընկ . Մարտինովն, առենք, կամենում և տարբերվել ընկ . Ակիմովից, կամենում և առաջարկել, վոր եքը գաղափարական չի նշանակում կօնոռքա-

կերպության» ավելորդության մասին : Նա «լի յի այն հավատով, վոր կյանքն այնուամենայնիվ ներս կխուժի մեր կուսակցական կազմակերպության մեջ, անկախ նրանից, թե նրա ճանապահը կաղամանեցեք Մարտովի փորմուլայով, թե լենինի փորմուլայով» : «Կյանքի» այս «պոչականական» ըմբռնման վրա չարժեր կանգ առնել, յեթե մենք նրան չհանդիպելինք նույնպես և ընկ . Մարտովի մոտ : Ընկ . Մարտովի յերկրորդ ճառն (եջ 245) առաջարակ այնքան հետաքըրբական է, վոր արժե այն քննել մանրամասնորեն :

Ընկ . Մարտովի առաջին փաստարկումը . կուսակցական կապմակերպությունների վերահսկողությունը կուսակցության՝ կապմակերպությունների մեջ չմանող անդամների վերաբերմաք՝ «իրադրծելի յե, վորչափով կոմիտեն, վորեւ մեկին վորոշ Փունկցիա հանձնարարելով, հնարավորություն ունի հետեւյունան» (եջ 245) : Այս թեզիսը զարմանալի բնորոշ է, վորովհետև նա «մատնում ե», յեթե կարելի յե այսպես արտահայտվել, թե ո՞ւմ է հարկավոր և գործնականում ո՞ւմ կծառայի Մարտովի ձեւակերպումը,—ինտելիգենտ միայնակներին, թե բանվորական խմբերին ու բանվորական մասսաներին : Բանն այն է, վոր հնարավոր և Մարտովի բանաձեռի յերկու մեկնարանություն . 1) կուսակցության անդամ իրավունք ունի «հայտարարելու իրեն» (հենց իր՝ ընկ . Մարտովի խոսքերը) ամեն վոք, ով նրան անձնական կանոնավոր աջակցություն և ցույց տալիս նրա կազմակերպություններից մեկի ղեկավարությամք . 2) կուսակցության յուրաքանչյուր կազմակերպություն իրավունք ունի կուսակցության անդամ նախաչելու ամեն մեկին, ով նրան կանոնավոր անձնական աջակցություն և ցույց տալիս՝ նրա ղեկավարությամք : Միայն առաջին մեկնարանությունն և «յուրաքանչյուր գործադրություն»

տիվ, վոր այդ բառերի տարբերության հետեւ թագնված և հայկացողությունների տարբերություն : Թե ինչ տարբերություն է այդ, այնպես և չբացարեցին զո՞ւ ընկ . Մարտինովը, վո՞ւ ել այժմ նրա հետքերով զնացող ընկ . Ակիմովը : Ընկ . Մարտինովն «այնպես և ձեւացնում»՝ իրը թե յես, որինակ, «Ե՞՞նչ անել»—ում վճռականորեն չիմ արտահայտվել (ինչպես և «Խնդիրներ»-ի մեջ) «քաղաքական պայքարը մինչև գաղափարությունը նեղացնելու» գեմ : Ընկ . Մարտինովը կամենում և ունկնդիրներին հարկադրել մոռանալու, վոր այն ժարդիկ, վորոնց զեմ յես պատերազմել եմ, չիյին տեսնում հեղափոխականների կազմակերպության անիրածեցուրելու, ինչպես այժմ էլ այդ չի տեսնում ընկ . Ակիմովը :

րի» իրոք հնարավորություն տալիս անվանվելու կուսակցության անդամ, ուստի և միայն այն ել միանգամից նվաճեց Լիբերների, Աղիմովների և Մարտինովների սրտերը: Բայց այդ մեկնարանությունն արդեն, ակներեւ եւ, վոր մի Փրազ եւ, վորովհետեւ այդ ժամանակ այստեղ կհասկացվի նաև ամբողջ բանվոր դասակարգը, և կծնջվի տարբերությունը կուսակցության ու դասակարգի միջև. «յուրաքանչյուր գործադուլավորի» վերահսկելու և գեկալարելու մասին կարելի յեւ խոսել լոկ «սիմվոլիկորեն»: Ահա թե ինչու ընկ. Մարտովն իր յերկրորդ ձառում խկույն հանդեց յերկրորդ հետեւյալ մեկնարանությանը (թեև, փակադերի մեջ ասած, նաև ուղղակի մերժված եւ համագումարի կողմից, վոր չընդունեց կոստիչի բանաձևը, էջ 225). Կոմիտեն Փունկցիաներ կհանձնարարի և կհետեւ նրանց իրագործմանը: Այսպիսի հաստոկ հանձնարարություններ, իհարկե, յերբեք տեղի չեն ունենա բանվորների մասսայի, հագարակոր պրոլետարների վերաբերմամբ (վորոնց մասին խոսում են ընկ. Ակսելորդն ու ընկ. Մարտինովը), —նրանք հաճախ կտրվեն այ հենց այն պրոֆեսորներին, վորոնց հիշատակում եր ընկ. Ակսելորդը, այն գիմնազիաներին, վորոնց մասին հոգում եյին ընկ. Լիբերն ու ընկ. Պոպովը (էջ 241), այն հենագիտական յերիտասարդությանը, վորին վկայակոչում եր ընկ. Ակսելորդն իր յերկրորդ ձառում (էջ 242): Մի խոսքով՝ ընկ. Մարտովի Փորմուլան կամ մեռած տառ կմնա, դատարկ Փրազ, կամ այն ոգուած կրերի գլխավորակես և գրեթե բացառապես այն «ինտելիգենցիներին, վորոնի մինչև ուղին ու ծուծը տոգորված են բարձրական ինդիվիւդուալիզմով» և չեն ցանկանում մտնել կազմակերպության մեջ: Խոսքով ընկ. Մարտովի Փորմուլան պաշտպանում է պրոլետարիատի լայն խավերի շահերը. գործով այդ Փորմուլան կծառայի բուրժուական ինտելիգենցիայի շահերին, վորը խորչում է պրոլետարական կարգավահությունից և կազմակերպությունից: Վոչ վոք սիրու չի անի ժխտելու, վոր ինտելիգենցիան, իբրև ժամանակակից կապիտալիստական հասարակությունների առանձին շերտ, ընդհանուր առմամբ և ամբողջովին ընտրությունից և կարգավահությունների կազմակերպման անընդունակությունը և կարգավահության ու կազմակերպման անընդունակությունը (հմտ. թեկուզ կառւցկու հայտնի հողմաներն ինտելիգենցիայի մասին). ի միջի այլոց,

այս և հասարակական այդ չերտի անձեռնոու տարբերությունը պրոլետարիատից. այս և ինտելիգենտական տարտամության ու անկայունության բացարարություններից մեկը, հատկություններ, վորոնք այնքան հաճախ իրենց զգալ են տալիս պրոլետարիատին. և ինտելիգենցիայի այդ հատկությունն անխցիկի կերպով կապված են նրա կյանքի սովորական պայմանների հետ, նրա վաստակի ողայմանների հետ, վորոնք շատ ու շատ բաներում մոտենում են նաև բուրժուական գոյության պայմաններին (մենակ կամ շատ մանր կոլեկտիվների մեջ կատարվող աշխատանք և այլն): Վերջապես, պատահականություն չեն նաև այն, վոր հենց ընկ. Մարտովի Փորմուլայի պաշտպանները պետք ե առաջադրելին պրոֆեսորների և գիմնազիստների որինակները: § 1-ի մասին տեղի ունեցած վիճաբանությունների մեջ վո՛չ թե պրոլետարական լայն պայքարի պաշտպանները հանդես յեկան արժատական-դաշտդրական կազմակերպության պաշտպանների դեմ, ինչպես կարծում եյին ընկ. ընկ. Մարտինովն ու Ակսելորդը, այլ բուրժուական-ինտելիգենցիաների կողմանցիցներն ընդհանրվեցին պրոլետարիատի կազմակերպության և կարգավահության կողմանցիցների հետ:

Ընկ. Պոպովին ասում են. «Ամենուրեք Ս.-Պետերբուրգում, ինչպես և Նիկոլայեվում կամ Ռյեսայում, այդ քաղաքների ներկայացուցիչների վկայությամբ, տասնյակի բանվորներ կան, վորոնք դրականություն են տարածում, բանավոր ագիտացիա յեն մղում և վորոնք չեն կարող կազմակերպության անդամներ լինել: Նրանց կարելի յեւ վերաբերել կազմակերպությանը, բայց անդամներ համարել չի կարելի» (էջ 241): Ինչո՞ւ չեն կարող նրանք կազմակերպության անդամներ լինել. այդ մնաց ընկ. Պոպովի կաղանիքը: Յես արդեն վերը բերել եմ «Նամակ ընկերոջ»-ից այն տեղը, վոր ցույց է տալիս, թե հենց բոլոր այդպիսի բանվորներն (հարյուրներով), և վոչ թե տասնյակներով) կազմակերպության մեջ մտցնելը թե՛ հնարավոր ե, թե՛ անհրաժեշտ, ըստվորում այդ կազմակերպություններից շատ ու շատ շատերը կարող են մտնել և պետք ե մտնեն կուսակցության մեջ:

Ընկ. Մարտովի յերկրորդ փաստարկումը. «Ենինի համար կուսակցության մեջ չկան այլ կազմակերպություններ, բացի կուսակցական կազմակերպություններից»... Միանդամա՞յն ճիշտ է... «ինձ համար, ընդհակառակը, այդպիսի կազմակերպություն-

Ներ պետք ե գոյություն ունենան։ Կյանքն ավելի արագ ե ստեղծում և ծնում կազմակերպությունները, քան մենք կկարողանանք դրանք պրոֆեսիոնալ հեղափոխականների մեր մարտական կազմակերպության հիերարխիայի մեջ մտցնել»... Այս՝ յերկու տեսակետից սիալ ե. 1) «կյանքը» ծնում ե հեղափոխականների շատ ավելի քիչ բանիմաց կազմակերպություններ, քան մեղ հարկավոր ե, քան պահանջում ե բանվորական շարժումը. 2) մեր կուսակցությունը պետք ե լինի վո՛չ միայն հեղափոխականների կազմակերպությունների, այլև բանվորական կազմակերպությունների մասսայի հիերարխիա... «Լենինը կարծում ե, թե Կ. Կ.-ն կհաստատի միայն այն կազմակերպությունների կուսակցական կոչումը, վորոնք միանդամայն հուսալի կլինեն սկզբունքային տեսակետից։ Բայց ընկ. բրուկերը լավ ե հասկանում, վոր կյանքը (sic!) իրենը կանի, և վոր Կ.Կ.-ն բազմաթիվ կազմակերպություններ կուսակցությունից գուրս չթողնելու համար հարկադրված պիտի լինի նրանց որինականացնել՝ չնայած նրանց միանդամայն անհուսալի բնույթին. ուստի և ընկ. բրուկերը միանում ե Լենինին»... Իհարկե, յեթե Կ.Կ.-ն անպատճառ բաղկացած լիներ այնպիսի մարդկանցից, վորոնք ղեկավարվում են վոչ իրենց կարծիքով, այլ նրանով, թե ինչ կատեն ուրիշները, այն ժամանակ «կյանքը իրենը» կաներ այն խմաստով, վոր կուսակցության ամենահետամնաց տարրերը կհաղթանակեցին։ Բայց վոչ մի իմաստավորված պատճառ չի կարելի բերել, վորը խելացի Կ.Կ.-ին հարկադրեր կուսակցության մեջ մտցնելու «անհուսալի» տարրերին։ Անհուսալի տարրեր «ծնող» «կյանքի» հենց այս հիշտակումով ել ընկ. Մարտովնակներեն ցո՞ւց ե տալիս իր կազմակերպական պլանի ոպրտունխատական բնույթը... «Իսկ յես կարծում եմ, —շարունակում ե նա, —վոր յեթե մի այդպիսի կազմակերպություն (վոչ միանդամայն հուսալի) համաձայն ե ընդունելու կուսակցական ծրագիրն ու կուսակցական վերահսկողությունը, ապա մենք կարող ենք նրան մտցնել կուսակցության մեջ, որանով իսկ նրան չդարձնելով կուսակցական կազմակերպություն։ Յես մեր կուսակցության մեծ հաղթանակը կհամարելի, յեթե, որինակ, «անկախների» մի վորեւ միություն վորոշեր, վոր նա ընդունում ե սոցիալ-դեմոկրատիայի տեսակետն ու նրա ծրագիրը։ Ամոնում ե կուսակցության մեջ, մի հանդամանք, վորը, սակայն,

չի նշանակում, թե մենք այդ միությունը մտցնում ենք կուսակցական կազմակերպության մեջ»... Այս թե ի՞նչպիսի շփոթման է հասցնում Մարտովի Փորմուլան—կուսակցության մեջ մտնող վոչ-կուսակցական կազմակերպություններ։ Պատկերացրե՛ք միայն նրա սխեման —կուսակցությունը = 1) հեղափոխականների կազմակերպություններ + 2) բանվորների՝ կուսակցական ճանաչված կազմակերպություններ + 3) բանվորների կուսակցական չճանաչված կազմակերպություններ (գերազանցապես «անկախներից») + + 4) զանազան ֆունկցիաներ կատարող մենակներ—ոլորթեսորներ, գիմնազիատներ և այլն + 5) «յուրաքանչյուր գործադրություն»։ Այս յերենի պլանի կարելի յէ դնել միայն ընկ. Լիբերի խոսքերը. «Մեր նպատակն ե վոչ միայն կազմակերպություն կազմակերպել (!!), մենք կարող ենք և պետք ե կուսակցություն կազմակերպենք» (եջ 241)։ Այո՛, իհարկե, մենք կարող ենք և պետք ե անենք այդ, բայց դրա համար հարկավոր են վո՛չ թե իմաստից գուրեկ բառեր «կազմակերպություններ կազմակերպելու» մասին, այլ ուղղակի պահանջ կուսակցության անդամներից, վորպեսզի նրանք գործնականում աշխատեն կազմակերպման համար։ Խոսել «կուսակցության կազմակերպման» մասին և պաշտպանել կուսակցություն բառով ամեն մի անկազմակերպության և ամեն մի աարընթացության քողարկում—նշանակում ե գատարեկառեր առել։

«Մեր ձևակերպումը—ասում ե ընկ. Մարտովը—աբտահայտում ե այն ձգտումը, վոր հեղափոխականների կազմակերպության և մտսասայի միջև լինեն մի շարք կազմակերպություններ»։ Հենց այդպես չե։ Հենց այդ իրոք պարտադիր ձգտումը չի արտահայտում Մարտովի բանաձեւ, վորովհետեւ նա չի տալիս կազմակերպվելու մղում, չի պարունակում կազմակերպվելու պահանջ, չի անջատում կազմակերպվածն անկազմակերպից։ Նա միմիայն կոչում է տալիս, և այս առթիվ չի կարելի չմտարել ընկ. Ակսելրոդի հետեւյալ խոսքերը. «Վոչ մի զեկուետով չի կարելի արգելել նրանց (հեղափոխական յերիտասարդության խմբակներին և այլն) և առանձին անձերի իրենց սոցիալ-դեմոկրատական վագանել» (առ' ըրբ ճշմարտություն) «և նույնիսկ իրենց համարել կուսակցության մի մասը»... այս արդեն անպայման սխալ ե։ Արգելել սոցիոլ-դեմոկրատ կոչվել՝ չի կարելի և հարկ չկա,

Հորոգհետեւ այդ խոսքն անմիջականորեն արտահայտում և միայն համոզմունքների սիստեմ և վոչ թե կազմակերպական վորոշ հարաբերություններ։ Արգելել առանձին խմբակներին և անձերին «իրենց կուսակցության մաս համարել» կարելի յեւ և պետք է, յերբ այդ խմբակներն ու անձերը վնասում են կուսակցության գործին, այլասերում են կամ կազմալուծում նրան։ Ծիծաղելի՛ կլիներ խոսել կուսակցության՝ վորագո մի ամբողջության, վորակո քաղաքական մեծության՝ մասին, յեթե նա չկարողանար «զեկրետով արգելել» խմբակն ամբողջության «մասը համարել իրեն»։ Յեվայդ դեպքում ի՞նչ իմաստ կուսակցությունից վտարելու կարգ ու պայմաններ վորոշելը։ Ընկ։ Ակսելրողն ակնառու էկրպակ արսուրդի հասցեց ընկ։ Մարտովի հիմնական սխալը նա այդ սխալը նույնիսկ ոպրտուիստական թեորիա դարձեց, յերբ ավելացրեց, թե «Լենինի ձեակերպմամը § 1-ն ուղղակի սկզբունքային հակասություն և պրուետարիատի սոցիալ-դեմոկրատական կուսակցության բուն եյությանը (!!), խնդիրներին» (եջ 243)։ Այս նշանակում և վոչ ավելի և վոչ պակաս, քան այն, վոր կուսակցությանն ավելի բարձր պահանջներ առաջադրելը, քան դասակարգին, սկզբունքային հասկացողություն և պրուետարիատի խնդիրների բուն եյությանը։ Զարժանալի չեւ, վոր Ակիմովի սարի պես պաշտպան կանգնեց այդպիսի թեորիային։

Արդարությունը պահանջում է նշել, վոր ընկ։ Ակսելրողը, վոր այժմ ուզում և այս սխալ, ակներևորեն գեղի ուղղութունիցմը թեքող ձեակերպումը դարձնել նոր հայացքների հատիկ, — համագումարում, ընդհակառակը, պատրաստակամություն հայտնեց «սակարկելու», առելով։ «Բայց յես նկատում եմ, վոր բաց դուռ եմ բաղխում, վորովհետեւ ընկ։ Լենինը կուսակցական կազմակերպության մասեր համարվող իր պերիֆերիական խմբակներով ընդուած և զնում իմ պահանջն»... (և վոչ միայն պերիֆերիական խմբակներով, այլև ամեն տեսակ բանվորական միություններով։ Հմմտ։ արձանագր. 242-րդ եջը՝ ընկ։ Ստրախովի³⁷ ձառից և վերը բերված քաղվածքները «Նամակ ընկերոջ»-ից) ... «Մնում են դեռևս առանձին անձերը, բայց այստեղ ել գեռ կարելի կլինի միքիչ սակարկել»։ Յես պատասխանեցի ընկ։ Ակսելրողին, վոր առհասարակ յես գեմ չեմ չեմ սակարկության, և այժմ պետք եղարգաբանեմ, թե ինչ իմաստով եր այդ սաված։ Հենց առանձին ան-

ձերի վերաբերմամբ է, այդ բոլոր պլոտիսորների, գիմնազիստների և այլն, վոր յես ամենից քիչ կհամաձայնելի զիջել։ բայց յեթե տարակույս հարուցվեց բանվորական կազմակերպությունների վերաբերմամբ, ապա յես կհամաձայնելի (չնայած այդ տարակույսների՝ վերը իմ կողմից ապացուցած լիակատար անհիմնության) իմ § 1-ին մի այլպիսի ծանոթագրություն ավելացնել։ «Այն բանվորական կազմակերպությունները, վորոնք ընդունում են մուս։ Սոց-Դեմոկր. Բանվ. Կուս։ ծրագիրն ու կանոնագրությունը, պետք և ըստ հնարավորության ավելի մեծ թվով մացվեն կուսակցական կազմակերպությունների թվի մեջ»։ Իհարկե, խիստ ասած, այլպիսի ցանկության տեղը կանոնագրությունը չե, վորը պետք և սահմանափակի իրավաբանական սահմանումներով, այլ պարզաբանական կոմենտարները, բրոցյուրները (և յես արդեն մատնանշեցի, վոր իմ բրոցյուրներում յես կանոնադրությունից շատ առաջ տվել եմ այլպիսի պարզաբանություններ), բայց այդպիսի ծանոթագրությունն իր մեջ գոնե չեր պարունակի սխալ, կազմալուծման հասցնելու ընդունակ մտքերի, ոպրոտանիստական դատողությունների^{*)}) և «անարխիստական կանցեացիաների» սավերն անգամ, վորոնք անտարակույս մտնում են Մարտովի ձեակերպման մեջ։

*) Մարտովի բանաձեւը հիմնագորելու վորձերի ժամանակ անխուսափելի-որեն յերեան յեկող այլպիսի գատառությանների թվին և պատկանում ու-ուհնապես ընկ։ Տրոցկու Քրազը (եջ 248 և 346), թե «ոպորտունիզմն սակած-գում և ավելի բարդ (կամ՝ վորոշվում և ավելի խորը) պատճառներով, քան կանոնադրության այս կամ այն կետը, — այն սաշանառում և բուրքուական գե-մոկրաբայի և պրուետարիատի զարգացման հարաբերական մակրպակից»... Բանն այն չե, թե կանոնադրության կետերը կարող են ոպորտունիզմ սակածել, այլ այն, վոր նրանց ողնությամբ ավելի կամ պակաս սուր զենք կոփենք ո-պարտունիզմի դեմ։ Վորքան ավելի խորն են նրա պատճառները, այնքան ավելի սուր պետք և լինի այդ զենքը։ Աւասի ոպորտունիզմի «խորը պատճառ-ներավ» արդարացնել մի ձեակերպում, վորը գաները բաց և անում նրա ո-ոաչ—ամենազարյուն պոչականություն է։ Յերբ ընկ։ Տրոցկին գեմ եր ընկ։ Լի-բերին, նա հասկանում եր, վոր կանոնադրությունը «կազմակերպված անվասահություն ե» ամբողջից գեպի իր մասը, առաջավոր զոկատի կողմից գեպի հետամնաց ջոկատը, իսկ յերբ ընկ։ Տրոցկին ընկ։ Լիբերի կողմը դուրս յեկալ, նա մոռացավ արդեն այդ և նույնիսկ արգարացնել սկսեց անվասահության (անվասահություն զեսպի ոպորտունիզմը) մեր այդ կազմակերպման քու-դուրյունն ու յերերունությունը «բարդ պատճառներով», «ոլորդետարիատի

Զակերտների մեջ բերածս վերջին արտահայտությունը պատկանում է ընկ. Պավլովիչին, վորը շատ արդարացի կերպով անարխիզմ համարեց «անպատախանատու և իրենք իրենց կուսակցության մեջ մտցնող» անդամների ճանաչումը: «Հասարակ լեզվով թարգմանած»—աղարդաբանում եր ընկ. Պավլովիչը իմ ձեւակերպումը ընկ. Լիբերի համար—այդ նշանակում է: «Քանի վոր դու կամենում ես կուսակցության անդամ լինել, պլատոնաբար չեմ միայն, վոր պետք ե ընդունես նաև կաղմակերպական հարաբերությունները»: Վոչ պահաս արդարացի կերպով մատնանշեց ընկ. Պավլովիչը հակասությունը ընկ. Մարտովի Փորմուլայի և գիտական սոցիալիզմի այն անդիմելի դրույթի միջև, վոր այնքան անհաջող կերպով մեջ բերեց նույն ընկ. Մարտովը: «Մեր կուսակցությունը անդիմակից պրոցեսի գիտակից արտահայտիչն է»: Հենց այդպես: Յեկ հենց այդ պատճառով սիսալ կլինի ձգտել այն բանին, վոր «յուրաքանչյուր գործադուլավոր» կարողանա իրեն անվանել կուսակցության անդամ, վորովհետեւ յեթե «յուրաքանչյուր գործադուլ» վո՛չ միայն տարերային արտահայտությունը լիներ գասակարգային հզոր բնագդի և դասակարգային պայքարի, վոր անիտուսափելիորեն գեղի սոցիալական հեղափոխություն և տանում, այլ այդ պրոցեսի գիտական արտահայտությունը, այն ժամանակ... այն ժամանակ ընդհանուր գործադուլը չեր լինի անաբիտիստական Փրազ, այն ժամանակ մեր կուսակցությունն

գարդացման մակարդակով» և այլն: Ընկ. Տրոցկու մյուս փաստարկումն ե. «այսողե կամ այնպես կաղմակերպված ինտելիգենտ յերիտասարդության համար շատ ամենի հեշտ և իրեն իրեն մտցնել (բնդկումն իմն ե) կուսակցության ցուցակների մեջ»: Հենց այդպես: Աւտոի ինտելիգենտական ճամագությունը և տառապում այն ձևակերպումը, վորի համաձայն նույնիսկ անկաղմակերպ տարրերն իրենց հայտարարում են կուսակցության անդամներ, և վոչ թե ձևակերպումը, վոր վերացնում ե գուցակների մեջ «իրեն ժայնելու» իրավունքը: Ընկ. Տրոցկին ասում է, վոր յեթե կ. կ.-ն «չճանաչի» ոսկրտունիստների կաղմակերպությունը, այդ կլինի միայն անձերի բնամորության պատճառով, իսկ քանի վոր այդ անձերը հայտնի յեն վրասես քաղաքական անհատականություններ, ապա վասնեգանի չեն նրանք, նրանց կարելի յե հեռացնել համակուսական բոցկոտի միջոցով: Այս ճիշտ և միայն դեպքերի նկատմամբ, յերբ հարկադր ե հեռացնել կուսակցությունից (ասենք այդ ել ճիշտ է կիսով չափ, վորովհետեւ կաղմակերպված կուսակցությունը հեռացնում և քվերի համարականի դեպքերի վերաբերմաբ, յերբ անհեթեթություն ե հեռացնելը, յերբ հարկավոր և միայն վերջին վերջությունը): Այդ միանդամայն սիսալ և շատ ամենի համարականի դեպքերի վերաբերմաբ, յերբ անհեթեթություն ե հեռացնելը, յերբ հարկավոր և միայն վերջինին:

այժմ և թ և միանգամից իրենով կծածկեր ամբողջ բանվոր գյուղակարգին և, հետևապես, միանգամից վերջ կտար ամբողջ բուրժուական հասարակությանը... Վորպեսզի իրոք գիտակից արտահայտիչ լինի, կուսակցությունը պետք է կարողանա այնպիսի կաղմակերպական հարաբերություններ մշակել, վորոնք ապահովելի լինի գիտակցականության վորոշ մակարդակ և սիստեմատիկուրեն բարձրացնելին այդ մակարդակը: «Յեթե արդեն գնալու լինենք Մարտովի ուղղով—ասաց ընկ. Պավլովիչը, —ամա նախ և առաջ պետք և դուքս գցենք ծրագիրն ընդունելու համար պետք ե այն յուրացնել և հասկանալ... Ծրագրի ընդունումը պայմանավորվում է քաղաքական գիտակցության բարձր մակարդակով»: Մենք յերբեք չենք թույլ տա, վոր ոգնությունը սոցիալ-դեմոկրատիային, վոր մասնակցությունը նրա զեկավարած պայքարին արհեստականորեն սահմանափակվի վորին (յուրացման, ըմբռնման և այլն) պահանջով, վորովհետեւ հենց այդ մասնակցությունն արդեն իր արտահայտման փաստով իսկ բարձրացնում է թե՛ գիտակցականությունը և թե՛ կաղմակերպական բնագդները, բայց քանի վոր մենք միացանիք և մի կուսակցություն կաղմեցինք պլանաշափ աշխատանքի համար, ապա մենք պետք և հոգանք այդ պլանաշափությունն ապահովությունը մասին:

Կ. կ.-ն կարող է դիմանել կուսակցության մեջ մտցնել վորոշ պայմաններով վոչ բոլորովին հուսալի, բայց աշխատունակ մի կաղմակերպություն՝ վորպեսզի փորձի նրան, փորպեսզի փորձի դարձնել նրան դեպի նշմարության ուղին, վորպեսզի իր գեկալարությամբ կասեցնի նրա մասնակի թեքումները և այլն: Այդպիսի կաղմակերպությունն մտցնելը վտանգավոր չե, յերեւ տահաւարեկ ամեն մեկին չի թույլարվում «իրեն մտցնելը» կուսակցության ցուցակների մեջ: Այդպիսի մտցնումը հաճախ ոսկրտակար կլինի սիսալ հայտաբերի և սիալ տակտիկայի բացահայտ և պատախանատու, վերահսկողության յենթակա արտահայտության (և քննության) համար: «Բայց յեթե իրավաբանական սահմանումները պետք ե համապատասխանեն փաստական հարաբերություններին, այն ժամանակ ընկ. Լենինի բնանաճեր պետք ե մերժվի»—ասում է ընկ. Տրոցկին և ասում է զարձյալ վորպես ոսկրտունիստ: Փաստական հարաբերությունները մեռած չեն, այլ ապրում են և զարգանում: Իրավաբանական սահմանումները կարող են համապատասխանել այդ հարաբերությունների պերոքեսիվ զարգացմանը, բայց կարող են նմանապես (յեթե այդ սահմանումները վատ են) «համապատասխանել» հետադիմությանը կամ լճացմանը: Այս վերջին դեպքն ել ընկ.

վոր ընկ. Պավլովիչի նախազդուշացումը ծրագրի վերաբերեամբ ավելրդ չեղալ, այդ յերեան յեկալ իսկույն և եր, ինչի նույն նիստի ընթացքում : Ընկ. Սկիմովն ու Լիբերը, վորոնք անցկացրին ընկ. Մարտովի ձեւակերպումը³⁷), իսկույն և յերեան թերին իրենց խական բնույթը, պահանջելով (եջ 254—255), վոր ծրագրի ընդունումը ևս (կուսակցության «անդամության» համար) լինի լոկ պլատոնական, ընդունվեն նրա «Հինական դրութիւնները» միայն : «Ընկ. Սկիմովի առաջարկը միանդամայն արամատական և ընկ. Մարտովի տեսակետից»—նկատել ընկ. Պավլովիչը :

* * *

Կանոնադրության § 1-ի շուրջն ստեղծված ձայների խմբավորումն ի հայտ բերեց միանգամայն նույն տիպի յերեւութի, ինչպես և լեզուների իրավահավասարության առթիվ ծաղած միջադեպում՝ իսկրայական մեծամասնությունից նրա (մոտավորապես) քառորդմասի հեռանալը հաղթանակի հնարավորություն և տալիս հակասիկրայականներին, վորոնց հետեւց դնում և «կենտրոնը» :

[ժ, է, 1, 1] սպարագրաֆները ներկա հրատարակությունից դուրս են դցված, վորովհետև դրանք պարունակում են զրեթե բացառապես կանոնադրության մանրամասնությունների վերաբերյալ մանր վեճերի կամ կուսակցության կենսարժական հիմնարկների անձնակազմի վերաբերյալ վեճերի նկարություններ : Վոչ այս և վոչ ել այն հետաքրքրականություն չունեն ժամանակակից ընթերցողի համար և վոչ ել կարեւը են «փոքրամասնության» ու «մեծամասնության» միջև նեղած առաջանությանները պարզաբնելու համար : Ինը ենք ենք միայն ի պարագանի վերը, վար վերաբերում և դեռև յերերորդ համագումարում շաշափած տակախական հարցին] :

... Հետաքրքրական, բայց, դժբախտարար, չափազանց կարծ ըստ եյության վեճ ծագեց լիբերալների մասին Ստարովերի առաջարկած բանաձեկի առթիվ : Բանաձեկն ընդունվեց համագումարի կողմից, ինչպես կարելի յե գատել նրա տակ դտնվող ստորագրություններից (եջ 357 և 358), վորովհետև «մեծամասնության» յերեք կողմնակից (Բարունը, Ռուլովը, Ռուբովը³⁸) ձայն տվին թե՝

*) Հոգուստ նրա 28 ձայն եր տրված, դեմ—22: Ութ հակախակրայականներց յոթը Մարտովի կողմն եյին, մեկն իմ կողմը: Առանց ոպղարանիստների ողնության ընկ. Մարտովը չեր անցկացնի իր ոպղարտունիստական Փորմուլան:

նրան, թե՝ Պէտքանովի բանաձեկն, անհաջող հակասություն չտեսնելով յերկուսի միջև: Առաջին հայացքից, նրանց միջև չկա անհաջող հակասություն, վորովհետև Պէտքանովին ընդհանուր սկզբունք և սահմանում, վորոշ սկզբունքային և տակտիկական վերաբերմունք և արտահայտում դեպի բուրդուական լիբերալիզմը Ռուսաստանում, իսկ Ստարովերինը փորձ և անում վորոշելու «լիբերալ կամ լիբերալ-դեմոկրատական հոսանքների» հետ կնքվելիք «Ժամանակավոր համաձայնությունների» բույլատրելիության կոնկրետ պայմանները: Յերկու բանաձեկների թեմաները տարրեր են: Բայց Ստարովերինը տառապում և հենց հաղաքական նապագությամբ, այդ պատճառով ել լինելով մանր և մանրախնդիր: Այն չի սահմանում ուսանական լիբերալիզմի դասակարգային բավանդակությունը, չի մատնանշում այդ լիբերալիզմն արտահայտող քաղաքական վորոշակի հոսանքները, այն չի պարզաբնակում պրոլետարիատին պրոպագանդայի և առիտացիայի նրա կիմնական խնդիրներն այդ վորոշակի հոսանքների վերաբերմամբ, այն շփոթում և (չորրեին իր ճապաղության) այնպիսի տարրեր բաներ, ինչպես ուսանողական շարժումը և «Օսвобոյցե»-ն³⁹, այն չափազանց մանրախնդիր կերպով կազուխտորեն տառաջադրում և յերեք կոնկրետ պայման, վորոնց դեպքում թույլատրելի յեն «Ժամանակալոր համաձայնությունները»: Քաղաքական ճապաղությունն այս դեպքում ել, ինչպես և ուրիշ շատ դեպքերում, տանում և դեպի կազուխտիկություն: Ընդհանուր սկզբունքի բացակայությունը և «պայմանները» թվարկելու փորձը տանում և դեպի այդ պայմանների մանրախնդիր և, խիստ ասած, աննիշում մատնանշումը: Իրոք, նայեցե՞ք Ստարովերի այս յերեք պայմաններին. 1) «լիբերալ կամ լիբերալ-դեմոկրատական հոսանքները» պետք և «պարզ ու աներկխմաստ կերպով հայտարարեն, վոր ինքնական կառավարության դեմ մղվող իրենց պայքարում նրանք վճռականորեն կանգնում են Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի կողմը»: Վո՞րն և լիբերալ և լիբերալ-դեմոկրատական հոսանքների ասրբերությունը: Այդ հարցին պատասխաններու համար բանաձեկ վոչ մի նյութ չի տալիս: Վո՞չ արդյոք այն, վոր լիբերալ հոսանքներն արտահայտում են բուրժուազիայի քաղաքականապես ամենանվազ առաջադիմական խավերի դիրքը, իսկ լիբերալ-դեմոկրատականները—բուրժուազիայի ամենաառաջազեմ խավերի և մանր բուրժուազիայի դիրքը: Յեթե այդ, ապա ընկ. Մարտովերը

մի՞թե հնարավոր և համարում, վոր բուրժուազիայի ամենանվազ առաջադեմ (բայց այնուամենայնիվ առաջադեմ, վորովհետեւ այլապես չեր կարելի խոսել լիբերալիզմի մասին) խավերը պմառականորեն կանգնեն սոցիալ-դեմոկրատիայի կողմը»: Այդ անհեթեթությունն է, և յեթե այդպիսի հոսանքի ներկայացուցիչները «հայտարարելին ել այդ բանը պարզ ու աներկիմաստ կերպով» (բոլորովին անհնարին յենթադրություն), ապա մենք, պրոլետարիատի կուսակցությունը, պարտավոր եյինք չխավատալ նրանց հայտարարություններին: Լիբերալ լինել և վճռականորեն կանդնել սոցիալ-դեմոկրատիայի կողմը, —մեկը ժխտում և մյուսին:

Այնուհետև: Յենթադրենք այսպիսի դեպք, վոր «լիբերալ կամ լիբերալ-դեմոկրատական հոսանքները» պարզ ու աներկիմաստ կերպով հայտարարեն, թե նրանք ինքնակալության դեմ մզկող իրենց կովի մեջ վճռականորեն կանխում են սոցիալիստենդափոխականների կողմը: Այս յենթադրությունը շատ ավելի անհավանական և (սոցիալիստ-հեղափոխականների ուղղության բուրժուական-դեմոկրատական երության պատճառով), քան ընկ. Ստարովերի յենթադրությունը: Նրա բանաձեռի իմաստով, այդ բանաձեռի ճապաղության ու կազուիստիկության պատճառով, դուրս ե գալիս, վոր այդ դեպքում ժամանակավոր համաձայնությունները նման լիբերալների հետ անբույլատրելի յեն: Մինչդեռ ընկ. Ստարովերի բանաձեռից բզիսող այդ անխուսափելի յեղակացությունը մեզ ուղղակի սխալ դրույթի յե հասցնում: Ժամանակավոր համաձայնությունները թույլատրելի յեն նաև սոցիալիստ-հեղափոխականների հետ (տե՛ս համադրումարի բանաձեռ նրանց մասին), հետևապես այն լիբերալների հետ ևս, վորոնք կկանդնեն սոցիալիստ-հեղափոխականների կողմը:

Յերկրորդ պայմանը —յեթե այդ հոսանքներն իրենց ծրագրերի մեջ չառաջադրեն այնպիսի պահանջներ, վորոնք դեմ են գնում բանվոր դասակարգի և առևասարակ դեմոկրատիայի շահերին կամ մթագնում են նրանց գիտակցությունը»: Այստեղ ևս նույն սխալն է —չեն յեղել և չեն կարող լինել այնպիսի լիբերալ-դեմոկրատական հոսանքներ, վորոնք իրենց ծրագրերում բանվոր դասակարգի շահերին ներհակ պահանջներ չառաջադրեցին և չմթագնելին նրա (պրոլետարիատի) գիտակցությունը: Նույնիսկ ժեր լիբերալ-դեմոկրատական հոսանքի ամենադժեմուկրատական

ֆրակցիաներից մեկը, սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան, իր ծրագրում, վոր խճճված է, ինչպես և բոլոր լիբերալ ծրագրը, առաջադրում ե այնպիսի պահանջներ, վորոնք դեմ են դնում բանվոր դասակարգի շահերին և մթագնում նրա գիտակցությունը: Այս փաստից պետք ե յեղակացնել «բուրժուազիայի աղաւագրական շարժման սահմանադրակության և անբավարարության մերկացման» անհրաժեշտությունը, և վոչ ամենելին ժամանակավոր համաձայնությունների անթույլատրելիությունը:

Վերջապես, ընկ. Ստարովերի յերրորդ «պայմանը» ևս (վոր լիբերալ-դեմոկրատականներն իրենց կովի լոգունդ դարձնեն ընդհանուր, համասար, գաղտնի և ուղղակի ընտրական իրավունքը) սխալ և այն ընդհանուր դրումով, վոր նրան և տրված անիներ ամեն գեղքում անթույլատրելի հայտարարել ժամանակավոր և մասնավոր համաձայնություններն այնպիսի լիբերալ-դեմոկրատական հոսանքների հետ, վորոնք ցենզային սահմանադրության լոգունդը կառաջադրելին: Իսկապես, հենց այս կարգին պետք ե պատկանելու պ. պ. «սալորուժդենյականների» «հոսանքը», բայց մարքսիզմի սկզբանքների հետ անհամատեղելի քաղաքական կարճատեսություն կլիներ, յեթե կաշկանդելինք մեր ձեռքերը, նախապես արդեկելով «ժամանակավոր համաձայնությունները» թեկուղ ամենայերկշռությունների հետ:

Ամփոփում —ընկ. Ստարովերի բանաձեռ, վոր ստորագրված և նաև ընկ. ընկ. Ստարովի և Ակսելրոդի կողմից, սխալ և, և յերրորդ համագումարը խելացի կվարվի, յեթե վերացնի այն: Այն տառապում և թերորիստիկական դիրքի բազական նապակություն կլիների մեջ այդպիսի հոսանքի այլական կազությունների կազությունների կությամբ: Նա շփոքում ե յերկու հարց—1) ամեն մի լիբերալ-դեմոկրատական հոսանքի «հականեղափոխական և հակապրութարական» գծերի մերկացումն ու այդ գծերի դեմ պայքարելու պարտադրությունը և 2) ամեն մի այդպիսի հոսանքի հետ ժամանակավոր և մասնավոր համաձայնություններ կնելու պայմանը: Նա չի տալիս այն, ինչ վոր հարկավոր ե (լիբերալիզմի դասակարգային բովանդակության վերլուծություն), և տալիս ե այն, ինչ վոր հարկավոր չե («պայմանների» առաջադրում): Կուտակայական համագումարում առևասարակ անհեթեթություն է ժամանակավոր համաձայնությունների ամենա

մանակալոր համաձայնությունների կոնկրետ «պայմաններ» մշտելը, յերբ ասպարեզի վրա չկա նույնիսկ վորոշ կոնտրահենտ—սուբյեկտ այդպիսի հնարավոր համաձայնությունների համար. յեթե մինչև անգամ վներ ել այդպիսի «սուբյեկտ», ապա հարյուրապատճել ավելի բանական կլիներ ժամանակավոր համաձայնության «պայմանների» վորոշումը թողնել կուսակցության կենտրոնական հիմնարկներին, ինչպես և այդ արվել ե համագումարի կողմից պ. պ. սոցիալիստ-հեղափոխականների «հոսանքի» վերաբերմաբ (տե՛ս Պլեխանովի մտցրած փոփոխությունն ընկ. Ակմելովի բանաձեկի վերջում, արձանադրությունների եջ 362 և 15):

Ինչ վերաբերում ե «փոքրամասնության» առարկություններին Պլեխանովի բանաձեկի դեմ, ապա ընկ. Մարտովի միակ փաստարկումն ասում եր —Պլեխանովի բանաձեկը «վերջացնում է չնչին մի յեղրակացությամբ—պետք ե մերկացնել մի դրականագետի: Այդ արդյոք նույնը չի լինի, թե «ճանճի դեմ» գնանք «կացնով» (եջ 358): Այս փաստարկումը, վորի մեջ մտքի բացակայությունը քողարկվում ե «չնչին յեղրակացություն» սուր խոսքով, —մեղ հավակնոտ Փրազի նոր նմուշ ե տալիս: Նախ, Պլեխանովի բանաձեկը խոսում ե այն մասին, թե պետք ե «մերկացնել պրոլետարիատի առաջ բուրժուազիայի աղատադրական շարժման սահմանափակությունն ու անբավարարությունն ամենուրեք, վորտեղ ել արտահայտվեն այդ սահմանափակությունն ու անբավարարությունը»: Ուստի զտագույն դատարկաբանություն ե ընկ. Մարտովի այն պնդումը (Լիդայի համագումարում, արձանադրությունների 88-րդ եջ), թե «ամբողջ ուշադրությունը պետք ե դարձված լինի մի Մարտովեյի վրա, մի լիբերալի վրա»: Յերկրորդ, պ. Մարտովեյին համեմատել «ճանճի» հետ, յերբ խոսքը վերաբերում ե ոուս լիբերալների հետ ժամանակավոր համաձայնություններ կնքելու հնարավորությանը, նշանակում ե սուր խոսքին գոհաբեկ տարրական քաղաքական ակներեւությունը: Վո՞չ, պ. Մարտովեն ճանճ չե, այլ քաղաքական մեծություն, և նա այդպիսին ե վոչ այն պատճառով, վոր անձամբ շատ խոչոր դեմք ե: Քաղաքական մեծության նշանակություն ե տալիս նրան նրա դիրքը, ոուսական լիբերալիդմի, դեթ փոքրիշտե գործունակ և կաղմակերպված լիբերալիդմի, միակ ներկայացուցչի դիրքն անլեղալ աշխարհում: Ուստի խոսել ոուս լիբերալների մասին և նրանց նկատմամբ մեր կուսակցության վերաբերմունքի մասին

և նկատի չունենալ հենց պ. Մարտովեյին, և նոց «Օսвобոյդենի»—նշանակում ե խոսել վոչինչ չասելու համար: Կամ, գուցե, ընկ. Մարտովը կիորձի մատնանշել մեզ զեք մեկ յեզակի «լիբերալ կամ լիբերալ-դեմոկրատական հոսանք» մուսաստանում, վո՞ր դեթ հեռավորապես կարողանար համեմատվել ներկայումս «ոսվորուդենյական» հոսանքի հետ: Հետաքրքրակա՞ն կլիներ նայել այդպիսի փորձին:

«Մարտովեյի անունը վոչինչ չի ասում բանվորներին», —ընկ. Մարտովին պաշտպանում եր ընկ. Կոստրովը: Այս արդեն, թո՞ղ չզայրանան ընկ. Կոստրովն ու ընկ. Մարտովը, —Ակմելովյան փաստարկում ե: Այս արդեն նման ե պրոլետարիատին՝ սեռական հոլովով:

Վո՞րդիվի բանվորների «վոչինչ չի ասում Մարտովեյի անունը» (և «Օսвобոյդենի»—յի անունը, վոր տրվում ե ընկ. Պլեխանովի բանաձեկի մեջ պ. Մարտովեյի անվան կողքին): Այնպիսիներին, վորոնք մինչև վերջին աստիճանը քիչ են ծանոթ կամ բոլորովին ծանոթ չեն «լիբերալ և լիբերալ-դեմոկրատական հոսանքներին» մուսաստանում: Զարց ե ծագում, թե ի՞նչը պետք ե լինի մեր կուսակցական համագումարի վերաբերմունքը դեպի այդպիսի բանվորները. մ՞յն արդյոք, վոր կուսակցության անդամներին հանձնարարի ծանոթացնել այդ բանվորներին մուսաստանի միակ վորոշակի լիբերալ հոսանքին, թե՞ այն, վոր լրարյան արվի բանվորներին քիչ ծանոթ անուն այն պատճառով, վոր նրանք իսկապես քիչ են ծանոթ քաղաքականությանը: Յեթե ընկ. Կոստրովը, ընկ. Ակմելովի հետեւ անելով առաջին քայլը, չկամենա անել նրա հետևից յերկրորդ քայլն ել, այն ժամանակ նա այդ հարցը հավաստապես կլուծի առաջին իմաստով: Իսկ այն լուծելով առաջին իմաստով, նա կտեսնի, թե վորքն անհիմն ե յեղել նրա փաստարկումը: Համեմայն դեպք «Մարտովեյ» և «Օսвобոյդեն» բառերը Պլեխանովի բանաձեկի մեջ շատ ավելի բան կարող են տալ բանվորներին, քան «լիբերալ և լիբերալ-դեմոկրատական» հոսանքը բառերը Մարտովերի բանաձեկի մեջ:

Ոուս բանվորը չի կարող ներկայումս գործնականում ծանոթանալ մեր լիբերալիդմի փոքրիշտե շիտակ քաղաքական անդենցներին այլապես, քան «Օսвобոյդենի»—յի միջնորդ: Լիբերալ լեզակ գրականությունն այսեղ անպետք ե հենց իր

մշուշայնության պատճառով։ Յեզ մենք պետք են վորքան կարելի յեւ ամելի յեսանդուն կերպով (և բանօրոնների ըստ հնարավորության ամելի լայն մասսաների առաջ) ուղղենք մեր քննադատության զենքը ոսկորոժութենյականների դեմ, վորպեսզի ուսուական պլութությամբ գալիք հեղափոխության ժամանակ կարողանալ զենքի իսկական քննադատությամբ կառեցնել ալ. ալ. ոսկորոժութենյականների՝ հեղաշրջման դեմոկրատական բնույթը խուզելու անխուսափելի փորձերը։

ՃԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՇ ՊԱՅՔԱՐԻ ԸՆԴՀԱՆԻՐ ՊԱՏԿԵՐԸ։ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՅԵՎ ՈՊՈՐՏՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԹԵՎՈԼ

Մենք այժմ պետք են ամփոփումներ կատարենք, վորպեսզի համագումարի ամբողջ նյութի հիման վրա պատասխաննենք այն հարցին, թե վո՞րպիսի տարրերից, խմբերից և յերանդներից կազմվեց այն վերջնական մեծամասնությունն ու վորքամասնությունը, վորին վիճակված եր վորոշ ժամանակ մեր հիմնական կուսակցական բաժանումը դառնալ։ Անհրաժեշտ են ամփոփել սկզբունքային, թեորիական և տակտիկական յերանդների վերաբերմամբ յեղած այն ամբողջ նյութը, վոր այնքան առաջործեն ներկայացնում են համագումարի արձանադրությունները։ Առանց ընդհանուր «ամփոփման», առանց ամբողջ համագումարի և քվեարկությունների ժամանակ յերեան յեկած բոլոր գլխավորագույն խմբավորումների ընդհանուր պատկերը տալու՝ այդ նյութը մնում է չափազանց մասնատված, ցրված, այնպես վոր առաջին հայացքից այս կամ այն առանձին խմբավորումները թվում են պատահական, մասնավանդ նրան, ով նեղություն չի կրում ինքնուրույնութեն և ամենակողմանի կերպով ուսումնասիրելու համագումարի արձանադրությունները (իսկ շա՞տ կան արդյոք այնպիսի ընթերցողներ, վորոնք այդ նեղությունը կրել են)։

Անդիմական պառլամենտական հաշվետվությունների մեջ հաճախ պատահում են մի բնորոշ խոսք—division—բաժանում։ Պարագար «բաժանվել ե» այսինքն մեծամասնության ու վորքամասնության, —ասուա են վորոշ հարցի քվեարկման մասին։ Մեր սոցիալ-դեմոկրատական պարագար «բաժանումը» համագումարում քննածք դանաղան հարցերի առթիվ տալիս են իր տեսակի յեզակի,


լրիվությամբ և նշգրաւությամբ անփոխարիմելի պատկերը կուտակության մեջ տեղի ունեցած ներքին պայքարի, նրա յերանդների և խմբերի պատկերը։ Վորպեսզի այս պատկերն ակնառու դարձնեմ, վորպեսզի ստանամ իսկական պատկերը, և վոչ թե անկատ, կոստորակային, մեկուսացած փաստեր ու փաստիկներ, վորպեսզի վերջ դնեմ առանձին քվեարկությունների վերաբերյալ անվերջ և անիմաստ վեճերին (ո՞վ ե ում ձայն տվել և ո՞վ ե ում ողնել), յես վորոշեցի փորձ անել մեր համագումարի «բաժանումների» բնոր հիմնական տիպերը պատկերացնելու դիագրամի ձևով։ Այսպիսի միջոցը համաստապես շատ ու շատ շատերին տարորինակ կթվա, բայց յես տարակուսում եմ, կարելի՞ յէ արդյոք դանել շարադրանքի այլ յեղանակ, այնպիսի շարադրանքի, վոր իրոք ընդհանրացնող և ամփոփող լիներ, ըստ հնարավորության ավելի լիակատար և ամենից ամելի ճշգրիտ լիներ։ Վորոշ առաջարկի թեր և ձայն տվել, թե դեմ այս կամ այն պատգամավորը, —այդ կարելի յէ անպայման ճշտությամբ հաստատել անվանական քվեարկությունների ժամանակ, իսկ միքանի կարենոր վոչ-անկանական քվեարկությունների վերաբերմամբ այդ կարելի յէ վորոշել, արձանագրությունների հիման վրա, շատ մեծ աստիճանի հավանականությամբ, բավական չափով մոտենալով ճշմարտության։ Յեթե ընդսմին ուշադրության առնենք բնոր անոխանական քվեարկություններն ու այն բոլոր վոչ-անվանական քվեարկությունները, վորոնց մեջ շոշափվում եյին վոքքիշատե կարենոր (որինակ, դատելով ըստ այնմ, թե վորքան հանգամանորեն ու կրծոտ եյին կատարմակում գիճաբանությունները) հարցեր, ապա կստացվի մեր ներկուակացական պայքարի պատկերացումը, վոր աչքի կընկնի, առկա նյութերը նկատի առած, իր ամենահասանելի որյեկտիվությամբ։ Ընդսմին լուսանկարչական պատկերացման փոխարեն, այսինքն ամեն մի քվեարկության պատկերացման՝ առանձին, մենք կաշխատենք տալ պատկերը, այսինքն բերել քվեարկությունների բալոր գլխավոր տիպերը, անտեսելով համեմատաբար անկարեսը շեղումներն ու այլատեսակությունները, վորոնք միայն ինձնել կարող եյին գործը։ Համենայն դեպս, արձանագրությունների հիման վրա ամեն վոք ի վիճակի կլինի ստուգել մեր տված պատկերի ամեն մի գիճը, լրացնել այդ պատկերը ինչպիսի առանձին քվեարկությամբ վոր կամենում ե, մի խոսքով՝ քննադատել այն

Վո՞չ միայն նկատառումների, ասրակույթների և յեղակի կաղուա-ների մատնանշումների միջոցով, այլ ուրիշ պատկեր կազմելով միմնույն նյութի հիման վրա:

Դիագրամի վրա ցույց տալով քվեարկությանը մասնակցած յուրաքանչյուր պատրամավորի, մենք հատուկ շտրիխներով կնշենք այն չորս հիմնական խմբերը, վոր մենք մանրամասն քննության առանք համագումարում տեղի ունեցած վիճարանությունների ամբողջ ընթացքի ժամանակը, այն ե՝ 1) մեծամասնության իսկրայականներին, 2) փոքրամասնության իսկրայականներին, 3) «կենտրոնը», 4) հակախսկրայականներին։ Այդ խմբերի սկզբունքային յերանդների տարբերությունը մենք տեսանք բազմաթիվ որինակների մեջ, և յեթե վորեւ մեկին դուր չեն գալիս խմբերի անունները, վոր զիգզագների սիրահարներին չափազանց հիշեցնում են «Искра»-յի կազմակերպության և «Искра»-յի ուղղության մասին, ապա մենք կնկատենք նրանց, վոր բանն անունները չեն։ Այժմ, յերբ մենք յերանդները քննել ենք համագումարի բոլոր վիճարանությունների ընթացքում, հեշտությամբ կարելի յե արդեն սահմանված և սովորական կուսակցական անունները (վոր վոմանց ականջն են ծակում) փոխարինել խմբերի մեջ գոյություն ունեցող յերանդների եյության բնորոշումով։ Այդպիսի փոխարինումով մենք կստանայինք միենույն չորս խմբի համար հետեւյալ անունները։ 1) հետեւյական հեղափոխական սոցիալ-դեմոկրատաներ, 2) փոքրիկ ուղղութունիստներ, 3) միջակ ուղղութունիստներ և 4) մեծ ուղղութունիստներ (մեր ուսական մասշտաբով մեծ)։

Անցնենք մանրամասն շարադրելու, թե քվեարկությունների ինչ ախարէր են «Հանված» հետեւյալ դիագրամի մեջ (տե՛ս «Համագումարում տեղի ունեցած պայքարի ընդհանուր պատկեր» դիագրամը)։

Ա.Ա.-Գ.Բ.Կ. ՅԵՐԿՐՈՒԹ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏԵՂԻ ԱԽՆԵՑԱՄ ՊԱՅՔԱՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿՐԸ 1903 թ



+ և — նշանով թվանշանները նշանակում են վարոշ հասցերում թիվ կամ դեմ արված ձայների ընդհանուր թիվը։ Շերտիկների ժայրի կողմի թվանշանները նշանակում են չորս խմբերից յուրաքանչյուրի ձայների թիվը։ Թե ինչ տեսակի քվեարկություններ են ընդգրկում A—D տիպերը շարադրված և անքառաւմ։

	մեծամասնության իսկրայականներ
	փոքրամասնության իսկրայականներ
	կենտրոն
	հակախսկրայականներ

Քվեարկությունների առաջին տիպն (A) ընդգրկում ե այն դեպքերը, յերբ իսկրայականների հետ զնում եր «կենտրոնը» հակախսկրայականների կամ նրանց մի մասի դեմ։ Այս տիպին վերաբերում են՝ ծրագիրն ամբողջությամբ քվեարկելու դեպքը (միայն ընկ. Ակլմովը ձեռնպահ սկզբունքային բանաձեռի քվեարկումը (բոլոր թիվ եյին, բացի հինգ բունդականներից), Բունդի կանոնագրության § 2-րդի քվեարկությունը (մեր գեմ եյին հինգ բունդական, ձեռնպահ մնացին հինգ հոգի—Մարտինովը, Ակեմովը, Բրուկերը և Մախովը յերկու ձայնով, մնացածները մեզ

Հետ ելին). այս ֆվեարկությունն էլ ներկայացված է Ա դիագրամում: Հետո, նույն տիպի ելին յերեք քվեարկություն «Իշկր»-ն կուսակցության կենտրոնական որդան հաստատելու հարցի առթիվ. խմբադրությունը (հինգ ձայն) ձեռնպահ եր, բոլոր յերեք քվեարկությունների մեջ դեմ ելին յերկուսը (Ակխմովն ու Բլուկերը) և, բացի դրանից, «Իշկր»-ն հաստատելու մոտիվների քվեարկման ժամանակ ձեռնպահ մնացին հինգ բունդական և ընկարտինովը*):

Քվեարկությունների քննվող տիպը պատասխան է տալիս՝ մի չափազանց հետաքրքրական և կարևոր հարցի, այն եւ՝ յերբ եր համագումարի «կենտրոնը» դնում խորայականների հետ: Կամ այն ժամանակ, յերբ հակախսկրայականները ևս մեզ ենա ելին, չնչին բացառություններով (ծրագրի ընդունումը, «Իշկր»-յի հաստատումը, մոտիվներից անկախ), կամ այն ժամանակ, յերբ բանը վերաբերում եր այնպիսի հայտարարությունների, վորոնք դեռևս անմիջականորեն չեն պարտավորեցնում վորչ քաղաքական դիրք գրավելու («Իշկր»-յի կազմակերպական աշխատանքի ընդունումը դեռևս չի պարտավորեցնում դործնականում կիրառել նրա կազմակերպական քաղաքականությունը մասնավոր խմբերի վերաբերմամբ. Փեղերացիայի մերժումը դեռ չի խանգարում ձեռնպահ մնալ Փեղերացիայի կոնկրետ նախադի հարցում, ինչպես տեսանք ընկ. Մակովի որինակում): Մենք վերը տեսանք արդեն, խոսելով առհասարակ համագումարի խմբակությունների նշանակության մասին, թե վոր աստիճանի սիալ և ներկայանում այդ հարցը պաշտոնական «Իշկր»-յի պաշտօնական շարադրանքի մեջ. «Իշկր»-ն (ընկ. Մարտովի բերանով) բողարկում և մքնացնում է տարբերությունը խորայականների և «կենտրոնի» միջև, հետևողական հեղափոխական

*.) Ինչու գիտարամի վրա պատկերացնելու համար վերցված է Հենց Բունդի կանոնադրության § 2-րդի քվեարկումը: Այն պատճառով, վոր «Իշկր»-ն ընդունելու քվեարկություններն ավելի պակաս չափով են լրիդ, իսկ ծբագրի և Փեղերացիայի հարցերի քվեարկությունները նվազ վորոշակի կոնկրետ քաղաքական վճիռների յեն վերաբերում: Առհասարակ նոյնատեսակ քվեարկություններից այս կամ այն քվեարկության ընտրությունն ամենենին չի փոխի պատկերի հիմնական գծերը, ինչպես հեշտությունը կհամոզվի դրանում յաւրաքանչյուր վոր, համապատասխան փոխություններ առելուք:

սոցիալ-դեմոկրատների և ոպօրտունիստների միջև, հիշատակելով այնպիսի դեպքեր, յերբ հակախսկրայականներն ել ելին գնում մեզ են: Նույնիսկ գերմանական ու ֆրանսական ոպօրտունիստներից «ամենաաշակողմյանները» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեջ դեմ չեն ձայն տալիս այնպիսի կետերի, ինչպես ծրագիրն իր ամբողջությամբ ընդունելի եւ:

Քվեարկությունների յերկորորդ տիպը (Բ) ընդուրկում է այն դեսլքերը, յերբ հետևողական և անհետևողական խորացյականները միասին ելին գնում ընդգեմ բոլոր հակախսկրայականների և ամբողջ «կենտրոնի»: Այդ դեսլքերը վերաբերում են, դիմավորակես, այն հարցերին, յերբ բանը խորայական քաղաքականության կոնկրետ-վորոշակի ոլլանների կենապործմանն եր վերաբերում, յերբ խոսքը «Իշկր»-ի ընդունման մասին եր՝ գործով և վոչ թե խոսքով միայն: Այս կետին եւ վերաբերում կազմ կ. մ. դ հետ ծաղած միջադեպը*), կուսակցության մեջ բունդի ունեցած տեղի հարցն առաջին տեղը զնելը, «Южնայ Ռածոնի»-ի խմբի ցրումը, յերկու քվեարկությունը ադրաբային ծրագրի մասին և, վերջապես, վեցերորդ, քվեարկությունը ընդգեմ նույն. Սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան Միության («Ռածոն Ջոլո»-յի), այսինքն՝ արտասահմանում Լիդան կուսակցության միակ կազմակերպություն համարելը: Հին, նախակուսակցական խմբակայնությունը, ոպորտունիստական կազմակերպությունների կամ խմբակների շահերը, մարքսիզմի նեղ ըմբռնումն այսակեղ պայքարում ելին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ռեպ-

*) Հենց այդ քվեարկությունն է պատկերացված Ե գիտարամի մեջ: Խորացականներն ունենին 32 ձայն, բունդականի բանաձեռն ձայն ամին 10 հոդի: Նկատենք, վոր այս տիպի քվեարկությունների մեջ չկա վոչ մի անվանեկան քվեարկություն: Պատգամալորների բաշխումը լոկ աշադին աստիճանի 4-ավանականությամբ ցույց են տալիս յերկու տեսակի տվյալները. 1) վիճաբեռնությունների մեջ խորայականների յերկու խմբի հոկտորներն եւ արտահայտվում են թեր, հակախսկրայականների և կենտրոնի համարները՝ դեմ. 2) «Ծեր» տվյած ձայնների թվերը միշտ շատ մոտ են 33-ին:—Զովեաք և մոռածալ նոյնական վոր, վոր վերլուծելով համագումարում տեղի ունեցած վիճաբանությունները, մենք նշել ենք, քվեարկություններից զատ ես, ամբազ մի շարք գեղիքներ, յերբ «կենտրոնը» գնացել և հակախսկրայականների (ոպորտունիստների) հետ մեր դեմ: Դրան են վերաբերում զեմոկրատական պահանջներից բորբոքմակ արժեքագրության, ոպազիցիոն տարբերին ողիքերու, յենտրալիզմը սահմանափակելու և այլ արթերը:

բանքութեն կոփուն և հետեւողական քաղաքարկանության դեմ. փոքրամասնությանը պատկանող խլրայտկանները գեռնս մեզ հետ ելին զնում ամբողջ մի շարք վեպքերում, ամբողջ մի շարք խիստ կարևոր (Կազմ. Կ.-ի, «Южный Рабочий»-ի, «Рабочее Дело»-ի աեսակետից) քիեարկությունների ժամանակ, ...մինչեւ վար շոշափվեց նրանց սեփական խմբակայնությունը, նրանց սեփական անհետեղականությունը: Քննվող տիպի «բաժանումները» ակնառու կերպով ցույց են տալիս, վոր մեր սկզբունքները կենապոլծելու մի շարք հարցերում կենտրոնը գնում եր հականիրայականների հետ, շատ ավելի մոտ եր նրանց, քան թե մեզ, գրքով շատ ավելի հակած եր գեղի ոտցիալ-դեմոկրատիայի ոպրոտունիստական, քան թե հեղափոխական թիւ: Անունով «խլրայտկանները», վորոնք ամաչում ելին խլրայտկաններ լինելոց, յերեան ելին բերում իրենց բնությունը, և անխուսափելի պայքարը քիչ ջղայնություն չեր մացնում, վորի շնորհիվ ամենից քիչ ժամանող և ամենատպալորվող անձերի համար քողարկում եր այդ պայքարում դրսորվող սկզբունքային յերանդների նշանակությունը: Բայց այժմ, յերբ վորոշ չափով թուլացել ե պայքարի յեռը և արձանագրությունները մնացել են վորպես մի շարք տաք ճակատամարտերի որյեկտիվ եքստրակտ, այժմ իրենց աշխերը փակող մարդիկ միայն կարող են չտեսնել, վոր Մախովների ու Յեղորովների միացումը Ակիմովների ու Լիբերների հետ պատհականություն չեր և չեր կարող պատահականություն լինել:

Համագումարում տեղի ունեցած քիեարկությունների յերրորդ տիպը, վոր ընդգրկում ե գիտաբամի հինգ մասից վերջին յերեքը (այն ե՝ Բ, Գ և Դ), բնորոշվում ե նրանով, վոր խլրայտկանների փոքր մասը բաժանվում է անցնում ե հակախլրայտկանների կողմբ, վորոնք այդ պատճառով ել հաղթում են (քանի ուում են համագումարում): Վորպեսզի լիակատար ձըշշըրտությամբ քննության առնենք խլրայտկան փոքրամասնության՝ հակախլրայտկանների հետ կազմած այս կուլիցիայի դարպացմը, բերվում են այս տեսակի անվանական քիեարկությունների բոլոր յերեք հիմնական տիպերը: Ե—այդ լեզուների իրավակառության հարցի վերաբերյալ քիեարկությունն ե (վերցված ե այդ կետի վերաբերյալ անվանական քիե-

արկություններից վերջինը, վորպես ամենից լիակատարը): Բոլոր հակախլրայտկաններն ու ամբողջ կենտրոնն ամուր կանգնած են մեր դեմ, իսկ խլրայտկաններից բաժանվել ե մեծամասնության մի մասը և փոքրամասնության մի մասը: Դեռևս չի յերկում, թե վոր խլրայտկաններն են ընդունակ վերջնական ու հաստատում կուլիցիայի՝ համագրումարի ոպրոտունիստական «աջակողմի» հետ: Այնուհետև, բայց այս քիեարկությունը—կանոնադրության առաջին պարագարագի մասին (յերկու քիեարկություններից վերցված ե ավելի վորոշակին, այսինքն՝ յերբ վոչ վոք ձեռնպահ չեր մնացել): Կուլիցիան ուրվագծված ե ավելի ռեյլի կազմիվ ավելի հաստատում. փոքրամասնությանը պատկանող խլրայտկանները բոլորն արդեն կանգնած են Ակիմովի և լիբերի կողմը, մեծամասնությանը պատկանող խլրայտկաններից—շատ փոքրիկ թիվ, վոր փոխհաստոցում ե մեր կողմն անցած յերեք պատղամավորին «կենտրոնից» և մեկին՝ հակախլրայտկաններից: Բայց ական ե մի հասարակ հայացք գցել դիտամի վրա, վորպեսզի դրանում համազենք, թե ինչ տարրեր են պատմաբար և ժամանակավորապես անցել մերթ այս, մերթ այն կողմը և ովքեր են անհաղելի մղումով գնացել դեպի հաստատում կուլիցիան Ակիմովների հետ: Վերջին քիեարկությունից (Դ—կենտ. Որդ., Կ. Կ.—ի և Կուսակցության Խորհրդի ընտրությունները), վոր հենց ցույց ե տալիս վերջնական բաժանումը մեծամասնության ու փոքրամասնության, պարզ յերեսում ե խլրայտկան փոքրամասնության լիակատար միաձուլումն ամբողջ «կենտրոնի» և հակախլրայտկանների մեացորդների հետ: Ութ հակախլրայտկաններից այդ ժամանակ համագումարում մնացել եր միայն ընկ. Բրուկերը (վորին ընկ. Ակիմովը պարզաբանեց արդեն նրա սխալը և վորը դրամից իրավամբ իրեն պատկանող տեղը մարտովականների շարքերում): Ամենից «աջակողմյան» ոպրոտունիստաների յոթնյակի հեռանալը վճռեց ընտրությունների բախտն ընդդեմ Մարտովի*:

* 2-րդ համագումարից հետացած յոթ ոպրոտունիստներից չինչը բաժնական ելին (Բանգը կուսակցությունից գուրս յեկալ յերկրորդ համագումարում՝ ֆեղերատիվ սկզբունքը մերժվելուց հետո) և յերկուսը՝ «ուրախչեղեկան» ընկ. Մարտինովն ու ընկ. Ակիմովը: Այս վերջինները համագումարից հետոցան այն վորոշումից հետո, վորով կուսակցության արտասահմանյան

Յեկ ահա այժմ տանք համադումարի հանրագումարը, հենց վելով ամեն տիպի քէերկությունների մէրաբերյալ որյեկտիլ տվյալների վրա:

Ետք ե խոսվել մեր հսմադումարում դոյացած մեծամասնության «պատահական» բնույթի մասին: Դիմուրամից պարզ յերեսում ե, վոր մի իմաստով, բայց միայն մի, կարելի յե պատահական անվանել մեծամասնությունը, ևնց այն իմաստով, վոր իր պատահարար հեռացավ «աջակողմին» ամենաուղղորդունիստական տարրերի յոթնյակը: Վորչափով պատահական ե այդ հեռանալը, այդ չափով ել (վոչ ավելի) պատահական ե և մեր մեծամասնությունը: Դիմուրամի վրա գցած հասարակ հայացքը յերկար դատողություններից ավելի լավ ե ցույց տալիս, թե ուժ կողմը կլիներ, պես ե լիներ այդ յոթնյակը*: Բայց հարց ե ծառում, թե վո՞րչափի խկացես ողատահական կարելի յե համարել այդ յոթնյակի հեռանալը: Ահա մի հարց, վոր չեն սիրում տալ իրենց մարդիկ, վորոնք հաճույքով խոսում են մեծամասնության «պատահականության» մասին: Նրանց համար այդ անխորժ հարց ե: Պատահակա՞՞ն ե արդյոք այն, վոր հեռացան մեր կուսակցության աջակողմյան թերի, և վոչ թե ձախակողմյանի ամենամոլի ներկայացուցիչները: Պատահակա՞՞ն ե արդյոք այն, վոր հեռացան ոպորտունիստները, և վոչ թե հետեւողական հեղափոխական սոցիալ-դեմոկրատները: Արդյոք այդ «պատահարար» հեռանալը վորոշ կապ չունի՞ ոպորտունիստական թերի գեմ ուղղղված այն սրայքարի հետ, վոր մղվում եր ամբողջ համադումարի ընթացքում և վորն այնպէ՞ս ակնառու կերպով յերեան ե դամբամեր դիմուրամում:

Բավական ե զնեք փոքրամասնության համար անախորժ այս հարցերը, վորպեսզի պարզեք ձեզ համար, թե վորպիսի վասահեն մեծամասնության պատահականության վերտի-

կազմակերպություն համարվեց միայն խրայական լիքան, այսինքն ցըման յենթարկվեց սարուհեղական արտասահմանյան «մոռս սոցիալ-դեմոկրատների մեռությունը»:

* Մենք ստորև կտեսնենք, վոր համադումարից հետաքեզ պեկ, թե՝ նրան ամենից նարազական վարոնեդերի կօժիտեն ևնց ուղղված իրենց համականքը հայտնեցին «փոքրամասնությամբ»:

Երազ իրասակցությունները: Այդ այն անտարակուսելի և անառարկելի փասուն ե, վոր փոքրամասնություն կազմեցին մեր կուսակցության այն անդամները, վորոնք ամենից շատ են հակված գեղակի ոպրոտունիզմը: Փոքրամասնություն կազմեցին կուսակցության թեորիապես ամենաքիչ կայուն, սկզբունքորեն ամենաքիչ տոկուն տարրերը: Փոքրամասնությունը դոյացավ կուսակցության հենց աջակողմյան թիգ: Մեծամասնության և փոքրամասնության բաժանմենքներում ուղղակի և անխուսափելի շարունակությունն ե սոցիալ-դեմոկրատիայի այն բաժանման, վոր արտահայտվում ե հեղափոխական և ոպորտունիստական հոսանքներով, լեռով և ֆիրանգայով, մի բաժանմում, վոր միայն յերեկ չե յերեան յեկել և վոչ միայն ոուսական բանկորական կուսակցության մեջ և վորը, հավանողեն, վաղը չի չքանա:

Այս վաստը հիմնական նշանակություն ունի տարակարծությունների պատճառների և փոփոխությունների պարզաբանման համար: Այդ վաստը ըրջանցելու փորձ անել համագումարում տեղի ունեցած պայքարի և նրա մեջ դրսեսրված սկզբունքային յերանդների բայցաման կամ քողարկման միջոցով, —նշանակում ե մտավոր ու քաղաքական աղքատության ամենալիակատար վկայական տալ իրեն: Խոկ վորպեսզի հերթենք այդ վաստը, նախ պետք ե ցույց տանք, վոր գիներկությունների և «բաժանմունեցի» ընդհանուր պատկերը մեր համագումարում այն չի յեղել, ինչ վոր բերել եմ յես. պետք ե, յերկրորդ, ցույց տանք, վոր ըստ այն բոլոր հարցերի եյության, վորոնց պատճառով «բաժանմում եր» համագումարը, անիրավացի եյին այն ամենահետեւղական հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, վորոնք իրենց կազմել են Ռուսաստանում խրայականների անվան հետ:

Այն վաստը, վոր փոքրամասնությունը կազմվել ե կուսակցության ամենաուղղարծունիստական, ամենաանկայուն և ամենաքիչ տոկուն տարրերից, ի միջի այլոց, մատնանշում ե շատ տարակույթների և առարկությունների պատասխանը, վորոնցով դիմում են մեծամասնության այն մարդիկ, վորոնք վատ են ծանօթ գործին կամ լավ չեն մտածել հարցի մասին: Մանրություն չե՞ արդյոք, ասում են մեզ, տարակարծությունը բացարձել ընկ. Մարտովի և ընկ. Ակսելլոզի փոքրիկ սխալով: Այս՝ պարունակը, ընկ. Մարտովի սխալը մեծ չեր (և յես դեռ համա-

դումարում, պայքարի յեռի մեջ նշեցի այդ), բայց այդ վոքրիկ սխալից կարող եր շատ վնաս ստացվել (և ստացվեց) այն պատճառով, վոր ընկ. Մարտովին իրենց կողմը քաշեցին այն պատգամավորները, վորոնք մի ամբողջ շարք հարցերում հակում ցույց տվին դեպի ոպորտունիղմն ու սկզբունքային անսովունությունը: Ընկ. Մարտովի և ընկ. Ակսելրոդի կողմից հայտաբերված անկայունությունն անհատական և անկարեռ փաստ եր, բայց անհատական փաստ չեր, այլ կուսակցական և վոչ բոլորովին անկարեռ փաստ՝ շատ ու շատ նշանագոր վոքրամասնության դոյցումը բոլոր, ամենից ավելի քիչ կայուն տարրերից, այն բոլոր մարդկանցից, վորոնք կամ ամենենին չեյին ընդունում «Իսկրա»-ի ուղղությունը և ուղղակի պայքարում եյին նրա դեմ, կամ ընդունում եյին խոսքով, իսկ գործով շարունակ հակախոկայականների հետ եյին ընթանում:

Ծիծաղելի չե՞ արդյոք տարակարծությունը բացատրել կոպատացած խմբակայնության և հեղափոխական քաղքենիության տիրապետությամբ՝ «Իսկրա»-ի հին խմբագրության փոքրիկ խմբակում: Վո՞չ, այդ ծիծաղելի չե, վորովհետեւ այդ անհատական խմբակայնությանն «ոգնելու» համար մեր կուսակցության մեջ հանդիս յեկան բոլոր նրանք, ովքեր ամբողջ համազումորի ընթացքում պայքարում եյին հոգուտ տմին մի խմբակայնության, բոլոր նրանք, ովքեր առհասարակ չեյին կարողանում քարձանալ հեղափոխական քաղքենիության մակարդակից, բոլոր նրանք, ովքեր մատնանշում եյին քաղքենիության և խմբակայնության չարիքի «պատմական» ընույթը՝ այդ չարիքն արդարացնելու և պահպանելու համար: Պատահականություն, թերեւ, կարելի լիներ համարել այն, վորնեղ-խմբակային շահերը հաղթող հանդիսացան կուսակցականության վերաբերմամբ «Իսկրա»-ի խմբագրության մեջ փոքրիկ խմբակի մեջ: Բայց պատահականություն չեր այն, վոր այդ խմբակայնության սարի պես պաշտպան կանգնեցին ընկ. ընկ. Ակիմովներն ու Բրուկերները, վորոնց համար վոչ պակաս (յեթե վոչ ավելի) թանգ եր հոչակափոր վորոնեժի կոմիտեյի և Գետերբուրդի տիրաւհոչակ «Բանգորական» կազմակերպության «պատմական հաջորդականությունը», պաշտպան կանդնեցին ընկ. ընկ. Յեղորովները, վորոնք

վողբում եյին «Рабочее Дело»-ի «սովանությունը» նույնական գտանությամբ (յեթե վոչ ավելի դառնությամբ), ինչպես և հին խմբագրության «սպանությունը», պաշտպան կանգնեցին ընկ. ընկ. Մախովները և այլն և այլն: Ասա ինձ՝ ում հետ ես ծանոթ, և յես ասեմ քեզ՝ ով ես դու, —ասում ե կենցաղային իմաստությունը: Ասա ինձ՝ ով ե քո քաղաքական դաշնակիցը, ով ե ձոյն տալիս հոգուտ քեզ, —և յես քեզ ասեմ, թե վորն ե քո քաղաքական դեմքը:

Ընկ. Մարտովի և ընկ. Ակսելրոդի մանր սխալը մնում եր և կարող եր մնալ մանր, քանի դեռ այդ սխալը յելակեա չեր ծառայել նրանց հաստատուն դաշինքի համար մեր կուսակցության ամբողջ ոպորտունիստական թեսի հետ, քանի դեռ նա այդ դաշինքի հետևանքով չեր հասցել ոպորտունիզմի զկուսցին, բոլոր նրանց ուելանշին, ում դեմ պայքարել եր «Իսկրա»-ն և ով պատրաստ եր ամենամեծ ուրախությամբ իր սիրտը հովացնելու հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հետևողական կողմանակիցներին հարվածելով: Հետհամազումարյան դեպքերն ել հենց հասցրին այն դրության, վոր նոր «Իսկրա»-յում մենք տեսնում ենք ոպորտունիզմի զկուսցը, Ակիմովների և Բրուկերների ուելանշը (աե՛ս վորոնեժի կոմիտեյի թերթիկը), Մարտինովների հիացմունքները, վորոնց վերջապես (վերջապես) թույլ տվին ատելի «Իսկրա»-յում քացի տալ ատելի «թշնամուն» բոլոր և ամեն տեսակի անցյալ վերաբորանքների համար:

Համագումարի (և կուսակցության) յերկու թեկ՝ ձախակողմյանի և աջակողմյանի, հեղափոխականի և ոպորտունիստականի բաժանմելու փաստն ինքնին չեր ներկայացնում վո՞չ միայն վորեւ սարսափելի և կրիտիկական հանգամանք, այլև բացաձակապես վորեւ աննորմալ բան: Ընդհակառակը, ոռուական (և վոչ միայն ոռուական) սոցիալ-դեմոկրատիայի պատմության ամբողջ վերջին տասնամյակն անխուսափելիորեն և անպատճառ բերում-հասցնում եր այդպիսի բաժանման: Վոր բաժանման հիմքը յեղել են աջակողմյան թեսի մի շարք շատ մանր սխալները, շատ անկարեռ (համեմատաբար) տարածայնությունները—այս համագումանքը (վոր մակերեսային դիտողին ու Փիլիստերական խելքին անախարժե և թվում) մեր ամբողջ կուսակցության համար նշակառ եր մի մեծ բայլ դեպի առաջ: Առաջ մենք տարակար-

ծիք և ինքոր հոռչոր հարցերի պատճառով, վորոնք յերբեմն կարող եին տրգարացնել նաև պառակառամը, այժմ մենք արդեն միացել ենք բոլոր խոշոր ու կարևոր հարցերի շուրջը, այժմ մեզ բաժանում են միայն յերանգները, վորոնց համար կարելի յէ և պիտի է վեճել, բայց անհեթեթություն և յերեսայություն կլիներ իրարից բաժանվելը (ինչպես և ասաց արդեն միանգամայն արդարացի կերպով ընկ. Պէնսանովն իր հետաքրքրական «Ի՞նչ չպետք ե անել» հոգֆածում, վորին մենք գեռնս կդառնանք): Այժմ, յերբ փոքրամասնության անիշխանական վարքագիծը համագումարից մեսան կուսակցությանը գրեթե հասցրել ե պառակտման, հաճախ կարելի յէ հանդիպել այնպիսի իմաստուների, վորոնք ասում են. մի՞թե արժեր ընդհանրապես պայքարել համագումարում այնպիսի մանրունքների համար, ինչպես նազմ. Կոմ.ի միջադեպն և, «Южный Рабочий»-ի խմբի, կամ «Рабочее Дело»-ի ցըրումը, § 1-ը, Հին խմբագրության ցրումը և այլն: Ով այդպիս և գատում, նա հենց խմբակային տեսակետ և մտցնում կուսակցության գործերի մեջ. յերանգների պայքարը կուսակցության մեջ անխուսափելի յէ և անիրածնշտ, քանի դեռ պայքարը չի տանում դեպի անիշխանություն և պառակտում, քանի դեռ պայքարն ընթանում ե բոլոր ընկերների և կուսակցության անդամների միահամուռ. Համբանությունը դաշտ շրջանակներում: Յեզ մեր պայքարը համագումարում կուսակցության աշակողայան թեկի դեմ, Ակիմովի և Ակսելովի դեմ, Մարտինովի և Մարտովի դեմ ամենելին չի դուրս յեկի այդ շրջանակներից: Բավական և հիշել թեկուղ և այն, վոր յերբ ընկ. ընկ. Մարտինովն ու Ակիմովը հեռանում եյին համագումարից, մենք բոլորս պատրաստ եյինք ամեն կերպ հետ մղել «վիրավորանքի» միտքը, մենք բոլորս ընդունում եյինք (32 ձայնով) ընկ. Տրոցկու բանձնը, վոր հրավեր եր կարգում այդ ընկերներին բավարարվել պարզաբանություններով և հետ վերցնել իրենց հայտարարությունը:

Ի և և պարագաները ներկա հաստաբակության մեջ գուրս են դցած, վարժներու նըսնցում նկարագրված և համագումարից հետո կենտրոների անմեռեազմի պատճառով ծաղկությունը, ոյսինքն՝ մի այնպիսի բան, վորի մեջ ամենից զիչ սկզբունքոյն բան կոր, ամենից շատ՝ դատարկ վեճերը:

հ) ՆՈՐ «ИСКРА»-Ն: ՈՊՈՐՏՈՒՆԻՉԱԶՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Նոր «Искра»-ի սկզբունքային գիրքի քննության հիմք պետք ե վերցնել, անտարակույս, ընկ. Ակսելովի յերկու գելյետոնները*: Նրա սիրած մի ամբողջ շարք խոսքերի կոնկրետ նշանակությունը մենք վերն արդեն ցույց տվինք մանրամասնորեն **, և այժմ պետք ե ջանանք վերանալ այդ կոնկրետ նշանակությունից, խելամուտ լինել մտքի այն ընթացքին, վոր հարկադրել և «փոքրամասնությանը» (այս կամ այն մանր ու մանրախնդիր առիթով) հանգել այս իսկ և վոչ ինչ-վոր այլ լողունզների, քննության առնել այդ լողունզների սկզբունքային նշանակությունն անկախ նրանց ծագումից, անկախ «կոռպատացիայից»: Մենք այժմ ապրում ենք զիջողականության նշանի տակ. զիջումն անենք, ուրեմն, ընկ. Ակսելովին և «լուրջ ընդունենք» նրա թեորիան:

Ընկ. Ակսելովի հիմնական թեզիսն («Искра»-ի № 57) այն և, թե «մեր շարժումը հենց սկզբից իր մեջ թագցնում եր յերկու հակադիր տենդենց, վորոնց փոխադարձ հակամարտությունը չեր կարող չզարդանալ և չանդրադառնալ նրա վրա նրա սեփական զարգացմանը զուգահեռ»: Այն և՝ «սկզբունքորեն, շարժման պրոլետարական նպատակը (Ռուսաստանում) նույնն և, ինչ վոր արեմտյան սոցիալ-դեմոկրատիայինը»: Բայց մեզանում ազգեցությունը բանվորական մասսաների վրա գալիս ե «նրանց համար խորթ սոցիալական տարրից»—արմատական ինտելիգենցիայից: Այսպիսով, ընկ. Ակսելովը հավաստում է պրոլետարական և արմատական-ինտելիգենտական տենդենցների համարտությունը մեր կուսակցության մեջ:

Դրանում ընկ. Ակսելովն անտարակույս իրավացի յէ: Այդ հակամարտության առկայությունը (և վոչ միայն ուսուական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ) յենթակա չե կաս-

* Այդ գելյետները մտել են «Искра» առ գործ ժողովածուի մեջ, ժ. II, էջ 122 և հետ. (СПБ 1906 թ.):

** Այդ «կոնկրետ նշանակությունը» վերաբերում է կենտրոնների անձնական կազմի շուրջը համագումարում և համագումարից հետո մղված պայքարին, վորի նկարագրությունը դուրս և գցված այս հրատարակությունից:

կածի: Այդ քեզ ե: Հայտնի յե ամենքին ու յուրաքանչյուրին, վոր հենց այդ հակամարտությունն ե զգալի չափով բացատրությամանակակից սոցիալ-դեմոկրատիայի բաժանումը հեղափոխական (նույն և՝ որթողոքասլ) և ոպորտունիստական (ռեվիզիոնիստական, մինիստերիալիստական, ռեֆորմիստական) թերերի. մի բաժանում, վոր լիովին յերեան յեկավ Ռուսաստանում և մեր շարժման վերջին տասը տարվա ընթացքում: Ամենքին հայտնի յե նույնպես, վոր շարժման հենց պրոլետարական տենդենցիներն որթողոքասլ սոցիալ-դեմոկրատիան ե արտահայտում, իսկ դեմոկրատական ինտելիգենտականները—ոպորտունիստական սոցիալ-դեմոկրատիան:

Բայց ընկ. Ակսելրոդը, կիալ մոտենալով այս հանրածանոթ փաստին, սկսում ե յերկշոտորեն հետ-հետ քաշվել: Նա ամենափոքրիկ փորձն անդամ չի անում վերլուծելու, թե ինչպես ե յերեան յեկել մատնանշված բաժանումը ոռուսական սոցիալ-դեմոկրատիայի պատմության մեջ ընդհանրապես և մեր կուսակցական համագումարում մասնալորապես,—թեև ընկ. Ակսելրոդը դրում ե հենց համագումարի՝ առթիվ: Ինչպես և նոր «Աչքրա»-յի ամբողջ խմբագրությունը, ընկ. Ակսելրոդը մահացու յերկյուղ և ցուցահանում այդ համագումարի արձանագրությունների հանդեպ: Այդ չպետք ե զարմացնի մեզ ամբողջ վերը շարադրվածից հետո, բայց զա նշանառավալիության որիդինալ դեպք և մի «տեսարանի» կողմից, վոր իրը թե հետազոտում և մեր շարժման տարբեր տենդենցիները: Իր այդ հատկության պատճառով հեռացնելով իրենից մեր շարժման տենդենցիներին վերաբերող ամենանոր և ամենաճշգրիտ նյութը, ընկ. Ակսելրոդը փրկություն ե փնտում հաճելի յերազանքների բնագավառում: «Զե՞ վոր լեզար կամ կիսամարքսիզմը մեր լիբերալներին տվեց զրական առաջնորդ»,—ասում ե նա: «Ինչո՞ւ չարածնի պատմությունը հեղափոխական բուրժուական դեմոկրատիային առաջնորդ չմատակարարի որթողոքասլ, հեղափոխական մարքսիզմի դալրոցից»: Ընկ. Ակսելրոդի համար հաճելի այս յերազանքի առթիվ մենք միայն ասել կարող ենք, վոր յեթե պատմությունը վիճակվում է չարածնիություն անել, ապա այդ չի արդարացնում այն մարդու մտքի չարանձիությունը, վոր ձեռնարկում ե այդ պատմության վերլուծմանը: Յերբ կիսամարքսիզմը առաջնորդի մեջ մերերալ եր յերեամ, ապա նրա «տենդենցիներն» ըմբռնել ցանկացող

(և կարողացող) մարդիկ հենվում եյին վո՞չ թե պատմության հնարավոր չարածնիությունների վրա, այլ այդ առաջնորդի հոգեբանության և տրամաբանության տասնյակ և հարյուրավոր նմուշների վրա, նրա ամբողջ գրական դեմքի այն առանձնահատկությունների վրա, վորոնք մատնում եյին մարքսիզմի արտացոլումը բուրժուական գրականության մեջ: Իսկ յեթե ընկ. Ակսելրոդը, ձեռնարկելով «մեր շարժման մեջ նկատվող համահեղափոխական և պրոլետարական տենդենցիների» վերլուծությանը, չկարողացավ վոչչով, բացարձակապես հենց վոչչով ապացուցել ու ցույց տալ կուսակցության՝ իր համար ատելի որթողոքալ թեր այս-ինչ կամ այն-ինչ ներկայացուցիչների վորոշ տենդենցիները, ապա նա դրանով միայն իրեն անհարակության հանդիսավոր վկայական տվեց: Յերեկ արդեն շատ վատ են ընկ. Ակսելրոդի բաները, յեթե մնում ե միայն պատմության հնարավոր չարածնիությունները ըատնանշել:

Ընկ. Ակսելրոդի մյուս հիշատակումը—«յակորինականների» մասին—ե'լ ավելի ուսանելի յե: Ընկ. Ակսելրոդին անհայտ չե, հավանորեն, վոր ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի բաժանումը հեղափոխական և ոպորտունիստական թեիւ—վաղուց արդեն առիթ ե տվել, և վոչ միայն Ոռուսաստանում, «Փրանսական մեծ հեղափոխության դարաշրջանի պատմական անալոգիաների»: Ընկ. Ակսելրոդին անհայտ չե, հավանորեն, վոր ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի ժիրոնդիտսները միշտ և ամենուրեք դիմում են «յակորինություն», «բլանկիզմ» և այլ նման տերմիններ՝ իրենց հակառակորդներին բնութագրելու համար: Զնմանվենք ընկ. Ակսելրոդի ճշմարտավախությանը և նայենք մեր համագումարի արձանագրություններին. նրանց մեջ նյութ չկա՞ արդյոք մեր քննության յենթակա տենդենցիների և մեր հետազոտության առարկա անալոգիաների վերլուծության ու ստուգման համար:

Առաջին որինակ: Ծրագրին վերաբերող վիճաբանությունը կուսակցության համագումարում: Ընկ. Ակիմովը (վոր «միանդամայն» համաձայն ե» ընկ. Մարտինովի հետ) հայտարարում է՝ «քաղաքական իշխանության նվաճման (պրոլետարիատի դիկտատուրայի մասին) կետը բոլոր այլ սոցիալ-դեմոկրատական ծրագրերի համեմատությամբ ստացավ այնպիսի խմբագրություն», վոր կարող ե մեկնաբանվել և իրոք մեկնաբանվում եր Պետրանովի կողմից այն իմաստով, թե կազմակերպության դեկալարների.

ղերը պետք է հետ մզի՝ նրա կողմից դեկավարվող դասակարգին և առաջնան առանձնացնի յերկրորդից։ Յել մեր քաղաքական խնդիրների ձևակերպումն այդ պատճառով միանդամայն նույնն է, ինչ վոր «Народная Воля» կազմակերպությանը (արձ. եջ 124)։ Ընկ. Ակիմովին առարկում են ընկ. Պլեխանովն՝ ու այլ էսկրայականներ, նրան կշտամբելով ոսորությունիզմի համար։ Զի՞ գտնում արդյոք ընկ. Ակսելովովը, վոր այս վեճը ցույց է տալիս մեզ (իրոք, և վոչ թե պատճության յերևակայալ չարածճիությունների մեջ) սոցիալ-դեմոկրատիայի ժամանակակից յակոբինների և ժամանակակից ժիրոնդիստների հակամարտությունը։ Յել արդյոք այն պատճառով չել խոսք բաց արել ընկ. Ակսելովը յակոբինների մասին, վոր ինքն ընկել ե (իր կատարած սխալների հետևանքով) սոցիալ-դեմոկրատիայի ժիրոնդիստների ընկերության մեջ։

Յերկրորդ որինակ։ Ընկ. Պոսագովսկին հարց է բարձրացնում «լուրջ տարածայնության» մասին «դեմոկրատական սկզբունքների բացարձակ արժեքի» «հիմնական հարցի» վերաբերմքը (եջ 169)։ Պլեխանովի հետ միասին նա ժխտում է նրանց բացարձակ արժեքը։ «Ինտրունի» կամ ճահճի (Յեկորովը) և հակախկրայականների (Գոլյբլատ) լիդերները վճռականորեն ծառանում են դրա դեմ, Պլեխանովի ընթացքի մեջ տեսնելով «նմանողություն բուրժուական տակտիկային» (եջ 170)՝ այդ հենց ընկ. Ակսելովի գաղափարն է բուրժուական տեսդենցի հետ որբողոքայի ունեցած կապի մասին, այն տարբերությամբ միայն, վոր Ակսելովի մոտ այդ գաղափարը կախված է ողում, իսկ Գոլյբլատի մոտ կապված է վորոշ վիճաբանությունների հետ։ Մենք չենք անդամ ևս հարց ենք տալիս։ չի՞ գտնում արդյոք ընկ. Ակսելովը, վոր այս վեճը ևս ցույց է տալիս մեզ ակներենըն, մեր կուսակցական համագումարում, ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի յակոբինների և ժիրոնդիստների հակամարտությունը։ Այն պատճառով չե՞ արդյոք ընկ. Ակսելովը ճշում յակոբինների դեմ, վոր նա ժիրոնդիստների ընկերության մեջ է ընկել։

Յերրորդ որինակ։ Կանոնագրության § 1-ի վերաբերյալ վիճաբանությունները։ Ո՞վ է պաշտպանում «պրոլետարական տեսդենցները մեր շարժման մեջ», ո՞վ է ընդգծում, վոր բանվորը չի անդամ այն անդամ կազմակերպությունից, վոր պարզական անդամության մեջ անդամ անդամ կազմակերպության մեջ։

վեցե՞ք» ստիմուլը. ո՞վ է նախազուշացնում ամբողջովին ուղորդումնիզմով տողորշությամբ բուրժուական ինտելիգենցիայից։ Սոցիալ-դեմոկրատիայի յակոբինները։ Յել ո՞վ է կուսակցության մեջ քաշում արմատական ինտելիգենցիային, ո՞վ է հոգում պրոֆեսորների, գիմնազիստների, մենակների, արմատական յերիտասարդության մասին։ Ժիրոնդիստ Ակսելովը ժիրոնդիստ Լիբերի հետ միասին։

Անշնո՞րհք է պաշտպանվում ընկ. Ակսելովովը «ոպորտունիզմի սուստ մեղադրանքից», վոր բացահայտ կերպով տարածվում եր մեր կուսակցական համագումարում ընդգեմ «Աշխատանքի ազատադրության խմբի⁴⁰ մեծամասնության։ Այնպե՞ս է պաշտպանվում նա, վոր հաստատում է մեղադրանքը, կրկնելով քերնշտայնական ծեծված մեղեդին յակոբինության, բլանկիզմի և այլ նըման բաների մասին։ Նա ճշո՞ւմ է արմատական ինտելիգենցիայի վտանգի մասին, վորպես իլացնի կուսակցական համագումարում արտասանած իր սեփական ճառերը, վորոնք հոգացողությամբ եյին տողորված այդ ինտելիգենցիայի վերաբերմքը։

Բացարձակական վոչինչ, բացի ոպորտունիզմից, չեն արտահայտում այդ «սոսկալի խոսքերը»—յակոբինականություն և այլն։ Այն յակոբինը, վոր անխովելիորեն կապված է իր դասակարգային շահերը գիտակցած պրոլետարիատի կազմակերպության հետ, դա հենց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ։ Այն ժիրոնդիստը, վոր պրոֆեսորների, գիմնազիստների կարոտն է քաշում, վախենում է պրոլետարիատի գիտատուրայից, հառչում դեմոկրատական պահանջների բացարձակ արժեքի մասին, դա հենց ոպորտունիզմն է։ Հենց միայն ոպորտունիստները կարող են ներկայում ել վտանգ տեսնել գալագրական կազմակերպությունների մեջ, յերբ քաղաքական պայքարը մինչև դավադրության աստիճան նեղացնելու միտքը վաղուց հերքված է վտարված և կյանքի կողմից, յերբ քաղաքական մասսայական աղիտացիայի կարգինալ կարեռությունը պարզված է և ծամծմված սիրտ խառնելու չափ։ Դաշտագրականության, բլանկիզմի հանդեպ յերևան բերվող յերկյուղի իրական հիմքը վո՞չ թե գործնական շարժման այս կամ այն յերևան յեկած գիծն է (ինչպես վաղուց և զուր ջանում է ցույց տալ Բերնշտայնը⁴¹ և Ընկ.), այլ բուրժուական ինտելիգենցիայի ժիրոնդիստական յերկչությունը, այն ինտե-

լիգենտի, վորի հոգեբանությունն այնպէս հաճախ դրսեորվում և ժամանակակից սոցիալ-դեմոկրատների մեջ։ Զկա ավելի կոմիկական բան, քան նոր «Ասկրա»-յի՝ նոր խոսք ասելու այդ ճիղերը (վոր իր ժամանակին հարյուրավոր անդամ ասվել ե), իբրև նախադրուշցում քառասնական և վաթունական թվականների ֆրանսական հեղափոխական-դավադիրների տակտիկայից (№ 62, առաջնորդողը)։ «Ասկրա»-յի մոտակա համարում ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի ժիրոնդիստները, հավանորեն, կնշեն մեզ քառասնական թվականների ֆրանսական դավադիրների այնպիսի մի խումբ, վորի համար վաղուց սովորած և սերտած այրութեն հանդիսանար քաղաքական ագիտացիայի նշանակությունը բանվորական մասսաների մեջ, բանվորական լրագրերի՝ վորպես դասակարգի վրա կուսակցության կողմից ներգործելու հիմքի նշանակությունը։

Նոր «Ասկրա»-յի՝ նոր բառերի ձեռվլ հին չշմարտությունները կրկնելու և այրութենը ծամծմելու ձգտումը, սակայն, ամենեվին պատահականություն չե, այլ անխուսափելի հետևանքն այն դրության, վորի մեջ գտնվեցին Ակսելը ու Մարտովը, յերբ ընկան մեր կուսակցության ոպորտունիստական թերը։ Դրությունը պարտավորեցնում է։ Հարկ և լինում կրկնել ոպորտունիստական ֆրազներ, հարկ և լինում հետ-հետ քաշվել, վորպեսզի հեռավոր անցյալում փորձեն գտնել իրենց դիրքի գեթ վորեն արդարացում, այն դէրքի, վոր անպաշտպանելի յե համագումարին պայքարի և համագումարում ձեւավորված՝ կուսակցության յերանդների ու բաժանումների տեսակետից։ Յակոբինության ու բլանկիզմի վերաբերյալ ակիմովյան խորիմաստությանն ընկեր Ակսելը ավելացնում է նույնակես ակիմովյան տրտունջներ այն մասին, վոր վո՛չ միայն «Եկոնոմիստները», այլև «պոլիտիկ-ները» «միակողմանի եյին», չափազանց «հավիշտակվում եյին» և այլն և այլն։ Կարդալով այդ թեմայի մասին վերամբարձ դատողությունները նոր «Ասկրա»-յում, վոր սնապարձորեն հավակնությունն ունի կարծելու, թե ինքը վեր և այդ բոլոր միակողմանիություններից ու հափշտակություններից, տարակուսանքով հարց ևս տալիս քեզ—ո՞ւմ պատկերներն են նկարում նրանք։ Վո՞րտեղ են լսում այդ խոսակցությունները։ Այդ ո՞վ չդիմա, վոր ուսու սոցիալ-դեմոկրատիա բաժանումը եկոնոմիստների և

պոլիտիկների—լազուց արքեն անցրել ե իր դարը։ Աչքի անցկացրեք «Ասկրա»-ն վերջին մեկ-յերկու տարվա ընթացքում մինչև կուսակցության համագումարը, և դուք կտեսնեք, վոր պայքարն «եկոնոմիզմի» դեմ թուլանում և և բոլորովին դադարում դեռևս 1902 թվականին, դուք կտեսնեք, որինակ, վոր 1903 թ. հուլիսին (№ 43) «եկոնոմիզմի ժամանակների» մասին խոսում են վորպես «վերջնականապես անցած» ժամանակների մասին, եկոնոմիզմը համարում են «վերջնականապես թաղված», պոլիտիկների հափշտակությունները նկատում են իրեւ ակներև ատավլում։ Ել ի՞նչ հիմունքով և «Ասկրա»-յի նոր խմբագրությունը վերացանում այդ վերջնականապես թաղված բաժանմանը։ Միթե մենք համագումարում պայքարում եյինք Ակիմովների դեմ այն սխալների համար, վոր նրանք կատարում եյին յերկու տարի առաջ «Ռածու Շելո»-յում։ Եթե մենք այդպես վարված լինեյինք, մենք կատարյալ ապուշներ կլինեյինք։ Բայց ամեն վոք գիտե, վոր մենք այդպես չենք վարվել, վոր մենք համագումարում Ակիմովների դեմ պայքարել ենք վո՛չ թե նրանց հին, «Ռածու Շելո»-յի վերջնականապես թաղված սխալների համար, այլ այն նոր սխալների համար, վոր անում եյին նրանք համագումարում իրենց դատողությունների և իրենց քվեարկությունների մեջ։ Վո՛չ թե ըստ «Ռածու Շելո»-յում ունեցած նրանց դիրքի, այլ ըստ համագումարում բռնած դիրքի յենք մենք դատել այն մասին, թե ինչ սխալներ են իրոք հաղթահարված և ինչ սխալներ դեռևս ապրում են և վիճաբանությունների անհրաժեշտություն առաջացնում։ Համագումարի հրալիրման ժամանակ այլևս գոյություն չուներ հին բաժանումը եկոնոմիստների ու պոլիտիկների, բայց շարունակում եյին դեռևս գոյություն ունենալ պարտունիստական բազմազան տենդենցներ, վորոնք արտահայտվեցին մի շարք հարցերի շուրջը ծագած վիճաբանությունների և այդ հարցերի քվեարկությունների մեջ և վորոնք վերջիվերջո հասցրին կուսակցության նոր բաժանման «մեծամասնության» և «փոքրամասնության»։ Ամբողջ եյությունն այն ե, վոր «Ասկրա»-յի նոր խմբագրությունը ձգտում և, հեշտ ըմբռնելի պատճառներով, քողարկել այդ նոր բաժանման կամը մեր կուսակցության մեջ նկատվող ժամանակակից ոպորտունիզմի հետ, և վոր նա այդ պատճառով հարկադրված և նոր բաժանմանից հետ-հետ քաշվել դեպի հինը։ Նոր բաժանման քաղաքական ծագումը բացառիկու

անկարողությունը (կամ հանուն զիջողականության այդ ծագման վրա շլաք * զցելու ցանկությունը) հարկադրում և ծամծմել վորոնը վաղուց անցած հին բաժանման վերաբերմամբ։ Ամենքին ու յուրաքանչյուրին հայտնի յէ, վոր նոր բաժանման հիմքը կազմում և կազմակերպական հարցերի մասին յեղած տարակարծությունը, վորն սկսվեց կազմակերպության սկզբունքների մասին ծագած վեճով (կանոնադրության § 1) և վերջացավ անարխիստներին արժանի «պրակտիկայով»։ Եկոնոմիստների և պոլիտիկների վաղեմի բաժանման հիմքում դրված եր մի տարածակարծություն, վոր գլխավորապես տակտիկական հարցերին եր վերաբերում։

Այս նահանջն ավելի բարդ, կուսակցական կյանքի իրոք ժամանակից և կենսական հարցերից դեպի այնպիսի հարցեր, վորոնք վաղուց են լուծված և արհեստականորեն հանդում են թաղած տեղից, նոր «Իսկրա»-ն աշխատում և արդարացնել զվարճավի խորիմաստությամբ, վոր չի կարելի անվանել այլ կերպ, քան պոչականություն։ Ընկ. Ակսելրոդի հաջողակ ձեռքով նոր «Իսկրա»-յի բոլոր գրությունների միջով կարմիր թելի նման անցնում և այն խոր «միտքը», վոր բովանդակությունը ձեկից ավելի կարեոր և, ծրագիրն ու տակտիկան կազմակերպությունից ավելի կարեոր են, վոր «կազմակերպության կենսունակությունն ուղիղ հարաբերական և այն բովանդակության ծավալին ու նշանակությանը, վոր նա կմտցնի շարժման մեջ», վոր ցենտրալիզմն «ինքնարակ բան չե», «ամենափրկիչ թալիսման» չե և այլն և այլն։

* Տե՛ս «Եկոնոմիզմի» մասին Պեհանովի հոդվածը «Իսկրա»-յի 53-րդ համարում։ Այդ հոդվածի յևնթավերնադրի մեջ, ըստ յերեսութիւն, փոքրիկ վրիպակի և սովորել։ Փոխանակ «քարձրածայն մտքեր կուսակցության յերկորդ համագումարի առթիվ»—պետք ե, յերեկ, կարգաւ «Լիդայի համագումարի առթիվ» կամ թերեւ։ «կուսակցությայի առթիվ»։ Վորքան տեղին ե, վորոշ պայմաններում, զիջողականությունն անձնական հավակնությունների վերաբերմար, նույնքան անթույլատրելի յէ (կուսակցական, և վոչ թե քաղքենիական տեսակետից) կուսակցությանը հուզող հարցերի չփոխումը, —այն, վոր Մարտով իր Ակսելրոդի նոր սխալի հարցը (ընկերների, փորոնք սկսել են որթողոքսիայից շրջվել դեպի սպորտունիզմը) նենդափոխվում և Մարտինովների և Ակիմովների հին (վոչ վոքի կողմից, բացի նոր «Իսկրա»-յից, այժմ չմտաբերվող) սխալի հարցով, Մարտինովների և Ակիմովների, վորոնք, դուցե, պատրաստ են այժմ ծրագրի և տակարկայի շատ հարցերում շրջվել ոպորտունիզմից զեպի որթողոքսիա։

Եո՛րը, մե՛ծ ճշմարտություններ։ Ծրագիրն, իրոք, տակտիկայից ավելի կարեւոր ե, տակտիկան կազմակերպությունից ավելի կարեւոր ե։ Այբուբենը ստուգաբանությունից ավելի կարեւոր ե, ստուգաբանությունը չարահյուսությունից ավելի կարեւոր ե։ բայց ի՞նչ ասենք այն մարդկանց մասին, վորոնք կարվել են չարահյուսությունը քննությունից և այժմ մեծամտում և պարծենում են նրանով, վոր նրանք ստորին դասարանում են մնացել յերկրորդ տարին։ Ընկ. Ակսելրոդը կազմակերպության սկզբունքային հարցերի մասին դատում եր վորակես ոպորտունիստ (§ 1), իսկ գործում եր կազմակերպության մեջ վորակես անարխիստ, —և այժմ նախորացնում ե սոցիալ-դեմոկրատիան—իսպողը դեռ խա՞կ ե։ Խոկապես, ի՞նչ ե կազմակերպությունը։ չե՞ վոր այդ միայն ձեւ ե. ի՞նչ ե ցենտրալիզմը։ չե՞ վոր այդ թալիսման չե։ ի՞նչ ե չարահյուսությունը։ չե՞ վոր այդ պակաս կարեւոր ե, քան ստուգաբանությունը, այդ միայն ստուգաբանության տարրերի միացման ձեւն ե… «Արդյոք չե՞ համաձայնի մեզ հետ ընկ. Ալեքսանդրովը, —հաղթական կերպով հարց ե տալիս «Իսկրա»-յի նոր խմբագրությունը, —յեթե ասենք, վոր կուսակցական ծրագրի մշակումով համագումարը շատ ավելի յե աջակցել կուսակցական աշխատանքի կենտրոնացմանը, քան կանոնադրության ընդունմամբ, վորքան ել կատարյալ թվար այս վերջինը» (№ 56, Հավել.)։ Հուսալ պետք ե, վոր այս կլասիկ ասացվածքը վոչ պակաս լայն և վոչ պակաս կայուն պատմական հոչակ կստանա, քան ընկ. Կրիչևսկու 42 հոչակալոր Փրազն այն մասին, թե սոցիալ-դեմոկրատիան, մարդկության նման, միշտ իր առջև իրագործելի խընդիրներ և դեռում։ Նոր «Իսկրա»-յի այս խորիմաստությունը չե՞ վոր բոլորսվին նույն տեսակի յե։ Ինչի՞ համար եյին ծաղրի յենթարկում ընկ. Կրիչևսկու Փրազն։ Նրա համար, վոր նա սոցիալ-դեմոկրատների վորոշ մասի սխալը տակտիկայի հարցերում, քաղաքական խնդիրները կանոնավոր կերպով դնելու անկարողությունն արդարացնում եր մի գուեհ կարանությամբ, վոր փիլիսոփայության տեղ եր հրամցնում։ Ճիշտ և ճիշտ նույնպես ել նոր «Իսկրա»-ն և արդարացնում սոցիալ-դեմոկրատների վորոշ մասի սխալը կազմակերպման հարցերում, վորոշ ընկերների ինտելիգենտական անկայունությունը, վոր նրանց հասցրեց անարխիստական Փրազն, —այն գուեհ կարանությամբ, թե իբր ծրագիրն ա-

վելի՛ կարեոր և կանոնադրությունից, թե ծրագրային հարցերն ավելի՛ կարեոր են կազմակերպական հարցերից։ Դեռ, մի՞թե այս պոչականություն չե։ Մի՞թե այս պարծենկոտություն չե այն առթիվ, վոր մարդիկ յերկրորդ տարին մնացել են ստորին դասարանում։

Ծրագրի ընդունումն ավելի յե աջակցում աշխատանքի կենտրոնացմանը, քան կանոնադրության ընդունումը։ Փիլիսոփայության տեղ հրամցվող այս գոեհկարանությունից ի՞նչպես ե բուրում արմատական ինտելիգենտի վոդին, այն ինտելիգենտի, վոր շատ ավելի մոտ ե բուրդուական դեկադենտության, քան սոցիալ-դեմոկրատիզմին։ Զե՞ վոր այս հոչակավոր նախադասության մեջ կենտրոնացում բառն արդեն միանդամայն սիմվոլական իմաստով ե հասկացվում։ Յեթե այս նախադասության հեղինակները չեն կարողանում կամ չեն կամ չեն մտածել, ապա թող նրանք գոնե մտաբերելին այն հասարակ փաստը, վոր ծրագրի ընդունումը բունդականների հետ միասին վո՛չ միայն չասցրեց մեր ընդհանուր աշխատանքի կենտրոնացման, այլ և մեզ չապահովեց պառակտումից։ Ծրագրի հարցերի և տակտիկայի հարցերի մեջ յերեան յեկող միասնականությունը կուսակցական միավորման, կուսակցական աշխատանքի կենտրոնացման անհրաժեշտ, բայց գեռ անբավարար պայմանն ե (տե՛ր իմ աստված, ստիպված ինք ինչպիսի՛ այրութեն վորոճալ ներկա ժամանակներում, յերբ բոլոր հասկացողությունները շփոթվել են)։ Այդ վերջինի համար անհրաժեշտ ե նաև կազմակերպության միասնականություն, վոր աներեակայելի յե ընտանեկան խմբակի շրջանակից փոքրիշատեավելի աճած կուսակցության մեջ, առանց ձեւավորված կանոնադրության, առանց փոքրամասնության յենթարկվելուն մեծամասնությանը, առանց մասի յենթարկվելուն ամբողջին։ Քանի վոր մեջնում ծրագրի և տակտիկայի հիմնական հարցերում միասնականություն չկար, մենք ուղղակի ասում եյինք, վոր ապրում ենք տարբնթացության և խմբակայնության դարաշրջանում, մենք ուղղակի հայտարարում եյինք, վոր նախքան միավորվելը պետք ե սահմանադատիել, մենք խոսք ել չեյինք բաց անում միատեղ կազմակերպության ձեւերի մասին, այլ բացառապես խոսում եյինք ոպորտունիզմի դեմ մղվող ծրագրային և տակտիկական պայքարի նոր (այն ժամանակ իրոք նոր) հարցերի մասին։ Այժմ

այդ պայքարը, մեր ընդհանուր կարծիքով, արդեն ապահովել ե բավականաչափ միասնականություն, վոր ձեւակերպված ե կուսակցական ծրագրում և տակտիկայի վերաբերյալ կուսակցական բանաձեւերի մեջ։ այժմ մենք պետք ե հետեւյալ քայլն անենք, և մենք այդ քայլն արինք, մեր ընդհանուր համաձայնությամբ—մշակեցինք միասնական, բոլոր խմբակներն ի մի ձուլող կազմակերպության ձևերը։ Մեզ քաշեցին հետ դեպի անարխիստական վարչակիծը, դեպի անարխիստական Փրազը, դեպի խմբակի վերականգնումը կուսակցական խմբագրության փոխարեն, և այժմ դեպի հետ արված այդ քայլն արդարացնում են նրանով, վոր այրութենն ավելի՛ յե աջակցում գրադեա խոսքին, քան շարահյություն գիտենալը։

Պոչականության փիլիսոփայությունը, վոր փթթում եր յերեք տարի սրանից առաջ տակտիկայի հարցերում, այժմ հարություն և առնում կազմակերպության վերաբերյալ հարցերում։ Վերցրեք նոր խմբագրության այսպիսի դատողությունը։ «Բաղմական սոցիալ-դեմոկրատական ուղղությունը,—ասում ե ընկ։ Ալեքսանդրովը,—կուսակցության մեջ պետք ե անցկացի վո՛չ միայն գաղափարային պայքարով, այլ և կազմակերպության վորոշ ձեւերով»։ Խմբագրությունն ուսուցանում ե մեզ։ «Վատ չեղաղափարային պայքարի և կազմակերպության ձեւերի այս առադրությունը։ Գաղափարային պայքարը պրոցես ե, իսկ կազմակերպության ձեւերը՝ միայն... ձեւեր» (աստված վկա, այդպես ել տպված ե № 56-ում, հավելված, էջ 4, սյուն. 1, ներքեռում), «վորոնք պետք ե պատեն հոսուն, զարդացող բովանդակությունը,—կուսակցության զարդացող դործնական աշխատանքը»։ Այս արդեն ատլած ե բոլորովին այն անեկուտի վոդով, թե նոնակը նոնակ է, իսկ ուումը ուումը է։ Գաղափարային պայքարը պրոցես և, իսկ կազմակերպության ձեւերը՝ միայն ձեւեր, վորոնք պատում են բոլանդակությունը։ Հարցն այն մասին ե, թե արդյոք մեր գաղափարային պայքարը կընդունի ավելի քարձակ ձեւեր, բոլորի համար պարտադիր կուսակցական կազմակերպության ձեւեր, թե՞ հին տարբնթացության ու չին խմբակայնության ձեւեր։ Մեզ ավելի բարձր ձեւերից հետ քաշեցին դեպի ավելի պրեմիսիվ ձեւեր և այդ նրանով են արդարացնում, վոր գաղափարային պայքարը պրոցես և, իսկ ձեւերը—դրանք միայն ձեւեր են։

Ճիշտ և ճիշտ նույնակես ընկ. Կրիչելսկին եր յերբեմն մեզ հետքաշում տակտիկա-պլանից դեպի տակտիկա-պրոցեսը:

Վերցրեք նոր «Ասկրա»-յի այդ հավակնութ Փրազները «պրոլետարիատի ինքնադաստիարակման մասին», վորոնք հակադրվում են նրանց, ովքեր իբրև թե ընդունակ են ձեւ պատճառով անտեսելու բովանդակությունը (№ 58, առաջնորդողը): Մի՞թե այս համար յերկրորդ ակիմովականություն չե: Համար առաջին ակիմովականությունը սոցիալ-դեմոկրատական ինտելիգենցիայի վորոշ մասի հետամնացությունը տակտիկական խնդիրների դրման մեջ արդարացնում եր «սլույետարական պայքարի» ավելի «խորը» բովանդակության մատնանշումով, պրոլետարիատի ինքնադաստիարական մատնանշումով: Համար յերկրորդ ակիմովականությունը սոցիալ-դեմոկրատական ինտելիգենցիայի վորոշ մասի հետամնացությունը կազմակերպության թեորիայի և պրակտիկայի հարցերում արդարացնում են նույնականի խորիմաստ մատնանշումներով, թե կազմակերպությունը ձեւ ե սոսկ, և թե ամբողջ եյությունը պրոլետարիատի ինքնադաստիարակությունն ե: Պրոլետարիատը չի վախենում կազմակերպությունից և կարգապահությունից, կրտսեր յեղբոր մասին հոգացո՞ղ պարոններ: Պրոլետարիատը չի հոգա այն մասին, վոր կազմակերպության մեջ ժամանել չցանկացող պ. պ. պրոֆեսորներն ու գիմնազիստները կուսակցության անդամ համարվեն կազմակերպության հսկողության տակ կատարիվ աշխատանքի համար: Պրոլետարիատը կազմակերպության համար իր ամբողջ կյանքով շատ ավելի արմատական կերպով և գաստիարակվում, քան շատ ինտելիգենտիկներ: Մեր ծրագիրն ու մեր տակտիկան քիչ թե շատ գիտակցած պրոլետարիատը չի արդարացնի հետամնացությունը կազմակերպության մեջ այնպիսի մատնանշումներով, թե ձեն ավելի պակաս կարեռ ե, քան բովանդակությունը: Վո՞չ թե պրոլետարիատին, այլ մեր կուսակցության մեջ գտնվող ինտելիգենտներից վոմանց ե պակտում ինքնադաստիարակությունը՝ կազմակերպության և կարգապահության վոդով, թշնամության ու արհամարհանքի վոգով գեղի անարխիստական ֆրազը: Համար յերկրորդ Ակիմովները նույնպես զբարբուժմ են պրոլետարիատին կազմակերպման անպատճաստ լինելու հարցում, ինչպես վոր զբարբուժմ ելին նրան համար առաջին Ակիմովները քաղաքական պայքարի համար անպատ-

քաստ լինելու հարցում: Գիտակից սոցիալ-դեմոկրատ դարձած և իրեն կուսակցության անդամ զգացած պրոլետարը նույնական արհամարհանքով կմերթի պոչականությունը կազմակերպական հարցերում, ինչպիսի արհամարհանքով նա մերժեց պոչականությունը տակտիկայի հարցերում:

Վերցրեք, վերջապես, նոր «Ասկրա»-յի «Պրակտիկի» խորիմաստությունը: ««Մարտական» ցենտրալիստական կազմակերպության՝ ճիշտ կերպով լարանված գաղափարը, —ասում են նա, —վորմիավորում և կենտրոնացնում ե հեղափոխականների գործունեցությունը» (խորացնող ընդգծում), «Ինականարար կյանքում կիրառվում ե միայն այդ գործունեյության առկայությամբ» (թե՛ նոր ե, թե՛ խելացի): «Ինքը կազմակերպությունը, վորպես ձե» (լսեցե՛ք, լսեցե՛ք) «կարող ե աճել միայն միաժամանակ» (ընդգծումը հեղինակինն ե, ինչպես և ամենուրեք այս մեջբերումի մեջ) «հեղափոխական աշխատանքի աճման հետ, վորը (աշխատանքը) կազմում ե նրա բովանդակությունը» (№ 57): Այս արդյոք չի չեցնում դարձյալ և դարձյալ ժողովրդական եպոսի այն հերոսին, վոր հուղարկավորությունն անենելլս ճշում եր. «Ինչքան ել քարշակագործությունն անենելլս ճշում եր. «Հեղանակագործությունն անենելլս ճշում եր. «Ինչքան չհամար չի ամբողջ կազմակերպության համարվում է գաստիարակվում, քան շատ ինտելիգենտիկներ: Մեր ծրագիրն ու մեր տակտիկան քիչ թե շատ գիտակցած պրոլետարիատը չի արդարացնի հետամնացությունը կազմակերպության մեջ այնպիսի մատնանշումներով, թե ձեն ավելի պակաս կարեռ ե, քան բովանդակությունը: Վո՞չ թե պրոլետարիատին, այլ մեր կուսակցության մեջ գտնվող ինտելիգենտներից վոմանց ե պակտում ինքնադաստիարակությունը՝ կազմակերպության և կարգապահության վոդով, թշնամության ու արհամարհանքի վոգով գեղի անարխիստական ֆրազը: Համար յերկրորդ Ակիմովները նույնպես զբարբուժմ են պրոլետարիատին կազմակերպման անպատճաստ լինելու հարցում, ինչպես վոր զբարբուժմ ելին նրան համար առաջին Ակիմովները քաղաքական պայքարի համար անպատ-

* Յեր արցեն չեմ խոսում այն մասին, վոր ամեր կուսակցական աշխատանքի բովանդակությունը կանխազգվածք ե (ծրագրում և այլն) համագումատանքի բովանդակության սոցիալ-դեմոկրատիայի վոգով միմիայն պայքարի զնով, բուժ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի վոգով միմիայն պայքարի զնով, պայքարի ընդգեմ այն նույն հակախկայականների և այն նույն ճահճի, վորպահարի ընդգեմ այն նույն հակախկայականների և այն նույն հակախկայականների (և վոչ թե միայն կազմակերպված արդարական մասսաների) (և վոչ թե միայն կազմակերպված արդարական մասսաների թիով գերակշռում են մեր «Փոքրամասնության» մեջ: Քի ներկայացուցիչները թիով գերակշռում են մեր «Փոքրամասնության» մեջ:

հեստավորների) վրա ունեցած աղղեցությունը, ավելի բազմակողմանի յև պրոպագանդան ու ազիտացիան, ավելի կենդանի յև առաջավորների և շարքային աշխատողների քաղաքական աշխատանքի զարկերակը, ավելի վեհ են ժողովրդական շարժումները ցույցերի և ընդհանուր գործադուլների ժամանակ, ավելի յեռանդուն և գործունեյությունը վոչ-պրոլետարական խավերում։ Իսկ «ձևը»։ Մեր աշխատանքի «ձևը», բունդականի համեմատությամբ, անթույլատրելիութեն հետ ե մնացել, հետ ե մնացել այն աստիճան, վոր այդ աչք ե ծակում, ամոթի ներկով պատում ամեն մեկին, ով իր կուսակցության գործերին չի նայում «քիթը քըչփորելով»։ Աշխատանքի կազմակերպության հետամնացությունն այդ աշխատանքի բովանդակության համեմատությամբ—մեր հիվանդ կողմն ե, և նա հիվանդ կողմն ե յեղել դեռևս համագումարեց շատ առաջ, կազմ։ Կ. ի գոյացումից շատ առաջ։ Զեր անդարձացածությունն ու անհաստատությունը հնարավորությունն չի տալիս հետագա լուրջ քայլերն անելու բովանդակության գարբացման մեջ, ամոթալի լճացում ե առաջացնում, տանում ե դեպի ուժերի վատնում, դեպի անհամապատասխանություն խոսքի և դործի միջև։ Այդ անհամապատասխանությունից տառապել են ամենքը—իսկ այստեղ հանդես են գալիս Սկսելլոդներն ու նոր «Իսկրա»-ին «Պրակտիկները» այն խորիմաստ քարոզով, թե ձեր պետք ե բնականաբար աճի միայն բովանդակության հետ միաժամանակ։

Ահա թե ուր ե տանում կազմակերպական հարցում (§ 1) կատարած փոքրիկ սխալը, յեթե դուք մտադրվեք խորացնել անհեթությունն ու փիլիսոփայորեն հիմնավորել ոպորտունիստական ֆրազը։ Դանդա՞ղ քայլով, յերկշոր զիգզագով—մենք լսել ենք այս յեղանակը տակտիկայի հարցերի նկատմամբ կիրառվելու։ մենք լսում ենք այն այժմ կազմակերպության հարցերի վերաբերմամբ կիրառվելիս։ Պոչականությունը կազմակերպական հարցերում՝ բնական և անխուսափելի արդյունքն ե անարխիստական ինդիվիդուալիստի հոգեքանության, յերբ այդ վերջինն սկսում ե իր (սկզբում գուցե պատահական) անարխիստական թեքումները դարձնել հայացքների մի սիստեմ, առանձին սկրզբությային տարածայնություններ։ Լիգայի համագումարում մենք տեսանք այդ անարխիզմի սկիզբը, նոր «Իսկրա»-յում մենք

տեսնում ենք այդ հայացքները սիստեմ գարձնելու փորձերը։ Այդ փորձերը զարմանալի կերպով հաստատում են արդեն կուսակցության համագումարում արտահայտված նկատմառումն այն տարբերության մասին, վոր գոյություն ունի սոցիալ-դեմոկրատիային մասունքով բուրժուական ինտելիգենտի և իր դասակարգային շահերը գիտակցած պրոլետարի տեսակետների միջև։ Որինակ, նոր «Իսկրա»-յի նույն այդ «Պրակտիկը», վորի խորիմատությանը մենք արդեն ծանոթացնելու արդեն ծանոթացնելու մեջ, ինձ բունում ե այն բանում, վոր կուսակցությունն ինձ ներկայանում ե «վորպես տհագին Փարբիկա», վորի գլուխ կանգնած ե դիրեկտորը հանձին կ. կ. մ. (№ 57, հավելված)։ «Պրակտիկը» գլխի ել չի ընկնում, վոր իր առաջադրած սոսկալի խոսքը միանդամից մատնում ե այն բուրժուական ինտելիգենտի հոգեբանությունը, վորը ծանոթ չե պրոլետարական կազմակերպության վո՛չ պրակտիկային և վո՛չ ել թերորիային։ Հենց Փարբիկան ել, վոր վոմանց թվում ե միայն խրտվիլակ, կապիտալիստական կոռպերացիայի այն բարձրագույն ձևն ե, վոր միավորել, կարգապահության ե յենթարկել պրոլետարիատին, սովորեցրել ե նրան կազմակերպությունն, դրել ե նրան աշխատավոր և հարստահարվող բնակչության մնացած բոլոր խավերի գլուխ։ Հենց մարքսիզմը, վորպես կապիտալիզմի կողմից սովորեցված պրոլետարիատի իդեոլոգիա, ուսուցանում եր և ուսուցանում ե անկայուն ինտելիգենտներին, վոր տարրերություն կա Փարբիկայի շահագործողական կողմի (սովամահության յերկյուղի վրա հիմնված կարգապահություն) և նրա կազմակերպող կողմի միջև (միատեղ աշխատանքի վրա հիմնված կարգապահություն, մի աշխատանքի, վոր միավորված ե տեխնիկալապես բարձր զարգացում ունեցող արտադրության պայմաններով)։ Կարգապահահությունն ու կազմակերպությունը, վորոնք այնպիսի գժվարությամբ են հաջողվում բուրժուական ինտելիգենտին, առանձնապես հեշտ են յուրացվում պրոլետարիատի կողմից հենց չնորհիվ այդ Փարբիկային «դպրոցի»։ Մահաչափ վախն այդ գլուխի հանդեպ, նրա կազմակերպող նշանակության կատարյալ անլմբանողությունը բնորոշ են հենց մտքի այն յեղանակների համար, վորոնք արտացոլում են գոյության մանր-բուրժուական պայմանները, ծնունդ տալիս անարխիզմի այն տեսակին, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատներն անվանում են

Edelanarchismus, այսինքն «աղնիվ» պարոնի անարխիզմ, աղայական անարխիզմ, ինչպես կասեյի յես: Այս աղայական անարխիզմն առանձնապես հատուկ է ոռւս նիհիլիստին: Կուսակցական կազմակերպությունը նրան թվում է հրեշավոր «Փարրիկա», մասի՝ ամբողջին և փոքրամասնության՝ մեծամասնությանը յենթարկվելու հանգամանքը նրան ներկայանում է «ճորտացում» (տե՛ս Ակսելը դիմուլի քելքառները), աշխատանքի բաժանումը կենտրոնի ղեկավարությամբ նրա կողմից հարուցում է տրագիկոմիկական ճիշեր ընդդեմ այն բանի, վոր մարդկանց դարձնում են «փոքրիկ անխմեր ու պատուակներ» (և այդ դարձնելու առանձնապես սպանիչ ձև է համարվում խմբագիրներին աշխատակիցներ դարձնելը), կուսակցության կազմակերպական կանոնադրության հիշտակումն արհամարհական ծամածություն և արհամարհական դիտողություն ե առաջցնում («Ճեապաշտների» հասցեյին), թե կարելի յէ միանդամայն առանց կանոնադրության ել:

Անհավատալի յէ այդ, բայց այդ փաստ է. հենց այդպիսի խրատական դիտողություն է անում ինձ ընկ. Մարտովն «Աէքրա»-յի № 58-ում, ավելի ևս համոզիչ լինելու համար մատնանշելով իմ իսկ սեփական խոսքերը «Նամակ ընկերոջ» հոդվածից: Դե, միթե այս «աղայական անարխիզմ» չե, այս միթե պոչականություն չե, յերբ տարընթացության դարաշրջանի, խմբակների դարաշրջանի որինակներով արդարացնում են կուսակցականության դարաշրջանում խմբակայնության ու անարխիայի պահպանումն ու փառաբանումը:

Ինչու մեզ առաջ հարկավոր չեյին կանոնադրություններ: Վորովհետեւ կուսակցությունը բաղկացած էր առանձին խմբակներից, վորոնք վոչ մի կազմակերպական կապով կապված չեյին միմյանց հետ: Մի խմբակից մյուս խմբակն անցնելն այս կամ այն անհատի լոկ «բարի կամքի» գործն էր, անհատի, վոր իր առջև չուներ ամբողջ կամքի վոչ մի ձեալորված արտահայտություն: Խմբակների ներսում վիճելի հարցերը լուծվում եյին վո՛չ թե ըստ կանոնադրության, «այլ պայմանագրով և հեռանալու սպառնալիքով». այսպես արտահայտվեցի յես «Նամակ ընկերոջ»-ի մեջ, հիմնվելով ընդհանրապես մի շարք խմբակների և, մասնավորապես, մեր սեփական խմբագրական վեցյակի փորձի վրա: Խմբակների դարաշրջանում այդպիսի յերեսութը բնական էր և անխուսափելի:

Եայց վոչ վորի մտքովն անգամ չի անցել դրվատել այն, համարել իդեալ, ամենքն ել գանդատվում եյին այդ տարբնթացության վրա, ամենքն ել զգում եյին նրա ծանրությունը և փափագում բաժան խմբակների միաձուլումը ձեւագորված կուսակցական կազմակերպության մեջ: Յեւ այժմ, յերբ այդ միաձուլումը կայացել է, մեզ հետ են քաշում, մեզ հյուրասիրում են՝ բարձրագույն կազմակերպական հայացքների անվան տակ—անարխիստական Փրազով: Բնտանեկանն-խմբակային որլումովշշինայի լայն խալթին ու հողաթափներին սովոր մարդկանց համար ձեւական կանոնադրությունը թվում է թե՛ անձուկ, թե՛ նեղ, թե՛ ծանր, թե՛ ստոր, թե՛ բյուրոկրատական, թե՛ նեղիչ՝ զաղափարային պայքարի ազատ «պրոցեսի» համար: Աղայական անարխիզմը չի ըմբռնում, վոր ձեւական կանոնադրությունն անհրաժեշտ է հենց խմբակային նեղ կապերը կուսակցական լայն կապով փոխարինելու համար: Հարկավոր չեր և անկարելի յեր ձեւակորել կամը խմբակների միջև, վորովհետեւ այդ կապը հիմնվում էր բարեկամության կամ անհաշվետու, չպատճառաբանված «վատահության» վրա: Կուսակցական կապը չի կարող և չպետք է հիմնվի վո՛չ մեկի և վո՛չ ել մյուսի վրա, այն պետք է խարսխել հենց ձեւական, «բյուրոկրատորեն» (սանձարձակ ինտելիգենտի տեսակետից) խմբագրված կանոնադրության վրա, վորի իիստ պահպանումն է միայն մեզ համար յերաշխիք խմբակային կամակորության դեմ, խմբակային կապրիզների դեմ, այն կուտողի խմբակային հեղանակների դեմ, վոր կոչվում է «գաղափարային պայքարի» ազատ «պրոցես»:

Նոր «Աէքրա»-յի խմբագրությունն Ալեքսանդրովի դեմ պարծենում է այն խրատական նշումով, թե «վատահությունը փափուկ բան է, վորը վոչ մի կերպ չի կարելի մտցնել սրտերի և գլուխների մեջ» (№ 56, հավել.): Խմբագրությունը չի հասկանում, վոր վըստահության, մերի վատահության կատեղորիքայի հենց այդ առաջադրումը դարձյալ ու դարձյալ ամբողջովին մատնում է նրա աղայական անարխիզմն ու կազմակերպական պոչականությունը: Յերբ յես միայն խմբակի անդամ էյի, լինի այդ խմբագրական վեցյակը, թե «Աէքրա»-յի կազմակերպությունը, յես իրավունքունեյի, ամենք, իքորի հետ աշխատել չցանկանալու արդարացնելու համար հենվել լոկ անհաշվետու և չպատճառաբանված անվստա-

Հության վրա։ Յերբ յես կուսակցության անդամ դարձու, յես իրավունք չունեմ հենվելու միայն չձևավորված անվտանգության վրա, վորովհետև այդպիսի մատնանշումը լայն գոներ բաց կաներ հին խմբակայնության ամեն մի քմահաճռույքի և ամեն մի կամակորության առաջ։ յես պարտավոր եմ իմ «վաստահությունը» կամ «անվտանգությունը» պատճառաբանել ձևական փաստարկումով, այսինքն մեր ծրագրի, մեր տակտիկայի, մեր կանոնադրության այս կամ այն ձևականորեն սահմանված զրոյթի մատնանշումով։ յես պարտավոր եմ չսահմանափակվել անհաշվետու «վաստահում եմ» կամ «չեմ վաստահում» խոսքերով, այլ ընդունել իմ վճիռների և կուսակցության ամեն մի մասի առհասարակ բոլոր վճիռների հաշվետու լինելն ամբողջ կուսակցության առաջ։ յես պարտավոր եմ հետեւ ձևականորեն հրահանգված ուղուն իմ «անվտանգություն» արտահայտելու համար, այն հայցքներն ու ցանկություններն անցկացնելու համար, փորոնք բղիսում են այդ անվտանգությունից։ Մենք անհաշվետու «վաստահության» խմբակային տեսակետից բարձրացել ենք արդեն մինչեւ կուսակցական տեսակետը, վոր պահանջում ե վստահության արտահայտման ու սոսուգման հաշվետու և ձևականորեն հրահանգված յեղանակների պահպանում, իսկ խմբագրությունը մեզ քաշում է հետ և իր պոչականությունն անվանում ե կազմակերպական նոր հայցքներ։

Տեսեք, թե ինչպես ե դատում մեր այսպես կոչված կուսակցական խմբագրությունն այն զրական խմբերի մասին, վորոնք կարող կլինելին ներկայացուցչություն պահանջել իրենց համար խմբագրության մեջ։ «Մենք չենք վրդովվի, չենք սկսի ճշալ կարգավահության մասին», —ուսուցանում են մեզ ազայական անարխիստները, վորոնք միշտ և ամենուրեք վերից վար եյն նայում ինչ-վոր կարդապահության վրա։ Մենք, իբր թե, կամ «համաձայնության կդանք» (sic!) խմբի հետ, յեթե նա խելացի յե, կամ կծիծաղենք նրա պահանջների վրա։

Ասացեք խնդրեմ, ի՞նչ վսեմ աղնվություն ե այստեղ հանդես գալիս ընդդեմ գուեհիկ-«Փարբիկային» Փորմալիզմի։ Իսկ իբրոք մեր առջև խմբակայնության՝ նորոգման յենթարկված Փրազաբանությունն ե, վոր կուսակցությանն ե հրացցվում մի խմբագրության կողմից, վորն զգում ե, վոր ինքը ներկայացնում ե

վո՛չ թե կուսակցական հիմնարկ, այլ չին խմբակի մի բեկոր։ Այս գիրքի ներքին կիրծությունն անխուսափելիորեն տանում է գեղի անիշխանական խորիմաստություն, վորը սոցիալ-դեմոկրատական կազմակերպության սկզբունքն ե դարձնում այն տարընթացությունը, վորը խոսքով փարբսեցլուն հայտարարվում է արդեն անցած։ Հարկավոր չե կուսակցական սոորին և բարձրագույն կոլեգիաների և ինստանցիաների վոչ մի հերարխիա, —աղայական անարիփմին այսպիսի հերարխիան թվում ե զերատեսությունների, գեղարտամենաների դրասենյակային հերյուրանք և այլն (տե՛ս Ակսելը որդիկ Փելյետոնը), —հարկավոր չե մասի վոչ մի յենթարկում ամբողջին, հարկավոր չե «համաձայնության դալու» և սահմանազատվելու՝ կուսակցական յեղանակների վոչ մի «ձևական-բյուրոկրատական» վորոշում, թո՛ղ հին խմբակային կոփը որբագործիվ կազմակերպության «մակական սոցիալ-դեմոկրատական» յեղանակներին նվիրված Փրազյորությամբ։

Ահա թե վորտեղ կարող ե և պետք ե «Փարբիկայի» գլորցն անցած պրոլետարը զաս տա անարխիստական ինդիվիդուալիզմին։ Գիտակից բանվորն արդեն վազուց ե զուրաց յեկել այն խանձարուրից, յերբ նա խորշում եր խտելիությունից՝ վորպես այլպիտուց։ Գիտակից բանվորը զիտե զնահատել զիտելիքների այն ալեկի հարուստ ոլացարը, այն ալեկի լայն քաղաքական մտահորիզոնը, վոր նա զտնում է սոցիալ-դեմոկրատ խտելիութենաների մեջ։ Բայց քանի վոր մեղանում կազմվում է խմբական կուսակցություն, գիտակից բանվորը պետք ե սովորի տարբերել պրոլետարական բանակի զինվորի հոգեբանությունն այն բուրժուական ինտելիգենտի հողերանությունից, վոր փայլել ե ցանկանում անարխիստական Փրազով, պետք ե սովորի պահանջել կուսակցության անդամի պարտականությունների կատարումը վո՛չ միայն շարքայիններից, այլև «վերեկի մարդկանցից», պետք ե սովորի դիմավորել պոչականությունը կազմակերպական հարցերում նույնությունի արհամարհանքով, վորտիսի արհամարհանքով նա վարձատրում եր մի ժամանակ պոչականությունը տակտիկայի հարցերում։

Ժիրոնդիթմի և աղայական անարխիզմի հետ անխզելի կապակցության մեջ ե գտնվում կազմակերպական հարցերում նոր «Աւագ»-ի բանած դիրքի վերջին բնորոշ առանձնահատկությունը. զա պատումիզմի պաշտպանությունն ե ընդդեմ ցենտրալիզմի։ Հենց այսպիսի սկզբունքային խմաստ ունեն (յեթե ունեն)

Հեծերը բյուրոկրատիզմի և ինքնակալության մասին, ցալելը այն մասին, վոր «անարդար անուշագրության մատնվեցին վոչիսկրայականները» (վորոնք պաշտպանում եյին համադումարում ավտոնոմիզմը), կոմիկական աղաղակները «առանց այլեալլության հնաղանդվելու» պահանջի մասին, դառը գանդատները «պոմպադուրության» վերաբերմամբ և այլն և այլն: Ամեն մի կուսակցության ոպրոտոնիստական թեր միջտ պաշտպանում և արդարացնում ե ամեն հետամնացություն՝ թե՛ ծրագրային, թե՛ տակտիկական, թե՛ կազմակերպական: Նոր «Ասկրա»-յի կազմակերպական հետամնացության (պոչականության) պաշտպանությունը սերտորեն կապված ե ավտոնոմիզմի պաշտպանության հետ: Ճիշտ ե, ավտոնոմիզմն այնքան վարկարեկված ե արդեն, ընդհանրապես ասած, չին «Ասկրա»-յի յեռամյա քարոզով, վոր նոր «Ասկրա»-ն դեռևս ամաչում ե բացահայտորեն արտահայտվել նրա ոգտին. նա գեռես հավատացնում է մեղ, վոր համակրում ե ցենտրալիզմին, բայց այդ ապացուցվում ե նրանով միայն, վոր ցենտրալիզմ բառը գրվում ե ընդդժված: Իրոք քննադատության ամենաթեթև չփումը նոր «Ասկրա»-յի «ճշմարիտ սոցիալ-գեմոկրատական» (և վոչ անարխիստական) quasi-ցենտրալիզմի «սկզբունքների» հետ՝ ամեն մի քայլափոխում մերկացնում ե ավտոնոմիզմի տեսակետը: Մի՞թե այժմ պարզ չե բոլորի և յուրաքանչյուրի համար, վոր Ակսելրոդն ու Մարտովը կազմակերպական հարցերում շընվեցին դեպի Ակիմովը: Մի՞թե նրանք հանդիսավոր կերպով չընդունեցին այդ «դեպի վոչիսկրայականները» ցուցահանած «անարդար անուշագրության» մասին ասված նշանակալից խոսքերում: Յեվ մի՞թե ավտոնոմիզմ չիյին պաշտպանում մեր կուսակցական համադումարում Ակիմովն ու իր բարեկամները:

Իսկ և իսկ ավտոնոմիզմ (յեթե վոչ անարխիզմ) եյին պաշտպանում Մարտովն ու Ակսելրոդը լիդայի համադումարում, յերբ վոր նրանք զվարձալի յեռանդով ապացուցում եյին, վոր մասը չպետք ե յենթարկի ամբողջին, վոր մասն ավտոնոմ ե իր հարաբերությունները գեղի ամբողջը վորոշելու մեջ, վոր այդ հարաբերությունները ձեւակերպող՝ արտասահմանյան լիդայի կանոնադրությունը վալերական և հակառակ կուսակցության մեծամասնության կամքի, հակառակ կուսակցական կենուրունի կամքի: Իսկ և իսկ ավտոնոմիզմ ե պաշտպանում այժմ ընկ.

Վը բացահայտ կերպով նաև նոր «Ասկրա»-յի (№ 60) եջերում՝ կենտրոնական կոմիտեյի կողմից տեղական կոմիտեների մեջ անդամներ մտցնելու հարցի քննության ժամանակ: Յես չեմ խոսի այն մանկական սովորականությունների մասին, վորոնցով պաշտպանում եր ավտոնոմիզմն ընկ. Մարտովը լիդայի համադումարում ե պաշտպանում և նոր «Ասկրա»-յում՝ ինձ համար կարեօր ե այստեղ ընդգծել ավտոնոմիզմը ցենտրալիզմի դեմ պաշտպանելու անտարակուսելի միտումը, վորպես սկզբունքային դիմ, վոր հատուկ ե կազմակերպական հարցերում ոպորտունիզմին:

Բյուրոկրատիզմ հասկացողության վերլուծման դրեթե միակ փորձը նոր «Ասկրա»-յում (№ 53) «ձեւական-դեմոկրատական սկզբունքի» (ընդգծումը հեղինակինն ե) հակադրությունն ե «ձեւական-քյուրոկրատականին»: Այս հակադրությունը (վոր, դժբախտաբար, նույնքան զարգացրած և պարզաբանված չե, վորքան և մատնանշումը վոչիսկրայականների վերաբերմամբ) իր մեջ պարունակում ե ճշմարտության հատիկ: Բյուրոկրատիզմ versus * գեմուկրատիզմ, այդ հենց ցենտրալիզմն ե versus ավտոնոմիզմ, այդ հենց հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կազմակերպական սկզբունքն ե սոցիալ-գեմուկրատիայի ոպորտունիստների կազմակերպական սկզբունքի վերաբերմամբ: Վերջինը ձգտում ե գնալ վարեց վեր, ուստի ամենուրեք, վորտեղ կարելի յե, և վորքան կարելի յե, պաշտպանում ե ավտոնոմիզմը, «դեմոկրատիզմը», վոր հասնում ե (նրանց մոտ, ովքեր զոռ են տալիս իրենց խելքին) անարխիզմի: Առաջինը ձգտում ե յեկնել վերեց, պաշտպանելով կենտրոնի իրավունքների և լիազորությունների լայնացումը մասի վերաբերմամբ: Տարընթացության և խրմբակայնության դարաշրջանում այդ վերին որդանը, վորեց ձգտում եր կազմակերպորեն յեկնելու հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, անխուսափելիորեն խմբակներից մեկն եր, ամենաազդեցիկն իր գործունեյության և իր հեղափոխական հետեւողականնության չնորհիվ (մեր գեպքում—«Ասկրա»-յի կազմակերպությունը): Կուսակցության փաստական միասնականության վերականգնման և այդ միասնականության մեջ հնացած խմբակների լուծվելու դարաշրջանում՝ այդպիսի վերին որդան և անխուսափելիորեն կուսակցական համագումարը, վորպես կուսակցության

* versus —գերաբերմամբ:

գերագույն որդան. Համագումարը միացնում է ակտիվ կազմակերպությունների լսու հնարավորության բոլոր ներկայացուցիչներին և, նշանակելով կենտրոնական հիմնարկներ (յերեսն այնպիսի կազմով, վոր ավելի բավարարում է կուսակցության առաջակայի քան հետամնաց տարրերին, ավելի դուր և գալիք նրա հեղափոխական, քան ոպորտունիստական՝ թերին), դարձնում է նրանց վերին որդաններ մինչև հետեւալ համագումարը։ Այսպես և լինում, գոնե, սոցիալ-դեմոկրատիայի յերրողացիների մոտ, թեև քիչ-քիչ, վոչ առանց դժվարության, վոչ առանց պայքարի և վոչ առանց դատարկ վեճերի՝ անարխիստների համար ոկրունքության ատելի արդ սովորությունն սկսում է տարածվել նաև սոցիալ-դեմոկրատիայի ասիցիների վրա։

Վերին աստիճանի հետաքրքրական և ընդգծել, վոր ոպորտունիզմ՝ իմ մատնանշած սկզբունքային զենքը կազմակերպական հարցերում (ավտոնոմիզմ, աղայական կամ ինտելիգենտական անարխիզմ, պոչականություն և ժիրոնդիզմ) նկատվում են բարեկանություն (համապատասխան վարիտություններով) ամբողջ աշխարհի բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեջ, վորուեղ կա բաժանում հեղափոխական և ոպորտունիստական թերերի (իսկ վո՞րտեղ չկա այն): Առանձնապես ոելյեֆ կերպով լույս աշխարհ դուրս յեկալ այդ հենց ամենավերջին ժամանակներս գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ, յերբ ընտրություններին կրած պարտությունը Սաքսոնիայի 20-րդ ընտրական շրջանում (այսպես կոչված Գյորեյի միջադեպը* որտեղաբարի մեջ մտցրեց կուսակցական կազմակերպության սկզբունքները: Նշված միջադեպի առթիվ սկզբունքային հարց, հարուցելուն առանձնապես աջակցեցին գերմանական ոպորտունիստների ջանքերը: Գյորեն (նախկին պատ-

* Գյորեն սոցիստագ ընտրվեց 1903 թ. հունիսի 16-ին՝ 15-րդ սաքսոնական շրջանում, բայց Դրեզդենի համազումարից հետո հրաժարվեց իր ժանապահից. 20-րդ չքանի ընտրուները՝ վորը (չքանի) թափուր մնաց Պողենովի ժահից հետո, ցանկանում էլին առաջարկել նորից Գյորեյի թեկնածությունը: Կուսակցության կենտրոնական վարչությունը և սաքսոնական կենտրոնական ադմինիստրացիան կոմիտեն գեմ կանգնեցին գրան և, ձեւականորեն իրավունք չունենալով արգելելու Գյորեյի թեկնածությունը, այնպես արին, սակայն, վոր Գյորեն հրաժարվեց թեկնածությունից: Ընտրությունների ժամանակ սոցիալ-դեմոկրատները սպառություն կրեցին:

ոոր, վոչ անհայր «Drei Monate Fabrikarbeiter» գրքի հեղինակը և Դրեզդենի համագումարի «Հերոսներից» մեկը)՝ ինքը մոլի ոպորտունիստ և, և գերմանական հետեւղական ոպորտունիստների որդան «Sozialistische Monatshefte»-ն («Սոցիալիստական Ամսագլու») խկույն ևեթ օպաշտապն կանոնեց» նրան:

Ոպորտունիզմը ծրագրի մեջ բնականաբար կազմակերպությունիզմի հետ տակտիկայում և ոպորտունիզմի հետ կազմակերպական հարցերում: «Նոր» տեսակետի շարադրանքին ձեռնարկեց ընկ. Վոլֆանդ Հայնեն: Բնութագրելու համար ընթերցողի առաջ սոցիալ-դեմոկրատային հարած և իր հետ մտքի ոպորտունիստական ընտելություններ բերած այդ տիպիկ ինտելիգենտի գեմքը, բավական կլինի ասել, վոր ընկ. Վոլֆանդ Հայնեն, դա մի քիչ պակաս և գերմանական ընկ. Յեղորդ լինելուց և մի քիչ ավելի խոչոր և գերմանական ընկ. Յեղորդ լինելուց:

Ընկեր Վոլֆանդ Հայնեն «Սոցիալիստական Ամսագլու» արշավանք սկսեց վոչ պակաս հանդիսավորությամբ, քան ընկ. Ակսելը նոր «Անկրա»-յում: Հենց միայն հոդվածի վերագրի ընինչ արժեն՝ «Դեմոկրատական դիմուղություններ Գյորեյի միջադեպի առթիվ» (№ 4, ապրիլ, «Sozialistische Monatshefte»): Յեկի բովանդակությունն ել պակաս ամպրոպային չե: Ընկ. Վ. Հայնեն ծառանում և «ընտրական շրջանի ավտոնոմիայի նկատմամբ կատարված վունձությունների» դեմ, պաշտանում և «դեմոկրատական սկզբունքը», բողոքում և «նշանակված իշխանության» (այսինքն կուսակցության կենտրոնական վարչության) միջամտության դեմ պատղամավորների ազատ ընտրությանը ժողովրդի կողմից: Բանն այստեղ պատահական միջադեպը չենց ուսուցանում և մեղ ընկ. Վ. Հայնեն, այլ ընդհանուր «անձեռները դեպի բյուրոկրատիզմը կուսակցության մեջ», մի տեսնենց, վոր իրը թե առաջ ել եր նկատվում, բայց առանձնապես վտանգավոր և գառնումը Պետք ե «սկզբունքիմ առանձնապես վտանգավոր և գառնումը Պետք ե «սկզբունքիմ առանձնապես կուսակցության տեղական հիմնարկները քորեն ճանաչել, վոր կուսակցության տեղական հիմնարկները նրա կամաքի կորոներն են» (բանագողություն ընկ. Մարտովի «Մի անդամ ևս փոքրամասնության՝ մեջ» բրոշյուրից): Զպետք ե «ընտելայնալ այն բանին, վոր քաղաքական բոլոր կարեոր վճիռները ըղինեն մի կենտրոնից», պետք ե կուսակցությանը նախագողուշացնել «կյանքի հետ իր կապը կորցնող դոկտրինյորական»

Քաղաքականությունից» (վորխառված ե կուսակցության համագումարում ընկ. Մարտովի արտասանած ճառից այն մասին, թե «կյանքն իրենը կանի» ...«Յեթե իրերի արմատներին նայենք, —իր պատճառաբանությունը խորացնում ե ընկ. Վ. Հայնեն, —յեթե վերանանք անձնական ընդհարումներից, վորոնք այստեղ ել, ինչպես և միշտ, փոքր դեր չխաղացին, ապա մենք կտեսնենք ուշիզիոնիստների դեմ (ընդդումը հեղինակինն ե, վոր ակնարկում ե, պետք ե կարծել, տարբերությունը՝ պայքար ունիվերսիզմի դեմ և պայքար ունիվերսիստների դեմ հասկացողությունների) յերեան յեկած այս դաժանության մեջ զլիսալորապես կուսակցության պաշտոնական անձերի անվտանգությունը «կողմնակի տարրի» վերաբերմամբ (Վ. Հայնեն, ըստ յերեսութին, դեռևս չե կարդացել պաշարողական դրության դեմ մղվելիք կըովուն նվիրված բրոցյուրը, ուստի և դիմում ե անդիքարանության՝ Outsidertum), «տրադիցիայի անվտանգությունը դեպի այն բանը, ինչ վոր անսովոր ե, —անդեմ հիմնարկի անվտանգությունը դեպի այն, ինչ վոր անհատական ե, մի խոսքով, նույն այն տենդենցը, վոր մենք արդեն բնութագրեցինք վերը, վորպես բյուրոկրատիզմի և ցննարակիզմի տենդենց կուսակցության մեջ»:

«Կարգապահության» դադարին ընկ. Վ. Հայնեյին ներշնչում ե վոչ պակաս աղնիվ ցասում, քան ընկ. Ակսելրոդին: ...«Ունիվերսիոնիստներին, —գրում ե նա, —կշտամբում եյին կարգապահության պակասության համար այն պատճառով, վոր նըրանք գրում եյին «Սոցիալիստական Ամսագրում»—մի որդանում, վորը չեյին ուզում անդամ սոցիալ-դեմոկրատական համարել, վորովհետեւ նա կուսակցության վերահսկողության տակ չե: «Սոցիալ-դեմոկրատական» հասկացողության նեղացման այս մի փորձն արդեն, կարգապահության այս մի պահանջն արդեն դադարական արտադրության բնադրվառում, վորտեղ պետք ե անպայման ազատություն իշխի» (մտարերեցնք՝ դադարական պայքարը պրոցես ե, իսկ կազմակերպության ձեերը՝ միայն ձեեր), «վկայում են մի տենդենցի մասին, վոր տանում ե դեպի բյուրոկրատիզմ ու անհատականության ձնչում»: Յեվ դեռևս յերկար, յերկար ջախճախում ե Վ. Հայնեն ամեն հարավոր յեղանակներով «մեկ ամենապարփակ մեծ կազմակերպություն, ըստ հեարավության ավելի կենարոնացած կազմակերպություն, մեկ

տակտիկա, մեկ թեորիա» ստեղծելու այս առելի տենդենցը, ջախճախում ե «ամենապայման հնաղանդության», «կուրորեն յենթարկվելու» պահանջը, ջախճախում ե «պարզացրած ցենտրալիզմը» և այն և այլն, տառացի «ըստ Ակսելրոդի»:

Վ. Հայնեյի հարուցած վեճը բորբոքվեց և, վորովհետեւ գերմանական կուսակցության մեջ վոչ մի զատարկ վեճ կոռպատցիայի պատճառով շալբոտեց այն, վորովհետեւ գերմանական Ակիմովիզմին իրենց գեմքը պարզում են վո՛չ միայն համագլումարներում, այլ շարունակաբար առանձին որդանում, ապա վեճն արագ կերպով հանդեց որթոգրափիայի և ունիվերսիզմի՝ կազմակերպական հարցում ունեցած սկզբունքային տենդենցների վերլուծությանը: Վորպես հեղափոխական ուղղության (վոր Հարկավ, ինչպես և մեղանում, մեղադրվում ե «դիկտատորության», «ինվիզիբուորության» և այլ սոսկալի բաների մեջ) ներկայացուցիչներից մեկը հանդես յեկավ կ. Կառուցկին («Neue Zeit», 1904, № 28, «Wahlkreis und Partei»—«Բնուրական շրջանը և կուսակցությունը» հոդվածը): «Վ. Հայնեյի հոդվածը, —հայտարարում ե նա, —ցույց ե տալիս ամբողջ ունիվերսիոնիստական ուղղության մտքի ընթացքը»: Վո՛չ միայն Գերմանիայում, այլ և թե՛ ֆրանսիայում, թե՛ իտալիայում ոպորտունիստները սարի պես կանգնած են ավտոնոմիզմի կողմը, կուսակցական կարգապահության թուլացման կողմը, այն դրոյի հասցնելու կողմը, ամենուրեք նրանց տենդենցները տանում են դեպի կազմակերպություն, դեպի «դեմոկրատական սկզբունքի» ազալացում, վոր նրան վեր ե ածում անարխիզմի: «Դեմոկրատիան իշխանության բացակայություն չե, —ուսուցանում ե կ. Կառուցկին կազմակերպական հարցի ոպորտունիստներին, —դեմոկրատիան անարխիա չե, նա մասսայի իշխանություն ե իր լիազորների վերաբերմամբ, տարբերվելով իշխանության այլ ձեերից, յերբ ժողովրդի կարծեցյալ ծառաներն իրոք նրա իշխանավորներն են հանդիսանում»: Կ «Կառուցկին մանրամասն քննության ե յենթարկում ոպորտունիստական ավտոնոմիզմի կազմակերպություն դերը զանազան յերկրներում, ցույց ե տալիս, վոր հենց «բուրժուալիզմ բազմաքի տարրերի»* սոցիալիստ, վոր հենց «բուրժուալիզմ բազմաքի տարրերի» սոցիալ-դեմոկրատիային հարեւն ե ուժեղացնում ոպորտունիզմը, ավտո-

* Իրբե որինակ կ. Կառուցկին անվանում ե Ժորեսին: Դեպի սպորտունիզմը կատարած նրանց թեքման ուժեղացումով այդպիսի մարդկանց «կուսակցա-

նոմիզմը, կարգապահությունը խափառելու տեսքենցները, հիշեցնում ե դարձյալ ու դարձյալ, վոր հենց «կազմակերպությունն ե այն դենքը, վորով իրեն կազմատի պրոլետարիատը», հենց «կազմակերպությունն ե պրոլետարիատին հատուկ՝ դասակարգային կովկ գենքը»:

Գերմանիայում, վորտեղ ոպորտունիզմն ավելի թույլ ե, քան Ֆրանսիայում և Իտալիայում, «ալտոնոմիստական տեսդենցիան առաջմ հասցրել են սոսկ ավելի կամ պակաս պաթետիկ դեկլամացիաների ընդգեմ դիկտատորների և մեծ ինկվիզիտորների, բնդղիմ յեկեղեցուց հրաժարեցնելու* և հերետիկոսությունը վորոնելու, հասցրել են անվիրջ բժախնդրությունների ու դատարկ վեճերի, վորոնց քննությունը կտաներ միայն դեպի անվիրջ կոիվներ»:

Զարմանալի չե, վոր Ռուսաստանում, վորտեղ ոսկորտունիզմը կուսակցության մէջ ել ավելի թույլ ե, քան Գերմանիայում, ավտոնոմիստական տեսդենցիանը ծնել են ավելի քիչ դատախարներ և ավելի չատ «սպաթետիկ դեկլամացիաներ» ու դատարկ վեճեր:

Զարմանալի չե, վոր կառուցին դալիս ե այսպիսի յեղրակացության. «Թերեւս վոչ մի այլ հարցում բոլոր յերկրների ունիդիպոնիզմն աչքի չի ընկնում այնպիսի միատեսակությամբ, չնայած նրա բոլոր տարատեսակներին, նրա ամբողջ բազմերանգությանը, ինչպես հենց կազմակերպական հարցում»: Որթողոքսիայի և ունիդիպոնիզմի հիմնական տեսդենցիան այդ բնադավառում կ. կառուցին ել ձեռակերպում և «սոսկալի խոսքի» ոգնությամբ՝ բյուրոկրատիզմը ներառած (ընդդեմ) գենուկրատիզմի: «Մեզ ասում են, —դրում ե կ. կառուցին, —վոր կուսակցության վարչությանն իրավունք տալ ազդելու թեկնածուի (պառլամենտի պատգամավորի) ընտրության վրա, վոր կատարվում ե տեղական ընտրական շրջանների կողմից, նշանակում ե «ամսթալի վոտնձգություն կատարել գենուկրատական սկզբունքի դեմ, վորը պահանջում ե, վորպեսզի քաղաքական ամբողջ գործունեյությունը ծա-

կան կարգապահությունն անխռուսակելիորեն պետք ե թվար նրանց ազատ անձնափության անթաւլատրելի ճնշում»:

* Banstrahl — բանալրմանք: Սա գերմանական համարժեքն ե ոռուսական «պաշարողական դրություն» և «բացառիկ որենքների»: Սա գերմանական ոպորտունիստների «սոսկալի խոսքն» ե:

վալիի վարից վեր՝ մասսաների ինքնագործունեյության միջոցով, և վոչ թե վերից վար՝ բյուրոկրատական յեղանակով...»: Բայց յեթե կա վորեւ իսկապես գենուկրատական սկզբունք, ապա այդ այն ե, վոր մեծամասնությունը պետք ե գերակշռություն ունենալ վորքամասնության վերաբերմամբ, և վոչ թե ընդհակառակը»... Պառլամենտի պատգամավորների ընտրությունը մի վորեւ և առանձին ընտրական ըրջանից բովանդակակ կուսակցության ամբողջության կարեւոր հարցն ե և կուսակցությունը պետք և ազդի թեկնածուների նշանակման վրա թեկուզ կուսակցության վոտահությունը վայելող մարդկանց միջոցով (Vertrauensmänner): «Աւ վոր այդ թվում և չափազանց բյուրոկրատական կամ ցենտրալիստական, նա թող փորձի առաջարկել, վոր թեկնածուները նշվեն ընդհանրապես կուսակցության բոլոր անդամների (Sammteiliche Parteigenossen) ուղղակի քվեարկությամբ: Քանի վոր այդ անիրադրելի յե, ապա հարկ ել չկա դանդատովելու գենուկրատիզմի պակասությունից, յերբ մատնանշված Փունկցիան, նման չառ ուրիշների, վորոնք վերաբերում են ամբողջ կուսակցությունը, իրադործվում և մեկ կամ մի քանի կուսակցական ինստանցիաների կողմից»: Գերմանական կուսակցության «սովորույթի իրավունքի» համաձայն առաջնորդում ել առանձին ընտրական ըրջանների կուսակցության վարչության հետ «ընկերաբար համաձայնության եյն դալիս» այս կամ այն թեկնածուն առաջարկելու մասին: «Բայց կուսակցությունն արդեն չափազանց մեծացել ե, վորպեսզի բավական համարվի այդ լուս սովորույթի իրավունքը: Սովորույթի իրավունքը դադարում և թրավունքը լինելուց, յերբ դադարում են այն վորպես ինքնըսափեքյան հասկանալի մի բան ընդունելուց, յերբ վոր նրա սահմանումների բովանդակությունը և մինչև անդամ նրա գոյությունն իսկ վիճարկում են: Այն ժամանակ անվայրման անհրաժեշտ է դառնում ճշգործեն ձեռակերպել այդ իրավունքը, կողիիքիկացիալի յենթարկել այն»,... անցնել ավելի «ճշգրիտ կանոնադրական ամրացման (statutarische Festlegung), թոկ զրա հետ միասին կազմակերպության խստությունը ուժեղացնելուն (grössere Straffheit):

Դուք տեսնում եք, այսպիսով, այլ պայմաններում նույն պայքարը կազմակերպական հարցի ասթիվ կուսակցության ոպորտունիստական և հեղափոխական թեկների միջև, նույն կոն-

Փլիկտն ավտոնոմիզմի և ցենտրալիզմի, դեմոկրատիզմի և «բյու-
ռոկրատիզմի», կազմակերպության ու կարգասկահության խստու-
թյան թուլացման և այդ խստության ուժեղացման տեհնդենցնե-
րի, անկայուն ինտելիգենտի և տոկուն պրոլետարի հոգերանու-
թյան, ինտելիգենտական ինդիվիզուալիզմի և պրոլետարական
համախմբաժության: Հարց և ծագում, ի՞նչպես վերաբերվեց
այդ կոնֆլիկտին բուրժուալիզմ դեմոկրատիան, —վո՞չ այն գե-
մոկրատիան, վոր չարաճի պատմությունը դեռ միայն իբրև
գաղտնիք խոստացել է յերեկոց ցույց տալ ընկ. Ակսելո-
վին, —այլ իսկական, իրական բուրժուալիզմ գեմոկրատիան, վոր
Գերմանիայում ևս ունի վոչ պակաս գիտուն և գիտող ներկայա-
ցուցիչներ, քան մեր պարօն ոսվորութենյականները: Գերմանա-
կան բուրժուալիզմ դեմոկրատիան իսկույն ևելթ արձագանդ տվեց
նոր վեճին և սարի նման պաշտպան կանգնեց, —ինչպես նաև ոռւ-
սականը, ինչպես նաև միշտ, ինչպես նաև ամենուրեք, —իսկույն
ևելթ պաշտպան կանգնեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության
ոպորտունիստական թեկին: Գերմանական բորսայական կազմականի
ականավոր որդան «Ֆրանկֆուրտի լրագիրը» հանդես յեկավ ամ-
պրոպային առաջնորդողով («Frankf. Ztg.», 1904, 7. Apr., № 97,
Abeñdballt), վոր ցույց ե տալիս, վոր Ակսելլովից կատար-
վող անխիղճ բանագողություններն ուղղակի ինչ-վոր հիվանդու-
թյուն են դառնում գերմանական մամուլի համար: Ժրանկֆուրտի
բորսայի աշարկու դեմոկրատները խարսանում են «ինքնակա-
լությունը» սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ, «կու-
տակցական դիկտատուրան», «կուսակցական վարչության ավտո-
կրատիկ տիրապետությունը», այդ «հրաժարեցումները յեկեղե-
ցուց», վորոնցով կամենում են «կարծես թե պատել ամբողջ
ունիղիոնիզմը» (մատրերեցնեք «սուտ մեղադրանքը ոպորտունիզ-
մի մեջ»), այդ «կույցը հնազանդության», «մեւցնող կարգապա-
հության» պահանջը, «լակեյական հպատակության», կուսակցու-
թյան անդամներին «քաղաքական դիմաներ» դարձնելու պահանջը
(այս դեռ ե՛լ ավելի թունդ ե, քան պտուտակներն ու փոքրիկ
անիմները): «Ամեն մի անձնական յուրահատկություն, —իրենց
ցատումն են հայտնում բորսայի ասպետները, տեսնելով հակա-
գեմոկրատական կարգերը սոցիալ-դեմոկրատիայի մեջ, —ամեն մի
անհատականություն պետք է, տեսնում եք, հալածանքի յեն-

թարկվի, վորովհետև նրանք սպառնում են հասցնել Փրանսական
կարգերին, ժորեսիզմին և միլյերանիզմին, ինչպես ուղղակի
հայտնեց Զինդերմանը, վոր զեկուցում եր այդ հարցի մասին»
Սաքսոնիայի սոցիալ-դեմոկրատների կուսակցական համագու-
մարում:

* * *

Այսպիս ուրեմն, վորչափ սկզբունքային իմաստ կա նոր
«Իսկրա»-յի նոր բառիկերում կազմակերպական հարցի նկատմամբ,
այդչափ միանդամայն անտարակուսելի յէ, վոր այդ իմաստն
ոպորտունիստական է: Այս յեղբակացությունն ամբապնդվում և
թե՛ մեր կուսակցական համագումարի ամբողջ վերլուծությամբ,
վորը (համագումարը) բաժանվեց հեղափոխական և ոպորտունիս-
տական թեկերի, թե՛ յեղբողական բոլոր սոցիալ-դեմոկրատական
կուսակցությունների որինակով, վորոնց մեջ ոպորտունիզմը
կազմակերպական հարցում արտահայտվում ե նույն տենդենցնե-
րով, նույն մեղադրանքներով, իսկ շատ հաճախ հենց միևնույն
բառերով: Իհարկե, զանազան կուսակցությունների ազգային
առանձնահատկություններն ու զանազան յերկրների քաղաքական
պայմանների միատեսակ չլինեն իրենց կնիքը դնում են, դարձ-
նելով զերծանական ոպորտունիզմը բոլորովին վոչ նման Փրան-
սականին, Փրանսականը՝ իտալականին, իտալականը՝ ուսւակա-
նին: Բայց այդ բոլոր կուսակցությունների՝ հեղափոխական և
ոպորտունիստական թեկերի հիմնական բաժանման միատեսակու-
թյունը, ոպորտունիզմի՝ կազմակերպական հարցում ցուցահա-
նած մտքի ընթացքի և տենդենցների միատեսակությունը ցայ-
տուն կերպով հանդես են գալիս, չնայած պայմանների մատնանը-
ված ամբողջ տարրերության*: Արմատական ինտելիգենցիայի ներ-
կայացուցիչների սուստությունը մեր մարքսիստների և մեր սո-

*) Ներկայումս վոչ վոք չի կատածի, վոր սուստական սոցիալ-դեմոկրատ-
ների հին բաժանումը եկոնոմիստների և պոլիտիկների՝ տակարեկայի հար-
ցերում՝ միատեսակ եր արձագային ամբողջ սոցիալ-դեմոկրատիայի բաժանմա-
նը ոպորտունիստների և հեղափոխականների, թեպետ և առաջ մեծ ե տարրե-
րությունը մի կողմէց ընկ. ընկ. Մարտինովի և Ակիմովի, և մյուս կողմէց
ընկ. ընկ. Փոս-Ֆուրմարի ու Փոն-Ելմի կամ ժորեկափությունի միջև: Ճիշտ
նույնպես ել անկառական պետք յէ կազմակերպական հարցում հիմնական բաժանմա-
ների միատեսակությունը, չնայած պայմանների այն ահազին տարրերություննե-

ցիալ-դեմոկրատների շարքներում՝ անխուսափելի դարձեց և անխուսափելի յեւ գարձնում նրա հոգերանությունից ծնված՝ սպորտունիզմի առկայությունն ամենատարբեր բնագավառներում և ամենատարբեր ձեւերով։ Մենք պայքար ենքնք մղում սպորտունիզմի դեմ մեր աշխարհայացքի հիմնական հարցերում, ծրագրի հարցերում, և նվատակների վերաբերմամբ լինակատար տարամիտումը անխուսափելիորեն տարավլ վեպի անդարձ սահմանազատում մեր լիգալ մարքսիզմը փչացրած լիբերալների և սոցիալդեմոկրատների միջև։ Մենք պայքարել ենք սպորտունիզմի դեմ տակտիկայի հարցերում, և տարակարծությունն ընկ. ընկ. Կրիչեվսկու և Ակիմովի հետ այդ ավելի պակաս կարևոր հարցերի վերաբերմամբ, բնականաբար, ժամանակավոր եր միայն և չուղեցվեց զանազան կուսակցությունների վոչ մի գոյացմամբ։ Մենք այժմ սկսոք և հաղթահարենք Մարտովի և Ակսելբողի սպորտունիզմը կազմակերպական հարցերում, վորոնք, հարկավ, ե՛լ ավելի պակաս արմատական են, քան ծրագրային և տակտիկական հարցեր, բայց ներկա լուսելին դուրս են յեկել մեր կուսակցավան կյանքի առաջարիմը։

Յերբ խոսվում է սպորտունիզմի դեմ մղվող պայքարի մասին, յերեք չպետք ե մոռանալ բոլոր և ամեն տեսակի բնագավառներում յերեան յեկող ժամանակակից ամբողջ սպորտունիզմի բնորոշ գիծը, նրա անորոշությունը, ճապազությունը, անընթառ և հարցի վորոշ և անդարձ դրումից, վորոնում և համաստարակորը, իժարար գալարվում և մեկը մյուսին բացասող տեսակետների միջև, ջանալով «Համաձայն լինել» թե՛ մեկին և թե՛ մյուսին, իր տարածայնությունները վեր ածելով փոքրիկ ուղղումների, տարակույնների, բարեմիտ և անմեղ ցանկությունների և այլն և այլն։ Ծրագրի հարցերում սպորտունիստ ընկ. Եղ. Բերնշտայնը «Համաձայն ե» կուսակցության հեղափոխական ծրագրին ու թեւ անշուշտ կցանկանար նրա «արմատական բարենորոշումը», բայց ընկ, վորոնք գոյություն ունեն քաղաքականորեն իրավագործկ և քաղաքականորեն աղատ յերկրների միջև։ Խիստ բնորոշ ե, վոր նոր «Իսկրա»-յի սկզբունքային մենք խոստովական կազմակերպական հարցում ունի ծիսածանի բոլոր գույները. գերակշռում են անմեղ պաթետիկ գեկլամացիաները ինքնակալության և բյուրոկրատիզմի մասին, կույր հնագանդության մասին, փոքրիկ պատուտակների ու փոքրիկ անխիսերի մասին, —այն աստիճան անմեղ գեկլամացիաներ, վոր նրանց մեջ գեսևս շատ և շատ դժվար և անջատել իրոք սկզբունքային իմաստն իրոք կոսպտացին իմաստից։ Բայց վորքան խորը մտնես ամստառ, այնքան ավելի կշատանա փայտը. առելի՝ «բյուրոկրատիզմի» վերլուծության և ճշգրիտ վորոշման փոքրերն անխուսափելիորեն տանում են գետի ավտոնոմիզմ, «խորացման» և հիմնավորման փորձերն անխուսափելիորեն տանում են գետի հետամնացության արդարացում, գետի պոչականություն, գետի ժիրոնդիստական Փրազներ։

նա այդ համարում և անժամանակ, աննպատակահարմար, վոչ այնքան կարեոր, վորքան «քննադատության» «ընդհանուր սկզբառունքների» սպարզաբանումը (վորոնք կայանում են զվարաբարապես բուրժուական գետոկրատիայից անքննադատորեն սկզբունքներ և բառիկներ փոխ առնելու մեջ)։ Տակտիկայի հարցերում սպորտունիստ ընկ. Փոն-Ֆոլմարը նույնպես համաձայն և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հին տակտիկային և նույնպես սահմանափակվում ե ավելի գեկլամացիայով, փոքրիկ ուղղումներով, փոքրիկ ծաղրանքներով, ամենին հանդես չգալով վոչ մի վորոշ «մինիստերիալիստական» տակտիկայով։ Կազմակերպական հարցերում սպորտունիստներ ընկ. ընկ. Մարտովն ու Ակսելբոտը նույնպես չեն տվել մինչև այժմ, չնայած ուղղակի մարտահրապերներին, վոչ մի վորոշ սկզբունքային թեղիս, վոր կարող լինի «ամրացվել կանոնադրական ճանապարհով»։ Նրանք ևս կցանկանային, անպայման կցանկանային մեր կազմակերպական կանոնադրության «արմատական ուժորմ» («Իսկրա», № 58, էջ 2, սյունակ 3-րդ), բայց նրանք կդերագանելին նախ զբաղվել «կազմակերպության ընդհանուր հարցերով» (վորոշէետև մեր, չնայած § 1-ին, այնուամենայնիվ ցենտրալիստական կանոնադրության իրոք արմատական բարենորոշումը, յեթե կատարվեր նոր «Իսկրա»-յի վորոշ, անխուսափելիորեն կտաներ գետի ավտոնոմիզմ, իսկ խոստովանել իր սկզբունքային տեսնդենցը գետի ավտոնոմիզմ՝ ընկ. Մարտովը չի կամենում, իհարկե, նույնիսկ հենց իր առաջ)։ Այդ պատճառով նրանց «սկզբունքային» գիրքը կազմակերպական հարցում ունի ծիսածանի բոլոր գույները. գերակշռում են անմեղ պաթետիկ գեկլամացիաները ինքնակալության և բյուրոկրատիզմի մասին, կույր հնագանդության մասին, փոքրիկ պատուտակների ու փոքրիկ անխիսերի մասին, —այն աստիճան անմեղ գեկլամացիաներ, վոր նրանց մեջ գեսևս շատ և շատ դժվար և անջատել իրոք սկզբունքային իմաստն իրոք կոսպտացին իմաստից։ Բայց վորքան խորը մտնես ամստառ, այնքան ավելի կշատանա փայտը. առելի՝ «բյուրոկրատիզմի» վերլուծության և ճշգրիտ վորոշման փոքրերն անխուսափելիորեն տանում են գետի ավտոնոմիզմ, «խորացման» և հիմնավորման փորձերն անխուսափելիորեն տանում են գետի հետամնացության արդարացում, գետի պոչականություն, գետի ժիրոնդիստական Փրազներ։

Վերջապես, վորովես միակ, իրոք վորոշակի և դրա պատճառով պրակտիկայում առանձնապես վառ կերպով յերեան յեկող (պրակտիկան միշտ զնում է թերթիայի առջելից) սկզբունք հանդես է գալիս անարխիզմի սկզբունքը: Կարդապահության ծաղրում—ավտոնոմիզմ—անարխիզմ, ահավասիկ այն սանդուխքը, վորով մերթ իջնում, մերթ բարձրանում է մեր կազմակերպական ոպորտունիզմը, աստիճանից աստիճան դատկելով և վարպետութեն խուսափելով իր սկզբունքների ամեն մի վորոշակի ձևակերպումից*: Ճիշտ և ճիշտ նույն աստիճանավորումն է նկատվում ոպորտունիզմի մեջ ել՝ ծրագրում և տակտիկայում. «որթոդոքսիայի», ուղղահավատության, նեղության և անշարժության ծաղրում—ուժիգոնիստական «քննադատություն» և մինիստերիալիզմ—բուրժուական դեմոկրատիա:

Դեպի կարդապահությունը տածած ատելության հետ հոգեբանական սերտ կապակցության մեջ է դաշնում վիրավորանքի այն անդադրում, տաղտկալի նոտան, վոր հնչում է ընդհանրապես ժամանակակից բոլոր ոպորտունիստների և մասնավորապես մեր վորքամասնության բոլոր գրությունների մեջ: Նրանց հալածում են, նրանց նեղում են, նրանց դուրս են զցում, նրանց պաշտում են, նրանց տանջում են: Այս բառիկների մեջ շատ ավելի հոգեբանական և քաղաքական ճշմարտություն կա, քան, հավա-

* Ով ժամաների § 1-ի առթիվ տեղի ունեցած վիճարանությունները, նա այժմ պարզ կտեսնի, վոր ընկ. Մարտովի և ընկ. Ակսելրովի սխալը § 1-ի վերաբերմամբ անխուսափելիորեն տանում ե, նրա զարգացման և խորացման գեղքում, դեպի կազմակերպական ոպորտունիզմ: Ընկ. Մարտովի հիմնական դոդափարը—ամեն մեկի իրավունքը՝ իրեն կուսակցության մեջ մըստընկությունը—հենց կենց «գեմոկրատիզմ» ե, կուսակցությունը վարից վեր կառուցելու զաղափար: Ընկհակառակը, իմ զաղափարը «յուրոկրատական» և այն իմաստով, վոր կուսակցությունը կառուցվում է վերից վար, կուսակցական համագումարից դեպի կուսակցական առանձին կազմակերպությունները: Թե՛ բուրժուական ինտելիցենտի հոգեբանությունը, թե՛ անհիմանական Փրազները, թե՛ ոպորտունիստական, պոչականության խորիմաստությունը,—այդ ամենն ուրվագծեց արգեն § 1-ին նվիրված վիճարանությունների մեջ: Ընկ. Մարտովի խոսում է «մտքի սկզբան աշխատանքի» մասին նոր «Ասկրա»-յում: Այդ ճիշտ և այն տեսակետից, վոր նու ու Ակսելրովն իրոք շարժում են միտքը նոր ուղղությամբ, § 1-ից սկսած: Գրախառությունն այն և միայն, վոր այդ ուղղությունն ոպորտունիստական է: Վորքան ավելի «աշխատեն» նրանք այդ ուղղությամբ, այնքան խորը պետք է իրվեն ճահճի մեջ:

Հորեն, կարծել և տանջելիների և տանջողների վերաբերյալ գողարի ու սրամիտ կատակի հեղինակը: Վերցրեք, իսկապես, մեր կուսակցական համագումարի արձանագրությունները, —դուք կըտեսնեք, վոր փոքրամասնությունը, այդ—բոլոր վիրավորվածներն են, բոլոր նրանք, ում վորմե բանի համար և յերեկիցե վիրավորել և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան: Այստեղ են բունդականները և ուստիչելականները, վորոնց մենք «վիրավորեցինք» այն աստիճանն, վոր նրանք հեռացան համագումարից, այստեղ են յուժնոուաբոչականները, վորոնք մահացու վիրավորանք ստացան ընդհանրապես կազմակերպությունների և մասնավորապես իրենց սեփական կազմակերպության սպանումից: այստեղ ե ընկ. Մախովը, վորին վիրավորում ելին ամեն անգամ, յերբ նա խորը եր վերցնում (վորովհետև նա ամեն անգամ կարգին խայտառակում եր), այստեղ են, վերջապես, ընկ. Մարտովին ու ընկ. Ակսելրովը, վորոնց վիրավորեցին «ոպորտունիզմի սուստ մեղադրանքով» կանոնադրության § 1-ի համար և պարտությամբ՝ ընտրությունների ժամանակ: Յեվ այս բոլոր գառը վիրավորանքները վոչ թե պատահական արդյունքն ելին անթույլատրելի սրախոսությունների, խիստ արտահայտությունների, կատաղի բանակեծի, գուռը շրջմիացնելու և բռունցք ցույց տալու, ինչպես մինչև այժմ ել կարծում են շատ ու շատ Փիլիստերներ, այլ «Ասկրա»-ի յեռամյա ամբողջ գաղափարական աշխատանքի անխուսափելի քաղաքական արդյունքը: Յեթե մենք այս յերեք տարվա ընթացքում ցոփություն ենք արել վոչ միայն լեզվավել, այլ արտահայտել ենք այն համոզմունքները, վորոնք պետք է գործ գտնան, ապա մենք չեմ ընք կարող չպայքարել համագումարում հակախիրայականների և «ճահճի» դեմ: Խոկ յերբ մենք, ընկ. Մարտովի հետ միասին, վոր մարտնչում եր առաջին շարքերում, բաց ճակատով, այնքան մեծ քանակությամբ մարդիկ վիրավորեցինք, —մեղ մնում եր արդեն բոլորովին քիչ, շատ քիչ վիրավորել ընկ. Ակսելրովին ու ընկ. Մարտովին, վորպեսզի բաժակը լցվեր: Քանակը վերածվեց վորակի: Բացասական բացասում աեղի ունեցավ: Բոլոր վիրավորվածները մոռացան փոխադարձ հաշիվները, միմյանց գիրկը նետվեցին հեկեկանքներով և «լենինիզմի դեմ ապատամբության» * դրու բարձրացրին:

* Այս զարժանակի արտահայտությունը պատկանում է ընկ. Մարտովին:

Ապստամբությունը հիանալի բան է, յերբ առաջազրո տարրերն են ապստամբում ուեակցիոն տարրերի դեմ: Յերբ հեղափոխական թեն ապստամբում և ոպորտունիստականի դեմ, այդ լավ է: Յերբ ոպորտունիստական թեն և ապստամբում հեղափոխական թեի դեմ, այդ վատ է:

Ընկ. Պլեխանովը հարկադրված է այս վատ գործում մասնակցել վորպես, այսպես ասած, ուղմագերի: Նա աշխատում է «սիրտը հովացնել» նրանով, վոր «մեծամասնության» ողտին առաջարկված այս կամ այն բանաձեկ հեղինակների առանձին անհաջող Փրազներն ե վորսում և այդ առթիվ բացականչում: «Խե՞զ ընկեր լենին: Լավ են նրա որթողոքաւ կողմնակիցները» («Ասկրա», № 63, Հայելված):

Դե՞ռ, դիտեք ինչ, ընկ. Պլեխանով, յեթե յես խեղճ եմ, ապա չե՞ վոր նոր «Ասկրա»-յի խմբադրությունն արդեն բոլորովին աղքատ է: Վորքան ել խեղճ լինեմ յես, — դեռևս չեմ հասել այնպիսի բացարձակ աղքատացման, վոր հարկադրված լինեմ աչք փակել կուսակցական համագումարի հանդեպ և կոմիտեյականների բանաձերի մեջ նյութ փնտուի իմ սրամատության վարժության համար: Վորքան ել խեղճ լինեմ յես, — յես հազար անգամ ուժեղ եմ նրանցից, վորոնց կողմնակիցները պատահաբար չե, վոր արտահայտում են այս կամ այն անհարմար Փրազը, իսկ բոլոր հարցերում՝ թե՛ կազմակերպական, թե՛ տակտիկական և թե՛ ծրագրային, համառորեն և հաստատ կերպով դավանում են սկզբունքներ, վորոնք հակադիր են հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին: Վորքան ել խեղճ լինեմ յես, — յես դեռևս չեմ հասել այն աստիճանին, վոր հարկադրված լինեմ քազցնելու հասարակությունից այդպիսի կողմնակիցների ինձ հրամցվող գովասնքները: Իսկ նոր «Ասկրա»-յի խմբադրությունը հարկադրված է անելու այդ:

Դիտեք արդյոք, ընթերցո՞ղ, թե ինչ ե Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցության Վորոնեժի կոմիտեն: Յեթե դուք չդիտեք այդ, ապա միքիչ կարդացեք կուսակցական համագումարի արձանագրությունները: Դուք կիմանաք այնտեղից, վոր այդ կոմիտեյի ուղղությունն ամբողջովին արտահայտում են ընկ. Ակիմովն ու ընկ. Բրուկերը, վորոնք համագումարում ամբողջ գծի յերկարությամբ կովում են կուսակցության հեղափոխական թեկ դեմ և վորոնք տասնյակ անդամներ ուղուցում են:

Մասնիստների շարքն են դասմել բոլորի կողմից, սկսած ընկ. Պլեխանովից և վերջացրած ընկ. Պոպովով: Յեվ ահավասիկ այդ վորոնեժի կոմիտեն իր հունվարյան թերթիկում (№ 12, 1904 թ. Հունվար) հայտարարում է:

«Մեր անդադար աճող կուսակցության մեջ անցյալ տարի կատարվեց կուսակցության համար խոչը և կարևոր գեղաք. կայացալ Ռ.Ս.-Դ.Բ. Կուսակցության-նրա կազմակերպությունների ներկայացուցիչների յերկորդ համագումարը: Կուսակցության համագումարի հրաժիրումը շատ բարդ գործ է և միապետական պայմաններում շատ ոփոկ գործ է, դժվար գործ, ուստի և զարմանալի չե, վոր համագումարի հրաժիրման իրագործումը շատ եր հեռու կատարյալ լինելոց, և ինքը համագումարը թեն անցակ բոլորովին բարեհաջող, բայց ըմավարեց կուսակցության կողմից նրան առաջադրված բոլոր պահանջներին: Այն ընկերները, վորոնց 1902 թվականի կոնֆերենցիան (խորհրդակցությունը) հանձնարարել եր հրաժիրել համագումարը, ձերակալիցին, և համագումարը կազմակերպեցին ուսւական սոցիալ-գենուկրատիայի մեջ գոյուրյուն ունեցող ուղղարյութեներից միայն մեկի, իսկրայականի, ընտրած անձերը: Սոցիալ-դեմոկրատների, բայց վոչ իսկրայական շատ կազմակերպություններ հրաժիրվեցին մասնակցելու համագումարի աշխատանքներին. մասամբ այդ պատճառով կուսակցության ծրագրի և կանոնադրության մշակման խնդիրն իրադրժված ե ծայրահեռորդն անկատար կերպով, խոչը բացերը կանոնադրության մեջ, «վորոնք կարող են վասնավոր թյուրիմացություններ առաջացնել», ընդունվում են համագումարի հենց մասնակիցների կողմից: Համագումարում իսկրայականներն իրենք պառակտվեցին, և Ռ.Ս.-Դ.Բ. մեր կուսակցության խոչը գործիչներից շատերը, վորոնք, առաջ, թվում եր թե ամբողջովին ընդունում եյին «Ասկրա»-յի գործողության ծրագրը, գիտակցիցին նրա այն շատ հայացների անկենուականությունը, վորոնք անց եյին կացնում զիլավորապես լինելը և Պիլիստամուը: Թեև համագումարում վերջներս հաղթող հանդիսացան, բայց գործնական կյանքի ուժը, իրական աշխատանքի սկաննաները, վորի շարքում կանոնած են և բոլոր վոչ-իսկրայականները, արտադրեն շտկում են ահսօրանների սիսաները և համագումարից հետո արդեն ժադրել են լուրջ ուղղումները: «Ասկրա»-ն սաստիկ փոխվել և ի խոստանում և ուշագրությամբ ականջ գնել առհասարակ սոցիալ-դեմոկրատիայի գործիչների պահանջներին: Այսպիսով, թեև համագումարի աշխատանքները յենքակա յեն հետեւյալ համագումարի վերաբենության և, ինչեւ ակներկ և համագումարի հենց մասնակիցների համար, բավարար չեն, ուստի և չեն կարող մտնել կուսակցության մեջ, վորպես անփոխների վորշառմաներ, բայց համագումարը պարզեց կուսակցության գործիչի գրությունը, մեծ նյութ տիեց կուսակցության հետաքա թերթեական և կազմակերպական գործունեյության համար և ահագին ուսանելի փորձ հանդիսացական աշխատանքի հա-

Ժամագումարի վրոշումները և նրա մշակած կանոնա-
դրությունն ուշագրաւքյան կամնին բոլոր կազմակերպությունների
կողմից, բայց շատերը ձեռնպահ կմնան բացառապես նրանցով զեկա-
փարիլուց, նկատի ունենալով նրանց ակներեւ անկատարելությունները:

Համակուսակցական աշխատանքի ամբողջ կարևորագույնը համականա-
լով՝ վարոնների կոմիտեն յեռանգում կերպով արձագանքում եր համա-
գումարի կազմակերպման բոլոր հարցերին: Նա գիտակցում է համագու-
մարում տեղի ունեցած դեպքերի ամբողջ կարևորությունը, վողանում
և կմնարունական նրան (զլամալոր որդան) դարձած «Искра»-յի մեջ կա-
տարված շրջադարձը: Թեև գործերի դրությունը կուսակցության
մեջ և Կ.Կ.-ում մեզ դեռևս չի բալարարում, բայց մենք
համագումար ենք, վոր կուսակցության կազմակերպման գժվա-
րին աշխատանքն ընդհանուր ջանքերով կկատարելապարձիր: Նկատի
ունենալով սուր լուրերը՝ Վորոնների կոմիտեն հայ-
տարարում և ընկերներին, վոր Վորոնների կոմիտեյի՝ կու-
սակցությունից դուրս գալու մասին խոսք անդամ չի կարող
լինել: Վորոնների կոմիտեն հիմնալի իերապով հասկանում ե,
թե ինչ վտանգավոր նախադեպ (որինակ) կդառնար մի բան-
վորական կազմակերպության, վորպիսին Վորոնների կոմի-
տեն ե, դուրս գալը Ռ.Ս.-Դ.Բ.Կ.-ից, և վորպիսի՝ կշամ-
քանի կլիներ դա կուսակցության համար և վորքան դա-
անձնունու կլիներ այն բանվորական կազմակերպու-
թյունների համար, վորոնք կարող ելին հետևել այլպիսի
որինակին: Մենք վո՞չ թե պետք ե ստեղծենք նոր պառակ-
տումներ, այլ համառորեն ճգույնք բոլոր գիտակից բան-
վորներին ու սոցիալիստներին մի կուսակցության մեջ հա-
մարմբելու: Մանավանդ վոր յերկրորդ համագումարը
հերթական համագումար եր, և վոչ թե հիմնալիր: Հեռա-
ցումը կուսակցությունից կարող ե լինել միայն կուսակցա-
կան դատարանով, և վոչ մի կազմակերպություն, վոչ իսկ
կենտրոնական կոմիտեն, իրավունք չունեն հեռացնելու կու-
սակցությունից վորեւ սոցիալ-դեմոկրատական կազմակեր-
պություն: Ե՞լ ավելին. յերկրորդ համագումարում ընդուն-
ված ե կանոնադրության ութերորդ պարագրաֆը, վորի
համաձայն ամեն մի կազմակերպություն իր տեղական գոր-
ծերում ավտոնոմ (ինքնուրույն) ե, ուստի և վորոնների
կոմիտեն լիակատար իրավունք ունի իր կազմակերպական
հայցներն անցկացնելու կյանքում և կուսակցության մեջ:

Նոր «Искրա»-յի խմբագրությունը, մատնանշելով այս թեր-
թիկը № 61-ում, արտատպել ե բերված տիրագայի յերկրորդ,
խոշոր տառերով շարված, մասը, իսկ առաջին մասը, վոր շարված
ե մանրատառ, խմբագրությունը գերադասել ե բաց բողնութեալ:

Ամաչել ե:

դ) ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ: ՅԵՐԿՈՒ
ՀԵՂԱԾՐՁՈՒՄ

Հնդհանուր հայացք գցելով մեր կուսակցական նղնաժամի
դարպացման վրա, մենք հեշտությամբ կտեսնենք, վոր յերկու
պարզացող կողմերի հիմնական կազմն ել միշտ յեղել ե, չնչին
բացառություններով, միենույնը: Այդ մեր կուսակցության հե-
րախուսական և ոպորտունիստական թեերի պայքարն եր: Բայց
այդ պայքարն անցել ե ամենազանազան ստաղիաներ, և այդ ստա-
րդիաներից ամեն մեկի առանձնահատկությանը ճշգրիտ ծանոթ լի-
նեն անհրաժեշտ ե ամեն մեկին, ով կամենում ե գլուխ հանել
արդեն կուսակիւած ահազեն ուրականությունից, բազմաթիվ հատ-
կածական նշումներից, կապակցությունից կորպված մեջբերումնե-
րից, առանձին մեղադրանքներից և այն և այն:

Այս ստաղիաներից յուրաքանչյուրը բնորոշվում է կովի եյս-
պես տարբեր կոնյունկտուրայով և գրոհի անմիջական նպատակով.
յուրաքանչյուր ստաղիա ներկայացնում ե, այսպես ասած, առան-
ձին հակատամարտ մի ընդհանուր պատերազմական արշավանքի
մեջ: Զի կարելի բան հասկանալ մեր պայքարում, յեթե չուսումնա-
սիրենք յուրաքանչյուր ճակատամարտի կոնկրետ պայմանները:
Իսկ ուսումնասիրելով այդ՝ մենք պարզ կտեսնենք, վոր զարդա-
ցումն իրոք ընթանում է գիտելելու կանուխ, հակասություն-
ների ուղիով—փոքրամասնությունը գառնում ե մեծամասնու-
թյուն, մեծամասնությունը՝ փոքրամասնություն: յուրաքանչյուր
կողմ պաշտպանությունից անցնում է հարձակման և հարձակու-
թից՝ պաշտպանության: դադախարային պայքարի յելակետը
մից՝ պաշտպանության: Եթե անդը զիջելով ամենակուլ դատարկ
(§ 1) «բացասակում ե», իր անդը զիջելով ամենակուլ դատարկ
վեճին*, բայց հետո սկսվում ե «բացասաման բացասումը» և

*) Դատարկ վեճերն ու սկզբունքային արակարծությունները առհմանապա-
տելու դժվարին հարցն այժմ վճառում ե ինքնըստինքան: այն ամենը, ինչ
վոր կոռպատակային ե վերաբերում, դատարկ վեճ և այն ամենը, ինչ վոր

մի կերպ, հազիւլ հազ, «Համակերպվելով» զանազան կենտրոններում, մենք վերադառնում ենք զուտ գաղափարային կովի յելակետին, բայց այդ «թեղիսն» արդեն հարստացված և «անտիթեղիսի» բոլոր արդյունքներով և վեր և ածվել բարձրագույն սինթեզի, յերբ մեկուսացած, պատահական սխալը § 1-ի առթիվ աճել և գարձել և կազմակերպական հարցում ոպորտունիստական հայտցքների զամանակամասում, յերբ այդ յերեսույթի կազմը մեր կուսակցության՝ հիմնականում հեղափոխական և ոպորտունիստական թեղիսի բաժանվելու հետ՝ բոլորի առջև հանդես ե գալիս ավելի ու ավելի ակնբախ կերպով։ Մի խոսքով, վո՛չ միայն վարսակն ե բուսնում ըստ Հեղեղի, այլև ուստական սոցիալ-դեմոկրատներն են պատերազմում միմյանց հետ՝ նույնպես ըստ Հեղեղի։

Բայց հեղելյան մեծ դիալեկտիկան, վոր փոխ ե առել մարքսիզմը, վոտքերի վրա կանգնեցնելով այն, յերբեք չպետք է շփոթել քաղաքական գործիչների զիգզազների արդարացման վուլգար յեղանակի հետ, այն գործիչների, վորոնք կուսակցության հեղափոխական թևից ցատկում են ոպորտունիստական թևը, —առանձին հայտարարությունները, միասնական պրոցեսի զանազան ստաղիաների զարգացման առանձին մոմենտները մի կույտում խառնելու գուհհիկ մանյովը հետ։ Ճշմարիտ դիալեկտիկան չի արդարացնում անձնական սխալները, այլ ուսումնասիրում և անխուսափելի շրջադարձերը, ապացուցելով նրանց անխուսափելիությունը զարգացման ամենամանրամասն ուսումնասիրության հիման վրա՝ այդ զարգացման ամբողջ կոնկրետությամբ։ Դիալեկտիկայի հիմնական դրույթն ե՝ արտարակություն և անձմարտություն չկա, ճշմարտությունը միշտ կոնկրետ ե . . . Յեկ նմանապես չպետք ե հեղելյան այս մեծ դիալեկտիկան շփոթել այն գուհհիկ առորեական իմաստության հետ, վորն արտահայտվում է իտալական առածությունում այստեղ, ուր գլուխը չի մտնում։

Մեր կուսակցական պայքարի դիալեկտիկական զարգացման ամփոփումը հանդում ե յերկու հեղաշրջման։ Կուսակցական համագումարն իսկական հեղաշրջում եր, ինչպես արդարացի մատնաշեց ընկ. Մարտովն իր «Մի անդամ ևս փոքրամասնության վերաբերում և համագումարում տեղի ունեցած պայքարի վերլուծմանը, § 1-ին նմբիված միջաբանություններին, ինչպես և դեպի ոպորտունիզմն ու անարիզմը կատարած շրջադարձին, սկզբունքային տարտկարձություն ե։

մեջ» հոգվածում։ Իրավացի յեն նույնպես փոքրամասնության պատկանող այն սրախոսուները, վորոնք ասում են՝ աշխարհը հեղափոխություններով և շարժվում, ահա մենք ել հեղափոխություն կատարեցին համագումարից հետո։ Ծմարիտ ե նաև այն, վոր աշխարհն, ընդհանրապես ասած, շարժվում ե հեղափոխություններով։ Բայց յուրաքանչյուր կոնկրետ հեղափոխության կոնկրետ նշանակությունը գեռնես չի վորոշվում այս ընդհանուր սասացվածքով։ Անում են հեղափոխություններ՝ նման ունակցիայի, յեթե վորոշ փոփոխությամբ ուրծածենք անմոռանալի ընկ. Մախովի անմոռանալի արտահայտությունը։ Պետք ե գիտենալ՝ կուսակցության հեղափոխական, թե ոպորտունիստական թևն ե յեղել այն իրական ուժը, վոր կատարել ե հեղաշրջումը, պետք ե գիտենալ՝ մարտիկներին հեղափոխական սկզբունքներն են վողերել, թե ոպորտունիստական սկզբունքները մեջ վորաշեզի վորոշներ, առաջի թե հետ ե շարժել «աշխարհ» (մեր կուսակցությանը) այս կամ այն կոնկրետ հեղափոխությունը։

Մեր կուսակցական համագումարն իր տեսակի մեջ միակ, չտեսնված մի յերեսույթ եր ուսումնասիրում հեղափոխական շարժման ամբողջ պատմության մեջ։ Առաջին անգամ հեղափոխական կոնսպիրատիվ կուսակցությանը հաջողվեց դուրս գալ ընդհատակյախավարից լույս աշխարհ, ցույց տալով ամենքին ու յուրաքանչյուրին մեր կուսակցական ներքին պայքարի ամբողջ ընթացքն ու յելքը, մեր կուսակցության և նրա յուրաքանչյուր, փոքրիշատենկատելի մասի պատկերը ծրագրի, տակտիկայի և կաղմակերպության հարցերում։ Առաջին անգամ հաջողվեց մեղ ազատվել պության հարցերում։ Կառաջին անգամ հաջողվեց մեղ ազատվել համբակային առնձարձակության և հեղափոխական քաղքենիության տրագիֆիայից, տասնյակներով ի մի հավաքել ամենատարբեր խմբերին, վորոնք հաճախ կատաղի թշնամություն ունեցին միմյանց դեմ, վորոնք կապված ելին բացառապես գաղափարի ուժով և պատրաստ ելին (սկզբունքով պատրաստ) զոհաբերելու ամբողջ և ամեն տեսակ խմբային առանձնություն ու խմբային ինքնուրույնություն հոգուտ մեծ, առաջին անգամ մեր կողմից ճարագանում ստեղծվող ամբողջի՝ կուսակցության։ Բայց քաղաքականության մեջ զոհերը չեն տրվում ձրիաբար, այլ վերցվում են կուպով։ Կաղմակերպություններն սպանելու համար մզվող կուիչն անխուսափելիորեն դուրս յեկավ սաստիկ գաժան։ Բացարկուիչն անխուսափելիորեն դուրս յեկավ սաստիկ գաժան։ Վայտ հայտ ազատ պայքարի զովաշունչ քամին դարձավ մըրիկ։ Այդ

մըրիկը սրբեց—և շա՛տ լավ է, վոր սրբեց,—առանց բայցառության բոլոր խմբակային շահերի, դղացմունքների և արագիցիաների բոլոր և ամեն տեսակի մնացորդները, առաջին անգամ առեղծելով իրոք կուսակցական պաշտոնիական կոլեգիաներ:

Բայց այլ բան է կոչվելը, այլ բան է լինելը: Այլ բան է սկզբունքով խմբակայնությունը դոհելը հոգուտ կուսակցության, այլ բան է իր խմբակից հրաժարվելը: Զովաշունչ քամին դեռևս չափազանց զովաշունչ դուրս յեկավ մզլած քաղքենիականությանն ընտելացած մարդկանց համար: «Կուսակցությունը չդիմացավ իր առաջին կոնդրեսին», ինչպես արդարացի արտահայտվեց (անըսպասելիորեն արդարացի արտահայտվեց) ընկ. Մարտովն իր «Մի անդամ ևս փոքրամասնության մեջ» զրվածքում: Կաղմակերպությունները մեղնելու պատճառով առաջացած վիրավորվածությունը չափազանց ուժեղ եր: Կատաղի մըրիկը բարձրացրեց ամբողջ տիղմը մեր կուսակցական հեղեղատի հատակից, և այդ տիղմը ուելանց տարավի: Հին կոստացած խմբակայնությունը հաղթեց դեռևս մատաղ կուսակցականությանը: Գլխովին ջախջախված՝ կուսակցության ոպորտունիստական թեր—ժամանակավորապես, իհարկե, —հաղթեց հեղափոխական թերն, ամրապնդվելով Ակիմովյան պատահական ալարով:

Դրա հետեանքով ստացվեց նոր «Իսկրա»-ն, վորը հարկադրված է դարձացնել և խորացնել այն սիալը, վոր դործել են նրա խմբակիները կուսակցության համագումարում: Հին «Իսկրա»-ն հեղափոխական պայքարի ճշմարտություններ եր ուսուցանում: Նոր «Իսկրա»-ն առորեական իմաստություն է ուսուցանում՝ զիշողականություն և համակերպություն: Հին «Իսկրա»-ն ժարտնչող որթողոքիայի որդանն եր: Նոր «Իսկրա»-ն հրամցնում է մեղ ոպորտունիցի զկոսոցը—գլխավորապես կաղմակերպական հարցերում: Հին «Իսկրա»-ն վաստակեց թե՛ ոռուսական և թե՛ արևմտայիշուպական ոպորտունիստների իր համար պատմավոր առելությունը: Նոր «Իսկրա»-ն «խելոքացել ե» և չուտով կդադարի իր հասցեյին ծայրահեղ ոպորտունիստների կողմից շռայլվող դոփասանքներից ամաչելուց: Հին «Իսկրա»-ն անշեղորեն զնում եր դեպի իր նպատակը, և նրա խոսքը չեր հակասում դործին: Նոր «Իսկրա»-յում իր դերքի ներքին կեղծությունն անխուսափելու քննում եւ—անկախ նույնիսկ վորեն մեկի կամքից ու գիտակ-

ցությունից—քաղաքական կեղծավորություն: Նա ճշում է խըմբակայնության դեմ, վորպեսզի քողարկի խմբակայնության հաղթությունը կուսակցականության վերաբերմամբ: Նա փարիսեցիութեն դատապարտում ե պառակտումը, կարծես թե կարելի յեր յերեակայի պատական դեմ վորեն այլ միջոց փոքրիշտուկ կադակելով վարդված փոքրիշտուկ կուսակցության մեջ, բացի նրանից, վոր անդերպված փոքրիշտուկ կուսակցությանը մեծամասնությանը: Նա հայտափոքրամասնությունը հպատակիցի մեծամասնությանը կարծիքը հաշվի առնելու անհրաժեշտության մասին և, թաղցնելով Ակիմովիների գովասանքները, մանր բամբասանքով և պարապում կուսակցության հեղափոխական թերի կոմիտեների մասին: Վորագիսի՛ խայտառահանգությունը նրանք մեր հին «Իսկրա»-ն: կություն: Ինչպես խայտառակեցին նրանք մեր հին «Իսկրա»-ն:

Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ... Այս լինում է և՛ անհատների կյանքում, և՛ ազդերի պատմության մեջ, և՛ կուսակցությունների գարդացման մեջ: Ամենահանցավոր փոքրողություն կլիներ գեթ մի բոպե տարակուսել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիկ ակտիվիտետի մասին: Մենք արդեն շատ բան ենք նվաճել, մենք պետք ե պայտարենք այսուհետև, չնկնիմ վերը անհաջորդությունների գեղաքում, պետք ե պայտարենք այսուհետև, չնկնիմ վերը անհողողությունների գեղաքում, արհամարհելով իմբակային տուրութմփոցի քաղենիական յեղանակները, մինչև վերջին հնարավորությունը պահպանելով այնպիսի՝ չանցերով ստեղծված միասնական կուսակցական կապը Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատների միջև և համառ ու սիստեմատիկ աշխատանքով հասնենք այն դրության, վոր լիակատար ու գիտակցական կերպով ծանոթացնենք կուսակցության բոլոր անդամներին և մանապով վանվորներին կուսակցական պարտականություններին, կուսակցական լ համագումարում տեղի ունեցած պայքարին, մեր տարակարծության բոլոր պատճառներին ու փոփոխություններին, ուղություններին, ոպորտունիցի ամբողջ կորստարերությանը, այն ուղությունների, վոր կազմակերպական դործի բնադավառում ել նույնպես անողնական կերպով տեղի յետալիս բուրժուական հոգեբանության առաջական առաջական կերպով վիստ է առնում նույնական պեմոկրատիայի տեսակետը, նույնական բթաշնում և բուրժուական գեմոկրատիայի գասակարգային պայքարի զենքը, ինչպես և մեր պրոլետարիատի գասակարգային պայքարի զենքը, ինչպես և մեր ծրագրի և մեր տակտիկայի բնագավառում:

Պրոլետարիատն այլ դենք չունի իշխանության համար մըղ-
վող պայքարում, բացի կազմակերպությունից : Բուրժուական աշ-
խարհում տիրող անարիխական մրցության գերիշխանությամբ
անջառվող, կապիտալի համար կատարվող հարկադրական աշխա-
տանքից ճգմված, շարունակարար լիակատար թշվառության, վայ-
րենացման և այլասերման «Հատակը» նետվող պրոլետարիատը
կարող և գառնալ և անխուսափելիորեն կղանա անպարտելի ուժ
միայն չնորհիլ այն բանի, վոր մարքսիզմի սկզբունքներով նրա
գաղափարային միավորումն ամբապնդվում և այն կազմակերպու-
թյան նյութական միասնականությամբ, վոր միլիոնավոր աշխա-
տավորներ և միացնում, ստեղծելով բանվոր դասակարգի բանակը :
Այդ բանակին չի դիմանա վո՛չ ոռւսական ինքնակալության զառա-
մած իշխանությունը, վո՛չ միջազգային կապիտալի զառամող
իշխանությունը : Այդ բանակն ավելի ու ավելի սերտ պետք ե
ուղղի իր շարքերը, չնայած և վոչ մի դիգուդի և հետընթաց
քայլերի, չնայած ժամանակակից սոցիալ-դեմոկրատիայի ժիրոն-
դիտաների ոպորտունիստական Փրազներին, չնայած հետամաշ
իմբակայնության ինքնազո՞հ դրվագուման, չնայած ինտելիգենտա-
կան անարիխիզմի կեղծ փայլին ու աղմկարարությանը :

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ասկրա»—հեղափոխական մարքսիստների համառուսական առաջին լրա-
դիրը, գիմնել և լենինց արտաօահմանում 1900 թ. : Կուսակցության ծրագրի,
տակադիկայի և կազմակերպության բոլոր հարցերում «Ասկրա»-ն մարքսիստա-
կան տոկուն դիմ եր վարում : «Ասկրա»-ն հսկայական գեր խաղաց կուսակ-
ցության ստեղծման գործում, նրա գաղափարական և կազմակերպական կենտ-
րոնն եր 1900—1903 թ. թ. ժամանակաշրջանում :

«Ասկրա»-ի խմբագրությունն սկզբնապես կազմում ելին Վ. Ի. Լենինը,
Լ. Մարտովը, Ա. Պոտրեսովը (Ստարովերը), Գ. Պեխանովը, Ա. Ակսելբեգը,
Վ. Զասուլիչը : II համագումարը «Ասկրա»-ն հաստատեց կուսակցության
կենտրոնական որդան և խմբագրություն ընտրեց հետեւյալ կազմով՝ լենին,
Պեխանով, Մարտով : Սակայն Մարտովը, վոր II համագումարում դարձել եր
փոքրամասնության լիգերը, հրաժարվեց խմբագրության մեջ մտնելուց : Մեն-
չեկիների կողմն անցան Պոտրեսովը, Ակսելբեգը, Զասուլիչը, իսկ II համա-
գումարից հետո չուն չուն Պեխանովը : Լենինը դուրս յեկալ խմբագրու-
թյունից, և «Ասկրա»-ն դարձավ մենշեկիների որդանը (նոր «Ասկրա») :—0:

2. Եկանոնիստների կոչվում երին 90-ական թվականների վերջին—900-ական-
ների սկզբին ուսուական սոցիալ-դեմոկրատիայի ոպորտունիստական հոսոնքի
ներկայացուցիչները, վորը գտնում եր, վոր բանվորները պետք ե սահմանա-
փակին կապիտալիստների դեմ անտեսական պայքար մղելով, քաղաքական
պայքարը թողնելով լիգերալ բուրժուազիային : Մարտինովը (Ա. Պիկերը)
եկոնոմիստների լիգերներից մեկն եր. II համագումարում հանդես եր գալիս
մենշեկիների կողմը : 1923 թ. մտավ Համեկ(ր)կ մեջ :—10:

3. Կարլ Կաուցկի—գերմանական սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդներեց
մեկը, II ինտերնացիոնալի ականավորագույն թեորետիկ : Կաուցկին իր առա-
ջին աշխատություններում հանդես եր գալիս իրեն մարքսիստ և պայքարում
եր ոպորտունիստի դեմ, թեավետ և վոչ լիովին հետեւյականորեն : 1910 թվա-
կանից Կաուցկին ըրջլեց գեպի ոպորտունիստները, սկզբում ցենտրիստական
Շերֆեր գրավից (սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական և ոպորտունիստական
թերքեր ըրջլեց հաշտվողականության), հետո գարձավ մարքսիզմի և պրոլետար-
կան հեղափոխության ամենասուր ունեցածներից (ուրացողներից) մեկը,
իսորհգային իշխանության ամենավատթար թշնամին :—10:

4. «Բանվորական համագումար» հրամիերելու գաղափարն առաջ եր քաշել

մենչեկի Ակսելըողը 1905 թ. Հեղափոխությունից հետո՝ Անկուսակցական «բանվորական համազգություն», ըստ մենչեների մասհացության, ողեաք և հիմք ծառայեր «բանվորական լայն կուսակցություն» ստեղծելու համար։ Լենինը մերկացրեց «բանվորական համագումարի» գաղափարն իրոք մի միջնառում, վար ուղղված է բանվոր դասակարգի վրա կուսակցական, առցիսալգեմոկրատական աղջեցություն ունենալու դեմ։ ԲՍԴԲկ V համագումարը 1907 թ. մերժեց մենչեների առաջարկը «բանվորական համագումար» Հրավիրելու մասին։—11:

5 ԲՍԴԲկ II համագումար հրավիրելու կազմակերպական կոմիտեն (կողմ-կոմ) սկզբանակես ընտրվել եր սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների 1902 թ. դարսանը ԲԵԼոստոկում կայացած կոնֆերենցիալում։ Կոնֆերենցիալը հետո կազմկոմի յերկու անդամը (յերեքից) ձերբակալվեցին, և համագումար հրավիրելու աշխատանքի ամրությամբ անցավ «Ասկրա»-յին։ Նույն տարվա նոյեմբերին «Ասկրա»-ն Պակվում կոնֆերենցիա գումարեց կազմկոմի համագումար հրավիրելու աշխատանքները վերանորոգելու համար։ Կազմկոմի մեջ մտան Պետերբուրգի «Բանվոր դասակարգի աղասալգեման որայքարի միության», «Յուժնի սարուչի» խմբի, «Ասկրա»-յի, իսկ ավելի ուշ՝ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների «Հյուսիսային միության» և Բունզի ներկայացուցիչները։—13:

6 Բունզ—ԷՀՀաստանի, Լիբովյի և Բուռաստանի հրեական բանվորական ընդհանրական միությունը կազմվել է 1897 թ.։ ԲՍԴԲկ առաջին համագումարում 1898 թ. Բունզը մտավ նրա մեջ։ ԲՍԴԲկ II համագումարում Բունզը կուսակցությունից դուրս յեկավ, վորովհետև համագումարը մերժեց Բունզի նացիստական պահանջը իրեն հրեական պրօխտարիստի միակ ներկայությունը ճանաչելու մասին։ Բունզն ոժանդակում եր մենչեներին, պայքարում եր բոլշևիկների դեմ։—14:

7 «Բարօշե Շելո»—Շուռուալ, Էկոնոմիստների որդում, վոր հրամարկվում եր արտասահմանում 1899—1902 թ. թ.։—14:

8 «Յուժնի սարուչի»—սոցիալ-դեմոկրատական մի խումբ, վոր 1900—1903 թ. թ. ՅԵԼատերինուում նույնանուն անդամալ թերթն եր հրամարակում։ Հայտարարելով, թե համերաշխ և «Ասկրա»-յի հետ, խումբը շարունակում եր նրա հետ արակարծիք լինել մի շարք հիմնական հարցերում։ II համագումարում պառակտվելուց հետո խմբի անդամները հարցեցին մենչեներին։ Խումբը ցըլիք արդեց ԲՍԴԲկ II համագումարի վորոշումով։—14:

9 Ակիմով (Մախնիկեց, Վ.՝)—պատվիրակ «Արտասահմանի ուսու սոցիալ-գետքարանների միությունից», ծայրահեղ ուղղուունիստներից մեկը ԲՍԴԲկ մեջ, Էկոնոմիստի ներկայացուցիչ։—16:

10 Մայով (Կալաֆատի, Պ.՝)—II համագումարից հետո դարձավ մենչեւիք։—16:

11 Բրուկեր (Լիդիա Մախնիկեց)՝—պատվիրակ Պետերբուրգի բանվորական կազմակերպությունից, Էկոնոմիստի ներկայացուցչուհի։—16:

12 «Բորբ»—սոցիալ-դեմոկրատական մի խումբ, վոր գոյություն և սւնեցել արտասահմանում 1901—1903 թ. թ., պայքարել և «Ասկրա»-յի դեմ։—16:

13 Յեգորով (Լեվին, Յ.՝)—պատվիրակ «Յուժնի սարուչի» խմբից։—17:

14 Պավլովիչ-Կրասիկով, Պ.—իսկրայական կազմակերպության գործունյա աշխատող, ԲՍԴԲկ II համագումարի հրավիրման կազմկոմի անդամ, բոլցեկի։ Սպոլիմ (Բառաման, Ն.)—պատվիրակ Մոսկվայի կոմիտեյից, բոլցեկի։ Լանգե (Ստովանի, Ա.)—պատվիրակ «Հյուսիսային միությունից», բոլցեկի։—17:

15 Պավոլ (Մովսեսի, Վ.՝)—պատվիրակ «Յուժնի սարուչի» խմբից։—18:

16 Ֆյազամով, Գ.—«Բորբ» խմբի անդամ։ 1917 թ. Հարեց բոլցեկիներին, բայց հետագայում կուսակցությունից վտարվեց իրեւ դավաճան և ժողովրդի թշնամի։—18:

17 Ռուսով (Կոնյանց, Բ.)—պատվիրակ Բագրի կոմիտեյից։ Դեյչ, Լ.—«Աշխատանքի աղասալգերում» խմբի անդամ, հարում եր «Ասկրա»-յին, համագումարից հետո՝ մենչեների։—21:

18 Գուսեվ, Ս.—պատվիրակ Դոնի կոմիտեյից, բոլցեկի։—21:

19 Քելով (Ցելյուի, Լ.)—պատվիրակ Մոսկվայի կոմիտեյից, համագումարից հետո՝ մենչեների։—21:

20 Ալով (Մալիմ-Սակուլյանի)՝—պատվիրակ ՅԵԼատերինոսուլավի կոմիտեյից։ Համագումարում հարում բոլցամասնությանը։—22:

21 Լյադով, Մ. (Լիդիմ)՝—պատվիրակ Մարտունի կոմիտեյից, բոլցեկի։ Մարտունյան՝—պատվիրակ Ռեֆյայի կոմիտեյից։—22:

22 Գիրով (Նոսկով, Վ.)—համագումարին մասնակցել և խորհրդակցական ձայնով և հարել և բոլցեկիներին։ Գրին, Վ. (Գալիմին)՝—պատվիրակ Սարաձանուում և հարաբեկում թարում էր մեծամասնությանը։—22:

23 Կ. Ո.—կուսակցության կենտրոնական որդանը (Արգեբը)։—22:

24 Պոստրովսկի (Մանդիկերպ, Վ.)—պատվիրակ ՍԵՐԲի միությունից, Ո համագումարից հետո՝ մենչեների։—24:

25 «Ֆրուսկան» հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան կիմնավել և 1901 թ. և ոժանդակ կազմակերպություն և յեղել «Ասկրա»-յի խմբարարությանը կից։ Կուսակցության II համագումարից հետո Լիկան դայի անդամների մեծամասնությանը անցավ մենչեների կողմը, և Լիկան դարձավ մենչեների պատվարը արտասահմանում։—25:

26 «Էկուունը» իրավահամարական սոցիալ-գետքարարության» հարցը լուծվեց Ո համագումարի կուսակցության ծրագրի մեջ մի հատուկ կամ ամելացնելու միջոցով, բռու կուսակցության մինչեւ մարդարածիք լինել մի շարք հիմնական հարցերում։ Անդամների ուղարկությունը ուղարկելու ժողովներում, պետական և նալու մայրենի լիզովով, մայրենի լիզովով ուղարկելու ժողովներում, պետական և հասարակական հիմնարկերում։—27:

27 Լիով (Մաշիմսկի, Ի.)—պատվիրակ Գոնասի լեռնագործների սոցիալ-գետքարական միությունից, Ո համագումարից հետո՝ մենչեների։—27:

28 Մեղվեդով (Նիկոլայի, Լ.)—պատվիրակ Մարկովի կոմիտեյից, Ո համագումարից հետո՝ մենչեների։ Խվանով (Լիվինա, Յ.՝)՝—պատվիրակ Մարկովի կոմիտեյից, «Յուժնի սարուչի» խմբի անդամ։ Յարյով (Լիկերման, Ա.)—պատվիրակ Մարկովի կոմիտեյից, և անդամների ուղարկությանը անցավ մենչեների կողմը, և Լիկան դայի գոյությունը կուսակցությանը անցավ մենչեների կողմը։—27:

29 Կոստի (Զքորովսկի, Ս.)—պատվիրակ կուսակցի լեռնագործների սոցիալ-գետքարական միությունից, Ո համագումարից հետո՝ մենչեների։—28:

30 Լենտիկի (Վիլենտիկի, Ա.)—պատվիրակ կուսակցության Յեկատերինաստանում՝ կը կոմիտեյից, II համագումարում՝ բոլշևիկ:—28:

31 II համագումարում ընդունված իր ազգարարային ծրագրում կուսակցության ուրիշ պահանջների թվում առաջարկում եր գյուղացիներին «առաքելավունքը» վերացնելու ժամանակ կարգել ելին գյուղացիներից: Բոլշևիկները, այսինքն՝ այն հողերը վերագրանելը, վորոնք ճորտառերական իրավունքը վերացնելու ժամանակ կարգել ելին գյուղացիներից: Բոլշևիկները պայալ հարցին մոտենում ելին ամենենին վոչ պատմական առանձին մի անարդարության «ուղղելու» տեսակետից: Բոլշևիկներն այն ժամանակ «ոտքեղեաները» վերագրանելու բոլոնեղը ամենից ալելի հարմար ելին համարում, վորոնքը գյուղացիներին հեղափոխական պայցքարի մեջ քաշեն կալվածառութերի շաբական իշխանության գեմ: Բայց լենինը հենց այն ժամանակ մատնանը՝ մոր հեղափոխական կուսակցությունը կապաշտական գյուղացիների բանութերի կոնֆինակացիան: Այդ վորոնք մի բանում եր ընդունվել կուսակցության III համագումարում 1905 թ. ապրիլին: II համագումարի ընդունած ադրարային ծրագրի մասին տե՛ս լենինի առաջարանը այդ դրբի 2-րդ Հրատարակությունը:—28:

32 Այսուղ նկատի յեն առնված կարկովի և Պոլտավայի նահանգների 1902 թ. գյուղացիական ապատամբությունները, յերբ այդ նահանգներում աւքալի ելին կալվածառութերական գրեթե բոլոր դասակարգաներում առողջել ելին կալվածառութերին մասնակցությունը:—30:

33 Կոստրով (Ժորգանիա, Ն.)—II համագումարին մասնակցում եր խորհրդակցական ձայնով: Դարձավ կովկասյան մենչեկների առաջնորդներից հորհրդակցական ձայնով: Դարձավ կովկասյան մենչեկների առաջնորդներից պատմիւթակ Թիֆլիսի կոմիտեյից, հանդես եր դալիս II համագումարի կողմը, համագումարից հետո՝ մենչեկի:—31:

34 Գյուղացիության հետ բանվոր դասակարգի ունենալիք կապի անհրաժեշտության մասին Տրոցկու այս առողջը գասարի Փրազ եր միայն: Կուսակցության նույն II համագումարում Տրոցկին ասում էր, վոր պրոլետարիատի դիկտուրան հնարավոր կլինի միայն այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգն մեծամասնությունը լինի: Կնշանակի Տրոցկին արգեն այն ժամանակը ժխտում եր պրոլետարիատի դիկտուրապի մարքսիստական-լենինյան ուսումքը և գյուղացիության հետ բանվոր դասակարգի ունենալիք գաշնչքի՝ վորուն «արուեստարիատի դիկտուրայի բարձրագույն սկզբունքի», մարքսիստական-լենինյան ուսումքը (Լենին): II համագումարում հարելով մենշևիկներին, Տրոցկին հետապայում գարձակ գյուղացիական մասնաների հետ բանվոր դասակարգի ունենալիք գաշնչքի ամենակատաղի թնամին և բազմից շահացել ե վիմեցնել այդ գաշնչքը, վորպեսզի կործանի պրոլետարական հետափոխության դործը:—34:

35 Կուսակցության կանոնադրության հարցերով Տրոցկու յելութը լենին անշնչեց «քաղաքական բնութագրկության որինակ»: Մենշևիկների կողմը թուշելով, Տրոցկին սկսեց պաշտպանել մարտովյան ձեսակերպումը, հանդես եր պալմ պրոլետարական մարտական, միաձույլ կուսակցության լենինյան դաշտագրի գեմ, վորի համար լենինը հենց այն ժամանակ Տրոցկուն անլանեց պաշական և ոպորտունիստ (տե՛ս լենինի ծանոթագրությունը այս դրբի 59-բաժ.

եջում): Հետագայում Տրոցկին դարձավ նոր, բոլշևիկյան տիպի կենտրոնացված, դիսցիպլինայի յնիթարկվող բանվորական այն կուսակցության ամենակատաղի թշնամին, վոր սուեղծում ելին և սուեղծեցին լենինը, Ստալինը: Սուզուկելով բոլշևիկների կուսակցությունը, Տրոցկին կուսակցության դեմ ամբողջ ժամանակ պայքար եր մզում ամենասատոր միջոցներով և այդ պայքարում վլորվեց Հականեղափառության բանակը, Փաշիզի բանակը: Տրոցկին դարձավ իմպերիալիստական տերությունների լրտեսը, լրտեսների, գիվերանաների, վնասարարների, տեռորիստների թշնամիների ընդհատակյա հրասանմբների վլխավոր կազմակերպիչը, վորոնց անդինա կերպով վոչնչացնում և մեր խորհրդային հետախուզությունը:—40:

36 Նալեմդին, Լ. (Զելենսկի, Յ.): արտասահմանյան «Ավորուդա» խմբի զեկալվարը, աշխատակցում եր մենշևիկյան հրատարակություններին:—47:

37 Ասրախով (Տախտարյան, Կ.): Համագումարին ներկա յեր խորհրդակցական ձայնով, «Եկոնոմիստ»:—58:

38 Ռիխարլ (Զեմլյաչկա, Ո.): պատվիրակ Ողեսայի կոմիտեյից, բոլշևիկյան կուսակցության ականավոր անդամ:—62:

39 «Օսвобոյդնե»—ժուռնալ, վոր հրատարակում եր լիբերալ բուրժուազիան 1902—1905 թ. թ. արտասահմանում: Նրա խմբադիբն եր հետո հիշատակվող Ստրուկն:—63:

40 «Աշխատամիի պատագրում» խումբ—ուսուական մարքսիստական առաջին կազմակերպությունը, վոր 1883 թ. Շվեյցարիայում հիմնեց Գ. Վ. Պլեխանովը Գ. Բ. Ակսելրոդի, Վ. Ի. Զատուլիչի, Լ. Գ. Դեյչի, Վ. Մ. Խնամառի մանակցությամբ: Խմբի յերախտիքն այն ե, վոր նա մեծ աշխատանք կատարեց մարքսիզմի գաղափարները նույսառանում տարածելու դործութ: ՈՍՄԲԿ Հ համագումարից հետո խումբը գաղարեց գյուղացիուն ունենալուց:—85:

41 Բերնշտայն, Յ.—դերմանական սոցիալ-դեմոկրատ, ուսուառունիզմի թերետիկներից մեկը միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ:—85:

42 Կրիչենվսկի, Յ.—«Եկոնոմիստ», «Բարօշ Դելօ»-յի խմբադիբը:—88:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Հրատարակության կողմից	3
1904 թվականի հրատարակության առաջարանը	5
1908 թվականի հրատարակության առաջարանը	9
Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ	
ա) Համագումարի նախապատրաստումը	9
բ) Խմբագործմանը իշխանակությունը համագումարում	13
շ) Համագումարի սկզբը.—միջադեպ կողմակերպական կոմիտեյին հետ	15
դ) «Южный Рабочий»-ի խմբի ցըռումը	20
ե) Միջադեպ լեզուների իրավահամարության չուրջը	23
զ) Ազրարային ծրագիրը	28
է) Կուսակցության կանոնադրությունը	36
ը) Վիճարանություններ ցենտրալիզմի մասին մինչև իսկրայականների մեջ տեղի ունեցած պառակումը	38
թ) Կանոնադրության առաջին պարագագը	41
ժ) Համագումարում տեղի ունեցած պայքարի ընդհանուր պատկերը : Կուսակցության հեղափոխական և ոպորտունիստական թերթ	68
ձ) Եսոք «Искра»-ն: Ռոգորունիզմը կազմակերպական հարցերում	81
ա) Եսոք «Искра»-ն: Ռոգորունիզմը կազմակերպական հարցերում	117
թ) Միքանի խոսք զիանեկատիկայի ժամանակակից ժամանակակից ժամանակակից ժամանակակից	123
Մանթագործություններ	

Եջ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Մադ	Մադ	Ակնակաշըջան	Ժամանակաշըջան	Հասկացողություններ	Մականակաշըջան
34	6 դ.					
58	18 հ.					
85	11 դ.					

Հայերեն թարգմանության խմբագիր Հ. Դանիելյան

Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան

Սըրագրիչ Վ. Զիրեցյան

Կոնսուլ որբագրիչ Լ. Արուլյան

Գլամիլի լիազոր № Կ—2481, հրատ. № 643

Գատվեր № 13, տիրաժ 10.000

Քղթի չափավ 69×92^{1/16} (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

8 տպ. մամուլ, 4 թերթ թուղթ

Հանձնված և արտադրության 9/II 1939 թ.

Ստորագրվել է տպագրիկ 14/III 1939 թ.

Գինը 80 կ. կազմը լեզունից 1 ու. 70 կ., կալենիուրից 1 ու. 20 կ.

Գևորգաստ—Քաղաքական դրականության հրատարակչության

տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

Ա. 1939 թ.

Առ. № 136

ԱՅ

«Ազգային գրադարան



NL0178384

4.70 20.50

3-3039₂